ԲՌՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԱԴՐՈՂ ԱՆՁԱՆՑ ՈՒՂՂՎԱԾ ԱՆՎՏԱՆԳ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ. ՍՏԱՄԲՈՒԼԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 16-ՐԴ ՀՈԴՎԱԾ

Ընտանեկան և սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի վերաբերյալ համեմատական

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Բռնություն գործադրող անձանց ուղղված անվտանգ և արդյունավետ ծրագրերի ուղեցույց. Ստամբուլի կոնվենցիայի 16-րդ հոդված

Ընտանեկան և սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի վերաբերյալ համեմատական ուսումնասիրություն և առաջարկություններ

Փաստաթուղթը պատրաստվել է Ընտանեկան բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի հարցերով եվրոպական ցանցից Սանդրա Յովանովիչ Բելոտիչի ու Բերտա Վալլի և Բրիստոլի Արևմտյան Անգլիայի համալսարանից Կիերան Մըքքարթանի կողմից:

Եվրոպայի խորհուրդ

Ֆրանսերեն հրատարակություն. Orientations pour des programmes sors et efficaces Ո l'intention des auteurs de violence : article 16 de la Convention d'Istanbul

Սույն աշխատության մեջ արտահայտված կարծիքները հեղինակ(ներ)ի պատասխանատվությունն են և կարող են չարտացոլել Եվրոպայի խորհրդի պաշտոնական քաղաքականությունը:

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Հատվածների վերարտադրումը (մինչև 500 բառ) թույլատրելի է, բացառությամբ առևտրային նպատակներով, քանի դեռ պահպանվում է տեքստի ամբողջականությունը, հատվածը չի օգտագործվում համատեքստից դուրս, չի տրամադրում թերի տեղեկություններ կամ այլ կերպ չի ապակողմնորոշում ընթերցողին՝ տեքստի բնույթի, շրջանակի կամ բովանդակության առումով: Աղբյուր տեքստում միշտ պետք է նշվի, Եվրոպայի խորհուրդ, հրապարակման տարեթիվ: Փաստաթղթի ամբողջական կամ մի մասի վերարտադրման/թարգմանության հետ կապված բոլոր հարցումները պետք է ուղղվեն Եվրոպայի խորհրդի Հաղորդակցության տնօրինություն (F-67075 Ստրասբուրգ, Սեդեքս կամ publishing@coe.int):

Սույն հրապարակման հետ կապված ցանկացած այլ նամակագրություն պետք է ուղղվի Ժողովրդավարության և մարդու արժանապատվության հարցերով գլխավոր տնօրինություն: Կանանց նկատմամբ բռնության հարցերով բաժին, Եվրոպայի խորհուրդ, F-67075 Ստրասբուրգ, Սեդեքս, Ֆրանսիա, Եվրոպայի խորհուրդ

Էլ-փոստ՝ conventionviolence@coe.int

Կազմ և կառուցվածք՝ Փաստաթղթերի և հրապարակումների տպագրության բաժին (ՓՀՏԲ), Եվրոպայի խորհուրդ

Կազմի նկարներ՝ Շաթերսթոք

Սույն հրապարակումը տպագրական և քերականական սխալներն ուղղելու նպատակով ՓՀՏԲ խմբագրական բաժնի կողմից չի խմբագրվել:

© Եվրոպայի խորհուրդ, 2024 թվականի մայիս

Բովանդակություն

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ	5
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	7
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ	10
Առաջնային հետազոտությունը	10
Երկրորդային հետազոտությունը	11
ՄԱՍ 1. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԱԴՐՈՂ ԱՆՁԱՆՑ ՈՒՂՂՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԸ	14
1.1 Ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի իրավական և քաղաքականության շրջանակը	16
1.2. Ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերն ապահովողները	21
1.3. Զոհերի, մասնավորապես կանանց և երեխաների անվտանգությունն ու բարեկեցությունը	24
1.4. Ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի մշակումը	28
1.5. Ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի ստուգացանկը	34
ՄԱՍ 2. ՍԵՌԱԿԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԱԴՐՈՂ ԱՆՁԱՆՑ ՈՒՂՂՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԸ	39
2.1 Չափահաս անձանց, հատկապես կանանց նկատմամբ սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերը	41
2.2 Երեխաների դեմ սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերը	46
2.3. Վնասակար սեռական վարքագիծ դրսևորող երեխաներին և երիտասարդներին ուղղված ծրագրերը	53
2.4. Սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի ստուգացանկերը	56
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	59
ՅՂՈՒՄՆԵՐ	60

Երախտագիտության խոսք

Սույն հետազոտական ուսումնասիրությունն իրականացվել է Եվրոպայի խորհրդի, «Կանանց նկատմամբ բռնության հաղթահարումը» բազմաթիվ երկրներ ներառող ծրագրի (2022-2025թթ.) շրջանակներում: Դրա բովանդակությունը մշակվել է Ընտանեկան բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի հարցերով եվրոպական ցանցից Սանդրա Յովանովիչ Բելոտիչի ու Բերտա Վալլի և Բրիստոլի Արևմտյան Անգլիայի համալսարանից Կիերան Մըքքարթանի կողմից: Սույն ուսումնասիրության հրապարակված տարբերակը պատրաստվել է Ստամբուլի կոնվենցիայի մշտադիտարկման մեխանիզմի՝ Եվրոպայի խորհրդի քարտուղարության աջակցությամբ՝ ծրագրի ղեկավար Վալենտին Յոզենհանսի համակարգման ներքո: Սույն հրապարակման մշակման գործընթացում արժեքավոր ներդրում է ունեցել Եվրոպայի խորհրդի Երեխաների հարցերով բաժինը: Սույն ուսումնասիրության իրականացումը հնարավոր չէր լինի առանց Ընտանեկան բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի հարցերով եվրոպական ցանցի և Եվրոպական պրոբացիայի կոնֆեդերացիայի անդամների մասնակցության, որոնց ներկայացուցիչները մասնակցել են սույն հետազոտական նախագծի համատեքստում իրականացված հարցմանը և հարցազրույցներին:

Ներածություն

Բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերը կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ու դրա դեմ պայքարի կարևոր տարրեր են: Դրանք օգնում են ապահովել, որ բռնություն գործադրող անձինք պատասխանատվություն ստանձնեն իրենց բռնության արարքների համար և արդյունքում բացառեն այդ արարքների կրկնությունը: Այդ ծրագրերի նպատակն է բարձրացնել զոհերի անվտանգությունն ու բարեկեցությունը՝ հասցեագրելով և վերջ դնելով բռնի վարքագծին, ինչպես նաև փոխելով կանանց նկատմամբ ընտանեկան և սեռական բռնություն գործադրող անձանց վարքագիծը:

Ինչպես ցույց է տալիս հետազոտությունը, կանանց նկատմամբ բռնության մեծ մասը գործադրվում է տղամարդկանց կողմից:[1] Եթե այլ բան նշված չէ, ապա սույն ուսումնասիրության մեջ կիրառված, բռնություն գործադրող անձինք եզրույթը վերաբերում է բռնություն գործադրող արական սեռի անձանց: Կարևոր է նաև ընդգծել, որ սույն ուսումնասիրության մեջ գործածվում է անձակենտրոն մոտեցման վրա հիմնված լեզու, որն առանձնացնում է մարդուն իր վարքագծից: Սույն զեկույցում կիրառված եզրույթները ներդաշնակեցնելու նպատակով, ընտանեկան բռնություն գործադրող անձինք և, սեռական բռնություն գործադրող անձինք եզրույթները կիրառվում են սույն հետազոտության մեջ ընդգրկված՝ բռնություն գործադրող անձանց ուղղված երկու տեսակի ծրագրերի համատեքստում:

Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ու դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (Ստամբուլի կոնվենցիա) կանանց նկատմամբ բռնության կանխարգելման համապարփակ ռազմավարության շրջանակներում ներառում է բռնություն գործադրող անձանց ուղղված կանխարգելիչ և միջամտության ծրագրեր: Այն պարտավորեցնում է Կոնվենցիայի կողմերին նախաձեռնել բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրեր և օժանդակել դրանց, որոնց հիմնական նպատակը պետք է լինի զոհերի անվտանգությունն ու աջակցությունն ապահովելը:[2] Ստամբուլի կոնվենցիայի 16-րդ հոդվածը նախատեսում է կանխարգելիչ միջամտության և ռեաբիլիտացման ծրագրեր նախաձեռնելու կամ դրանց օժանդակելու հետ կապված հատուկ պարտավորություններ:

1 Կանանց նկատմամբ բռնություն. հարցում ամբողջ ԵՄ-ում, Եվրոպական միության՝ Հիմնարար իրավունքների գործակալություն, 2014թ., էջ 7 և էջ 27-32: Հեսթեր, Մ., (2013թ): Ո՞վ ում նկատմամբ ինչ է անում: Գենդերային և ընտանեկան բռնություն գործադրող անձինք Անգլիայի ոստիկանության փաստաթղթերում: Քրեագիտության վերաբերյալ եվրոպական ամսագիր, 10(5), 623-637: https://doi.org/10.1177/1477370813479078:

2 Եվրոպայի խորհուրդ: (2011ա): *Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ու դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա:* Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/168008482e:

Հոդված 16. Կանխարգելիչ միջամտության և ռեաբիլիտացման ծրագրեր

1. Կողմերը ձեռնարկում են անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ այնպիսի ծրագրեր նախաձեռնելու կամ դրանց օժանդակելու համար, որոնք ուղղված են ընտանեկան բռնություն գործադրող անձանց կողմից միջանձնային հարաբերություններում բռնությունից զերծ վարքագիծ որդեգրել սովորեցնելուն՝ հետագա բռնությունը կանխելու և բռնի վարքագծի դրսևորումները փոխելու նպատակով:

2. Կողմերը ձեռնարկում են անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ այնպիսի ռեաբիլիտացման ծրագրեր նախաձեռնելու կամ դրանց օժանդակելու համար, որոնք ուղղված են բռնություն գործադրող անձանց, մասնավորապես՝ սեռական բնույթի հանցանքներ կատարած անձանց շրջանում նման արարքների կրկնությունը կանխելուն:

3. 1-ին և 2-րդ պարբերություններում նշված միջոցները ձեռնարկելիս Կողմերն ապահովում են, որ զոհերի անվտանգությունը, նրանց օժանդակություն տրամադրելը, ինչպես նաև նրանց՝ մարդու իրավունքները լինեն առաջնահերթ և, որ անհրաժեշտության դեպքում այդ ծրագրերը նախաձեռնվեն և իրականացվեն զոհերին մասնագիտացված օժանդակություն ցուցաբերող ծառայությունների հետ սերտորեն համակարգված ձևով:

Ստամբուլի կոնվենցիայի բացատրական զեկույցում ընդգծվում է, որ Կողմերը պետք է ստեղծեն իրենց սեփական ծրագրերը կամ օժանդակեն գործող ծրագրերին: Դրանց իրականացման եղանակների ընտրությունը թողնված է Կողմերին կամ ծրագրերն ապահովողներին, թեև բացատրական զեկույցում նախանշում են ծրագրի անվտանգության հիմնական տարրերը:[3] Մինչև Ստամբուլի կոնվենցիան, բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի նվազագույն չափանիշները մշակվել էին Եվրոպայի խորհրդի «Կանանց նկատմամբ բռնության դեմ պայքար. աջակցություն ցուցաբերող ծառայություններին ներկայացվող նվազագույն չափանիշներ» ուսումնասիրության մեջ:[4] Բացի դրանից, Եվրոպայի խորհուրդը ներկայացրել է բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի առնչությամբ առկա գործելակերպերի ամփոփ նկարագիրը, այդ թվում՝ ստուգացանկերի ձևով ուղեցույցը՝ ընտանեկան բռնություն և սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրեր ստեղծելու նպատակով: [5]

Ավելին, ընտանեկան բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի հարցերով եվրոպական ցանցը (WWP EN) ուղեցույց է տրամադրում բռնություն գործադրող անձանց հետ անվտանգ և արդյունավետ աշխատանքի համար: 2023 թվականին ցանցը հրապարակել է իր «Բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի եվրոպական չափանիշները»՝ ներկայացնելով զոհակենտրոն մոտեցման վրա հիմնված՝ բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրեր նախաձեռնելու առանցքային տարրերը:[6]

Այնուամենայնիվ, գործնականում գործող ծրագրերը վերը նշված սկզբունքներին համապատասխանեցնելու մարտահրավերները մնում են չլուծված: Ստամբուլի կոնվենցիայի իրականացումը մշտադիտարկելու ժամանակ Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի հարցերով փորձագետների խումբը (ԳՐԵՎԻՈ) վերհանել է բացեր՝ կապված այն ծրագրերի բավարար չափով առկայությունն ապահովելու հետ, որոնք հիմնված են զոհակենտրոն ու գենդերազգայուն մոտեցման վրա, և որոնք աշխատում են մասնագիտացված աջակցություն ցուցաբերող ծառայությունների հետ սերտ համագործակցության պայմաններում:[7]

---

3 Եվրոպայի խորհուրդ: (2011բ): *Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ու դրանց դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի բացատրական զեկույց:* Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/1680a48903.

4 Եվրոպայի խորհուրդ: (2008թ.): *Կանանց նկատմամբ բռնության դեմ պայքար. աջակցություն ցուցաբերող ծառայություններին ներկայացվող նվազագույն չափանիշներ:* Հասանելի է հետևյալ հղմամբ՝ www.coe.int/t/ dg2/equality/domesticviolencecampaign/Source/EG-VAW-CONF(2007)Study%20rev.en.pdf:

5 Հեսթեր, Մ. և Լիլլի, Ս. Ջ. (2014թ.): *Ընտանեկան և սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրեր. Ստամբուլի կոնվենցիայի 16-րդ հոդված:* Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://edoc.coe.int/en/violence-against-women/7144-domestic-and-sexual-violence-perpetrator-programs-article-16-of-the-is-tanbul-convention.html:

6 WWP EN [Ընտանեկան բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի հարցերով եվրոպական ցանց]: (2023թ.): *Բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի եվրոպական չափանիշներ. բռնություն վերապրած անձանց և սեռական զուգընկերոջ նկատմամբ բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի չափանիշներ: Աշխատանքային փաստաթուղթ:* WWP EN: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ www.work-with-perpetrators.eu/fileadmin/WWP_Network/redakteure/Resources/Standards/European_Standards_for_Perpetrator_Programmes_website.pdf:

7 Եվրոպայի խորհուրդ: (2022բ): *ԳՐԵՎԻՈ-ի ելակետային գնահատման զեկույցների միջնաժամկետ հորիզոնական ուսումնասիրություն:* Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/ prems-010522-gbr-grevio-mid-term-horizontal-review-rev-february-2022/1680a58499:

Բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի հարցերով եվրոպական ցանցի կողմից իրականացված հետազոտությամբ նույնպես մատնանշվել են այն ընդհանուր մարտահրավերները, որոնց երկրներն ու ծառայություն մատուցողները հանդիպում են՝ բռնություն գործադրող անձանց ուղղված այնպիսի ծրագրեր ստեղծելիս և մշակելիս, որոնք նպատակ ունեն իրականացնել Ստամբուլի կոնվենցիայի դրույթները:[8] Այդ մարտահրավերները հատկապես վերաբերում են բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքում զոհերի անվտանգությանն ուղղված սկզբունքին, ռիսկերի գնահատման և կառավարման ապահովմանը, ինչպես նաև գենդերային տեսանկյունն ինտեգրելու մակարդակին:

Սույն համեմատական ուսումնասիրության շրջանակներում ներկայացված են բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի գործող մոդելների ու մոտեցումների և դրանց արդյունքների ընդհանուր նկարագիրը՝ արձագանքելով 2022 թվականի սեպտեմբերին Եվրոպայի խորհրդի 38 անդամ պետությունների կողմից ընդունված՝ Ընտանեկան, սեռական և գենդերային հիմքով բռնության կանխարգելման մասին հռչակագրում (Դուբլինի հռչակագիր) նշված վերլուծության անհրաժեշտությանը:[9] Սույն Հռչակագիրը ստորագրող կողմերը նաև մատնանշել են «խոստումնալից գործելակերպեր վերհանելու և բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի իրականացման ուղեցույցներ մշակելու անհրաժեշտությունը՝ Ստամբուլի կոնվենցիայի սկզբունքներին համահունչ որակի բազային չափանիշներ, մասնավորապես՝ զոհակենտրոն մոտեցում ապահովելու համար, որը շեշտադրում է զոհերի անվտանգությունն ու նրանց ցուցաբերվող օժանդակությունը և նրանց՝ մարդու իրավունքների նկատմամբ լիարժեք հարգանքի ապահովումը»:

Վերոնշյալի համաձայն՝ սույն ուսումնասիրությամբ ներկայացվում է ընտանեկան և սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված անվտանգ ու արդյունավետ ծրագրերի ստեղծման ուղեցույց՝ Ստամբուլի կոնվենցիայի 16-րդ հոդվածին համապատասխան: Այն հիմնված է այդ ծրագրերի մշակման և իրականացման ընթացքում հանդիպող խոստումնալից գործելակերպերի ու ընդհանուր մարտահրավերների վրա: Կիրառելով հետազոտության որակական և քանակական մեթոդներ՝ ուսումնասիրության նպատակն է տալ հստակ և գործնական առաջարկություններ ընտանեկան և սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի անվտանգ ու արդյունավետ իրականացման համար՝ քաղաքականություն մշակողների, ծառայություններ մատուցողների և մասնագետների կողմից օգտագործման նպատակով:

8 Յովանովիչ, Ս. և Վալլ, Բ. (2022թ.): *Բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրեր Արևմտյան Բալկաններում, գոյություն ունեցող գործելակերպերի և հետագա գործողությունների քարտեզագրում:* Ընտանեկան բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի հարցերով եվրոպական ցանց (WWP EN): Հասանելի է հետևյալ հղմամբ՝ www.work-with-perpetrators.eu/fileadmin/WWP_Network/redakteure/Projects/STOPP/WWPEN_STOPP_RegionalReport_220531_WEB.pdf, Յովանովիչ, Ս., Պենտրանջելո Մ. և Վալլ, Բ. (2022թ.): *Ընտանեկան բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի և վաղ միջամտության վերաբերյալ տարածաշրջանային ուղեցույց. Արևելյան գործընկերության տարածաշրջան.* ՄԱԿ Կանայք, ՄԱԿ ԲՀ: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://eca.unwomen.org/sites/default/files/2023-01/UN%20Woman%20-%20EU%20 4%20Gender%20Equality%5B3%5D.pdf:

9 Եվրոպայի խորհուրդ: (2022ա): *Ընտանեկան, սեռական և գենդերային հիմքով բռնության կանխարգելման վերաբերյալ Եվրոպայի խորհրդի նախարարների հռչակագիր*: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/dublin-declaration-sept-2022/1680a85149:

Մեթոդաբանություն

Սույն ուսումնասիրությունը հետապնդում է երկու նպատակ՝

1. քարտեզագրել Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում բռնություն գործադրող անձանց ուղղված՝ գործող ծրագրերը և տալ դրանց որակի ընդհանուր գնահատականը.
2. ներկայացնել առաջարկություններ՝ բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի մշակման և իրականացման գործընթացի բարելավման, այդ թվում՝ Ստամբուլի կոնվենցիայի դրույթներից բխող որակի չափանիշների հիման վրա այդ ծրագրերի նախաձեռնման և իրականացման ուղեցույցների ուղղությամբ:

Ուսումնասիրության շրջանակներում հղում է կատարվում Կողմերի՝ Ստամբուլի կոնվենցիայի 16-րդ հոդվածի համաձայն «կանխարգելիչ միջամտության և ռեաբիլիտացման ծրագրեր» նախաձեռնելու կամ դրանց օժանդակելու պարտավորությանը: Մասնավորապես՝ 16-րդ հոդվածով տարանջատում է մտցվում մի կողմից՝ ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի և մյուս կողմից՝ սեռական բռնություն գործադրող անձանց (այդ թվում՝ չափահաս անձանց նկատմամբ սեռական բռնություն գործադրող անձանց, վնասակար սեռական վարքագիծ դրսևորող երեխաների և երիտասարդների նկատմամբ սեռական բռնություն գործադրող անձանց) ուղղված ծրագրերի միջև:

Ուսումնասիրությունը հիմնված է Ընտանեկան բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի հարցերով եվրոպական ցանցի կողմից իրականացված հետազոտության վրա, որը կիրառում է խառը մեթոդների մոտեցում՝ համատեղելով բռնություն գործադրող անձանց ուղղված՝ գործող ծրագրերի որակական և քանակական տվյալների վերլուծությունը: Սույն հետազոտության համար կիրառվել են ինչպես առաջնային, այնպես էլ երկրորդային հետազոտություններ:

Առաջնային հետազոտությունը

- **Ինքնուրույն լրացվող հարցաշար.** 2023 թվականի հունիսից մինչև սեպտեմբեր ընկած ժամանակահատվածում ընտանեկան բռնություն գործադրող անձանց և սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրեր իրականացնող կազմակերպությունների անձնակազմի անդամները լրացրել են 29 ինքնուրույն լրացվող հարցաշար: «IMPACT» ծրագրի հարցաշարը[10] կիրառվել է սույն ուսումնասիրության մեջ ընդգրկված՝ բռնություն գործադրող անձանց ուղղված յուրաքանչյուր տեսակի ծրագրի համար և հարմարեցվել դրանց: Այդ հարցաշարում ներառված են բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի առանձնահատկությունների վերաբերյալ հարցեր, ինչպիսիք են դրանց գտնվելու վայրի, չափի, ներառման և բացառման չափորոշիչների, անձնակազմի որակավորումների, ընթացակարգերի, միջգերատեսչական համագործակցության, ռիսկերի գնահատման ու կառավարման գործիքների և որակի ու գնահատման

10 Այդ հարցումը նախկինում օգտագործվել է WWP EN-ի կողմից իրականացվող մի շարք հետազոտական նախագծերում, տե՛ս օրինակ՝ Յովանովիչ, Ս.-ն և Վալլ, Բ.-ն (2022թ.), մեջբերված աշխատության մեջ [op. cit.] (ծանոթագրություն 8), Յովանովիչ, Ս. և այլք, (2022թ.), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 9), Վալլ և այլք (2023թ.), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 20):

ապահովման միջոցների հետ կապված հարցերը:

- **Կիսակառուցվածքային հարցազրույցներ**. 2023 թվականի հունիսից մինչև սեպտեմբեր ընկած ժամանակահատվածում ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրեր իրականացնող կազմակերպությունների անձնակազմի անդամները հեռավար անցկացրել են 17 կիսակառուցվածքային հարցազրույց՝ նրանց առօրյա գործելակերպերն առավել խոր հասկանալու համար:

Երկրորդային հետազոտությունը

- **Գրականության ուսումնասիրություն.**

2023 թվականի հունիսից սեպտեմբեր ընկած ժամանակահատվածում իրականացվել է երկու տեսակի գրականության ուսումնասիրություն.

1. երկու խոշոր տվյալների շտեմարաններում (Web of Science և PubMed) և համապատասխան «մոխրագույն» գրականության մեջ իրականացված՝ բանալի բառերի որոնման միջոցով գիտական գրականության համակարգված ուսումնասիրություն՝ օգտագործելով եզրույթների տարբեր համակցություններ և
2. Եվրոպայի խորհրդի հիմնական հրապարակումների, մասնավորապես՝ ԳՐԵՎԻՈ-ի ելակետային գնահատման զեկույցների ուսումնասիրություն:

- **Նախկինում հավաքագրված տվյալների վերօգտագործում.**

WWP EN-ի կողմից իրականացվող նախկին նախագծերի համատեքստում հավաքագրված որակական ու քանակական տվյալները կրկին վերլուծվել և ընդգրկվել են սույն ուսումնասիրության մեջ:

Սույն ուսումնասիրության մեջ վերլուծվել են հետևյալ ծրագրերը (մանրամասն նկարագրության համար տե՛ս Աղյուսակ 1).

- **Ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրեր.** 22 երկրներում[11] և Կոսովոյում* ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված 48 ծրագրերի մասնագետները լրացրել են ինքնուրույն լրացվող հարցաշարերը: Նրանցից կիսակառուցվածքային հարցազրույցներին մասնակցել են 32 ծրագրերի անձնակազմի անդամներ:
- Սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրեր.

  Չափահաս անձանց նկատմամբ սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրեր: Սույն հետազոտության մեջ ընդգրկվել են Եվրոպայի 33 երկրից 51 ծրագիր: Այդ ծրագրերից 9 եվրոպական երկրում տեղակայված 20 ծրագրի մասնագետներ լրացրել են հարցաշարը:[12] Ավելին, գրականության ուսումնասիրության և (կամ) նախկին նախագծերի ընթացքում հավաքագրված տվյալների վերօգտագործման արդյունքներն[13] ընդգրկել են 21 եվրոպական երկրում գործող 31 ծրագիր:[14]

  Երեխաների նկատմամբ սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրեր. Սույն հետազոտության մեջ ընդգրկվել է 20 եվրոպական երկրից 48 ծրագիր: Դրանցից 13 եվրոպական երկրի[15] 21 ծրագրում աշխատող մասնագետները լրացրել են հարցաշարը: Ավելին, իրականացվել է 7 եվրոպական երկրում[16] իրականացվող 25 ծրագրի գրականության ուսումնասիրություն:

---

11 Ավստրիա, Բուլղարիա, Խորվաթիա, Չեխիա, Էստոնիա, Ֆինլանդիա, Վրաստան, Գերմանիա, Հունաստան, Իռլանդիա, Իտալիա, Մալթա, Նորվեգիա, Լեհաստան, Մոլդովայի Հանրապետություն, Ռումինիա, Սերբիա, Սլովենիա, Իսպանիա, Շվեդիա, Ուկրաինա և Միացյալ Թագավորություն:

* Կոսովոյի մասին ցանկացած հղում՝ լինի դրա տարածքին, հաստատություններին, թե բնակչությանը, պետք է ընկալվի ամբողջությամբ՝ Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի 1244 բանաձևին համապատասխան, և չսահմանափակելով Կոսովոյի կարգավիճակը:

12 Գերմանիա, Իսլանդիա, Իտալիա, Լիտվա, Լյուքսեմբուրգ, Մալթա, Իսպանիա, Շվեյցարիա և Թուրքիա:

13 Մըքքարթան, Կ., Վան դեր Բրուգգե, Ուը., Սպերո, Ջ., Ինգե Սվենդսեն, Ջ., Քաթլենդ, Մ., Մորիք, Ուայ., Նեգրեդո, Լ., Զավացկիս, Ա., Զամմիթ, Մ. Ա. և Թիիթ Կաջալա, Թ. (2022թ.): *Գնահատման, ռեաբիլիտացման և կառավարման ընթացիկ գործելակերպերի ուսումնասիրություն ԵՊԿ-ի ոլորտներում:* Եվրոպական պրոբացիայի կոնֆեդերացիա:

14 Ալբանիա, Բելգիա, Խորվաթիա, Չեխիա, Էստոնիա, Ֆինլանդիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Գերմանիա, Իռլանդիա, Իտալիա, Լատվիա, Լյուքսեմբուրգ, Մալթա, Նորվեգիա, Մոլդովայի Հանրապետություն, Ռումինիա, Սլովենիա, Իսպանիա, Շվեդիա և Միացյալ Թագավորություն:

15 Կիպրոս, Էստոնիա, Գերմանիա, Իսլանդիա, Իտալիա, Լիտվա, Լյուքսեմբուրգ, Մալթա, Նորվեգիա, Սլովենիա, Իսպանիա, Շվեդիա և Թուրքիա:

16 Գերմանիա, Ֆինլանդիա, Լիտվա, Իսպանիա, Շվեդիա, Շվեյցարիա և Միացյալ Թագավորություն:

Վնասակար սեռական վարքագիծ դրսևորող երեխաներին և երիտասարդներին ուղղված ծրագրեր. գրականության ուսումնասիրության միջոցով բացահայտվել են երեք եվրոպական երկրում, մասնավորապես՝ Շվեդիայում, Շվեյցարիայում և Միացյալ Թագավորությունում իրականացվող 15 ծրագիր:

Սույն ուսումնասիրության մեջ ընդգրկված ծրագրերն ընտրվել են հարմար ընտրանքի մեթոդով: Այդ ծրագրերը հանդիսանում են WWP EN-ի և Եվրոպական պրոբացիայի կոնֆեդերացիայի (ԵՊԿ) անդամներ՝ երկու հիմնական ցանցեր, որոնք տրամադրում են Եվրոպայում բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրեր: Ավելին, WWP EN-ը և ԵՊԿ-ն ունեն անդամներ, որոնք աշխատում են տարբեր համատեքստերում և կիրառում են տարբեր գործելակերպեր:

Բոլոր ռեսպոնդենտները տեղեկացված են եղել ուսումնասիրության նպատակների և հավաքագրված տվյալների անանուն ու գաղտնի մշակման մասին: Հարցումների և հարցազրույցների ընթացքում հավաքագրվել են որոշ անձնական տվյալներ, սակայն դրանց հասանելիություն ունեցել են միայն հետազոտական թիմի անդամները՝ գաղտնիության սկզբունքներին համապատասխան: Ուսումնասիրության մեջ ոչ մի անձնական տվյալ չի ներառվել, և բոլոր տվյալները մշակվել են գաղտնիության սկզբունքներին համապատասխան:

Այնուամենայնիվ, սույն ուսումնասիրությունն ունի որոշ սահմանափակումներ: Նախևառաջ՝ բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի յուրաքանչյուր կատեգորիայի համար ռեսպոնդենտների ընտրանքները միմյանցից տարբերվում են: Դա պայմանավորված է բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի յուրաքանչյուր կատեգորիայի (այսինքն՝ չափահաս անձանց նկատմամբ սեռական բռնություն գործադրող անձանց, երեխաների նկատմամբ սեռական բռնություն գործադրող անձանց, ինչպես նաև վնասակար սեռական վարքագիծ դրսևորող երեխաներին և երիտասարդներին ուղղված ծրագրերի) զարգացման և առաջխաղացման տարբեր մակարդակներով: Օրինակ՝ հասանելի նյութերի քանակը և ոլորտում գործող սուբյեկտների ու կազմակերպությունների թիվը տարբերվում է ըստ ծրագրի տեսակի: Մյուս սահմանափակումը՝ սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի վերաբերյալ որակական տվյալների բացակայությունն է: Վերջապես, սույն ուսումնասիրության շրջանակներում հավաքագրված տվյալները չեն կարող ընդհանրացվել և թույլ չեն տալիս կոնկրետ երկրում բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի որակի վերաբերյալ եզրահանգումներ կատարել: Իրականում ընտրանքը չի համարվում ազգային մակարդակով բռնություն գործադրող անձանց ուղղված բոլոր ծրագրերի ներկայացուցչական ընտրանք: Չնայած այս բացերին, սույն ուսումնասիրության արդյունքներն էական տեղեկություններ են տրամադրում Եվրոպայում ընտանեկան բռնություն և սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված՝ գործող ծրագրերի վերաբերյալ:

Սույն ուսումնասիրության համար ինքնուրույն լրացվող հարցաշարերի, կիսակառուցվածքային հարցազրույցների և գրականության ուսումնասիրության միջոցով (տե՛ս Աղյուսակ 1) հավաքագրված առավել համապարփակ տվյալները վերաբերում են ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերին: Ինչ վերաբերում է չափահաս անձանց նկատմամբ սեռական բռնություն գործադրող անձանց և երեխաների նկատմամբ սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերին՝ տվյալների հավաքագրումն ապահովվել է գրականության ուսումնասիրության և հարցման՝ ինքնուրույն լրացվող հարցաշարի պատասխանների միջոցով: Ինչպես ցույց է տրված Աղյուսակ 1-ում, գրականության ուսումնասիրության մեջ ընդգրկվել է ընտանեկան բռնություն գործադրող անձանց և սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի վերաբերյալ ընդհանուր 131 փաստաթուղթ/ուսումնասիրություն: Ավելին, 89 ծրագիր ընդգրկվել է ինքնուրույն լրացվող հարցաշարի միջոցով («IMPACT» ծրագրի հարցաշար), իսկ 32 ծրագրերի գործունեությունը վերլուծվել է կիսակառուցվածքային հարցազրույցների միջոցով:

Աղյուսակ 1. Ընտանեկան բռնություն գործադրող և սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի ուսումնասիրության համար կիրառվող հետազոտության մեթոդները

	Գրականության ուսումնասիրություն		«IMPACT» ծրագրի հարցաշար		Հարցազրույցներ		Ծրագրերի ընդհանուր թիվ՝ ըստ յուրաքանչյուր տեսակի
		Շրջանակ		Մասնակիցներ		Մասնակիցներ	
Ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրեր	✓	60 ուսումնասիրություն	✓	22 երկրում և Կոսովոյում* 48 ծրագրի անձնակազմ	✓	22 երկրում և Կոսովոյում* 32 ծրագրի անձնակազմ	**48**
Չափահաս անձանց նկատմամբ սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրեր	✓	31 ծրագիր	✓	9 երկրում 20 ծրագրի անձնակազմ	×		**51**
Երեխաների նկատմամբ սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրեր	✓	25 ծրագիր	✓	13 երկրում 21 ծրագրի անձնակազմ	×		**46**
Վնասակար սեռական վարքագիծ դրսևորող երեխաներին և երիտասարդներին ուղղված ծրագրեր (ՎՍՎ)	✓	15 ծրագիր	×		×		**15**
Ծրագրերի ընդհանուր թիվ ըստ հետազոտության մեթոդի		**131**		**89**		**32**	

Յուրաքանչյուր տեսակի ծրագրի արդյունքները վերլուծվել են առանձին և ներկայացված են սույն զեկույցի հաջորդ բաժիններում: Հիմնվելով հետազոտական տարբեր մեթոդների (գրականության ուսումնասիրություն, ինքնուրույն լրացվող հարցաշարեր և կիսակառուցվածքային հարցազրույցներ) միջոցով հավաքագրված արդյունքների վրա՝ վերհանվել են խոստումնալից գործելակերպեր: Վերջիններս հետագայում վերլուծվել են՝ միաժամանակ շեշտադրելով Ստամբուլի կոնվենցիայի 16-րդ հոդվածով սահմանված պարտավորություններին դրանց համապատասխանությունը: Վերջապես, վերհանված խոստումնալից գործելակերպերը ևս նկարագրվել են՝ ընդգծելով այդ ծրագրերի տարրերը, որոնք կարող են կրկնօրինակվել և փոխանցվել բռնություն գործադրող անձանց ուղղված այլ ծրագրերին:

Մաս 1. Ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերը

Ստամբուլի կոնվենցիայի 16-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ Կողմերից պահանջվում է նախաձեռնել ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրեր կամ օժանդակել դրանց, որոնք նրանց սովորեցվում են «միջանձնային հարաբերություններում որդեգրել բռնությունից զերծ վարքագիծ՝ հետագա բռնությունը կանխելու և բռնի վարքագծի դրսևորումները փոխելու նպատակով»: Ստամբուլի կոնվենցիայի բացատրական զեկույցում նշվում է, որ ընտանեկան բռնության կանխարգելմանն ուղղված միջամտության ծրագրերը պետք է հիմնված լինեն լավագույն գործելակերպերի և որոշ հիմնարար սկզբունքների, այդ թվում՝ բռնություն գործադրող անձանց՝ իրենց գործողությունների համար պատասխանատվություն ստանձնելը խրախուսելու վրա, ինչպես նաև պետք է հասցեագրեն կանանց նկատմամբ բացասական վերաբերմունքը, իրականացվեն հմուտ ու վերապատրաստված համակարգողների կողմից և սերտորեն համագործակցեն համապատասխան շահագրգիռ կողմերի (օրինակ՝ կանանց աջակցման ծառայությունների, իրավապահ մարմինների, սոցիալական ծառայությունների, դատական համակարգի, պրոբացիոն ծառայությունների) հետ: Բացատրական զեկույցում նշվում է նաև, որ այդ ծրագրերին մասնակցությունը կարող է կարգադրվել դատարանի որոշմամբ կամ ապահովվել կամավորության սկզբունքով, սակայն երկու դեպքում էլ, առաջնահերթ ուշադրություն պետք է հատկացվի զոհերի կարիքներին և անվտանգությանը, այդ թվում՝ նրանց մարդու իրավունքներին: [17]

Ստամբուլի կոնվենցիայի 3*բ* հոդվածի համաձայն՝ ընտանեկան բռնություն նշանակում է, ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բռնության բոլոր արարքները, որոնք կատարվում են ընտանիքի կամ ընտանեկան միավորի ներսում կամ նախկին կամ ներկա ամուսինների կամ զուգընկերների միջև՝ անկախ նրանից՝ բռնություն գործադրող անձը բնակվում է կամ բնակվել է զոհի հետ նույն բնակարանում, թե ոչ: Կոնվենցիան շեշտում է, որ ընտանեկան բռնությունը բռնության ձև է, որը կանանց նկատմամբ դրսևորվում է անհամաչափորեն և դրսևորվում է գենդերային հիմքով:

Եվրոպական երկրների մեծ մասում հիմնվել են ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրեր: Թեև այդ ծրագրերի մեծ մասն ունեն որոշ ընդհանրություններ, այնուամենայնիվ, դրանց կառուցվածքի, ուղղորդման ուղիների, իրենց շահառու հանդիսացող՝ բռնություն գործադրող անձանց բնութագրերի և դրանց կայունության միջև առկա է զգալի տարբերություն:

Բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերը կարող են իրականացվել բանտում, պրոբացիայի ծառայություն մատուցող հաստատություններում և ազատությունից զրկելու հետ չկապված այլ հաստատություններում: Այդ ծրագրերն իրականացվում են ինչպես պետական

17 Եվրոպայի խորհուրդ: (2011բ), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 3, տե՛ս էջ 20):

գերատեսչությունների, այնպես էլ հասարակական կազմակերպությունների (ՀԿ-ների) կողմից: Մի կողմից՝ դատարանների կամ այլ պարտադիր ուղղորդման ուղիների միջոցով բռնություն գործադրող անձանց կարող է կարգադրվել մասնակցել կանխարգելիչ միջամտության և ռեաբիլիտացման այդ ծրագրերին: Մյուս կողմից՝ նրանց մասնակցությունը կարող է լինել կամավորության սկզբունքի հիման վրա՝ կա՛մ այլ գերատեսչությունների (օրինակ՝ երեխաների պաշտպանության ծառայությունների, առողջապահական ծառայությունների) առաջարկությամբ, կա՛մ ինքնուրույն ուղղորդման միջոցով: Անչափ կարևոր է, որ այդ ծրագրերը հասանելի լինեն տարբեր հաստատություններում, քանի որ դրանք ուղղված են բռնություն գործադրող անձանց տարբեր խմբերին՝ նրանց, ովքեր հայտնաբերվել են քրեական արդարադատության համակարգի, քաղաքացիական արդարադատության, այլ շահագրգիռ կողմերի (օրինակ՝ երեխաների պաշտպանության գործակալությունների) կողմից և նրանց, ովքեր չեն հայտնաբերվել որևէ գերատեսչության կողմից, սակայն կարող են կամավոր կերպով փնտրել օգնություն:

Ծրագրերի մեծ մասն աշխատում է տղամարդկանց հետ, որոնք բռնության արարք են գործադրել իգական սեռի իրենց սեռական զուգընկերների նկատմամբ: Որոշ ծրագրեր ուղղված են բռնություն գործադրող անձանց հատուկ խմբերի, ինչպես օրինակ՝ արական սեռի՝ բռնություն գործադրող այն անձանց կարիքներին, որոնք իրենց սեռական զուգընկերներին ծանր վնաս պատճառելու մեծ վտանգ են ներկայացնում, ինչպես նաև ուղղված են իգական սեռի՝ բռնություն գործադրող անձանց, կախվածության խնդիրներ ունեցող՝ բռնություն գործադրող անձանց, իրենց երեխայի մյուս ծնողի նկատմամբ բռնության արարք գործադրող հայրերին և այլոց:[18]

Բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի արդյունքների հետազոտությունը տրոհված է և հանգեցրել է ոչ միանշանակ արդյունքների:[19] Արդյունքների գնահատման համար կիրառված մեթոդաբանության և գործիքների վերաբերյալ քննարկումը դարձել է գիտական բանավեճի մաս: Վերջերս առաջարկվել են համատեքստի վրա հիմնված և զոհակենտրոն մոտեցման միջոցով արդյունքը գնահատելու նոր խոստումնալից մոտեցումներ:[20] Այս առումով, թե՛ ծրագրին մասնակցած տղամարդկանց և թե՛ նրանց նախկին կամ ներկայիս զուգընկերների կողմից տրամադրված հետագա տեղեկությունները ցույց են տվել, որ բռնության բոլոր տեսակները զգալիորեն նվազել են ծրագրի ավարտին: Ավելին, ծրագրերին մասնակցած անձանց շատ (նախկին) զուգընկերների համար բռնության ազդեցությունը նույնպես նվազել էր, թեև որոշները դեռևս զգում էին բացասական հետևանքները և ծրագրի ավարտին ունեին վախի զգացում: Երեխաների նկատմամբ բռնության ազդեցության վերաբերյալ արդյունքներն այդքան էլ ակներև չէին, ինչը ցույց է տալիս, որ ծրագրի ավարտին երեխաները դեռևս զգում էին բռնության հետևանքները:[21] Զոհակենտրոն մոտեցման վրա հիմնված հետագա հետազոտությունն անհրաժեշտ է՝ էլ ավելի լավ հասկանալու համար, թե *ինչն* է լավ աշխատում բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերում: Այնուամենայնիվ, ընթացիկ հետազոտությամբ ներկայացված են բռնություն գործադրող անձանց ուղղված անվտանգ և արդյունավետ ծրագրերի առանցքային տարրերը, որոնք կարող են օգտակար լինել դրանք նախաձեռնելու և իրականացնելու համար:[22]

18 Հատուկ հարմարեցված միջամտությունների օրինակներ են՝ Միացյալ Թագավորությունում ‚Project DRIVEե նախաձեռնությունը, որն ուղղված է բարձր վտանգ ներկայացնող և բարձր վնաս պատճառող՝ բռնություն գործադրող անձանց (https://driveproject.org.uk/), Միացյալ Թագավորությունում սեռական զուգընկերոջ նկատմամբ բռնություն գործադրող այն անձանց ուղղված ‚ADVANCEե հետազոտական ծրագիրը, որոնք չարաշահում են թմրանյութերի օգտագործումը (‚ADVANCEե հետազոտական ծրագիր. Լոնդոնի թագավորական քոլեջ (kcl.ac.uk)), (‚Caring Dadsե ծրագիրն ուղղված է սեռական զուգընկերոջ նկատմամբ բռնություն գործադրող անձանց, որոնք հանդիսանում են հայրեր, և այն կիրառվում է միջազգային մակարդակով (Caring Dads™):

19 Վալլ, Բ., Լոպեզ-Մարտին, Էքս., Գրանե-Մորսիլլո, Ջ. և Հեսթեր, Մ. (2023թ.): Բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի արդյունքների ուսումնասիրությունների որակի համակարգված վերլուծություն. դեպի արդյունքի գնահատման նոր մոդել: *Տրավմա, բռնություն և բռնարարք*, էջեր 1-15: https://doi. org/10.1177/15248380231203718:

20 Վալլ, Բ., Գրանե-Մորսիլլո, Ջ., Փաունց, Ա. և Հեսթեր, Մ. (2023թ.): Բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի արդյունքների գնահատում՝ համատեքստի վրա հիմնված և զոհակենտրոն մոտեցման միջոցով: ‚Impactե նախագիծ: *Հասարակական գիտություններ*, *12(11),* 613: https://doi.org/10.3390/socsci12110613, Քելլի, Լ. և Ուեստմարլենդ, Ն. (2015թ.): *Ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրեր. քայլեր դեպի փոփոխություն: «Mirabal» նախագծի վերջնական հաշվետվություն*: Լոնդոնի Մետրոպոլիտեն համալսարան և Դարհեմի համալսարան: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://hubble-live-assets.s3.amazonaws.com/respect/file_asset/ file/28/ProjectMirabalfinalreport.pdf:

21 Վալլ, Բ. և այլք, (2023թ.), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 20):

22 WWP EN (Ընտանեկան բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի հարցերով եվրոպական ցանց): (2023թ.), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 6):

1.1 Ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի իրավական և քաղաքականության շրջանակը

Բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերը պետք է լինեն կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ համայնքի համակարգված արձագանքի անբաժանելի մասը: Սա ներառում է տարբեր կազմակերպությունների, ինչպես օրինակ՝ կանանց աջակցման ծառայությունների, իրավապահ մարմինների, դատական ծառայությունների, պրոբացիայի ծառայությունների և հարկ եղած դեպքում երեխաների պաշտպանությամբ զբաղվող գերատեսչությունների հետ սերտ համագործակցություն:[23] Այդ ծրագրերի՝ համապատասխան գերատեսչություններից առանձին իրականացումը խոչընդոտում է դրանց արդյունավետությունը և կանանց անվտանգությունը: Հետևաբար, անչափ կարևոր է ունենալ բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի համար հստակ սահմանված շրջանակ: Այն պետք է հիմնված լինի ամուր իրավական կամ քաղաքականության հիմքի վրա և պետք է ներառի ուղղորդման հստակ ուղիներ, միջգերատեսչական համագործակցություն, համարժեք ու կայուն ֆինանսավորում, ինչպես նաև ծրագրի որակի ապահովման և գնահատման մեխանիզմներ: Այդ համապարփակ մոտեցման միջոցով ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերը կարող են առավել արդյունավետորեն նպաստել թե՛ բռնության հասցեագրմանը, թե՛ դրա կանխարգելմանը: Բռնություն գործադրող անձանց տարբեր խմբերին հասանելիություն ունենալու համար անհրաժեշտ է ունենալ բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի տարբեր ուղղորդման ուղիներ:[24] Սա պետք է ներառի պարտադիր ուղղորդումները և ինքնաուղղորդումները (այդ թվում՝ տարբեր գերատեսչությունների առաջարկություններով): Այդ ծրագրերը պետք է իրականացվեն տարբեր հաստատություններում, այդ թվում՝ ազատությունից զրկելու և ազատությունից զրկելու հետ չկապված հաստատություններում: Իր ելակետային գնահատման ընթացակարգի ժամանակ ԳՐԵՎԻՀՈ-ն շեշտել է, որ ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերը չպետք է փոխարինեն քրեական հետապնդումը, դատապարտումը կամ պատիժը կրելը և չպետք է խաթարեն զոհերի համար արդարադատության արդար հասանելիությունը:[25]

Ինչ վերաբերում է քրեական արդարադատության համակարգում ուղղորդման մեխանիզմների ինտեգրմանը՝ ԳՐԵՎԻՀՈ-ի գնահատումներով վերհանվել են մի շարք թերություններ: Պորտուգալիայի գնահատման ժամանակ ԳՐԵՎԻՀՈ-ն ընդգծել է, որ դեպի բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրեր ուղղորդումների մեծ մասը տեղի է ունեցել որպես պատիժ կրելու ժամկետի կասեցման կամ քրեական վարույթի ժամանակավոր կասեցման նախապայման:[26] Նույն կերպ՝ Բելգիայում ԳՐԵՎԻՀՈ-ն նշել է, որ դեպի բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրեր ուղղորդումը հաճախ կիրառվում է առավելապես որպես դատապարտման այլընտրանք, քան որպես դրան լրացում, ինչը հարցեր է առաջացնում քրեական արդարադատության արձագանքի տարհամոզիչ բնույթի վերաբերյալ:[27] Այս առումով, հարկ է հիշել, որ Ստամբուլի կոնվենցիայի 45-րդ հոդվածի համաձայն՝ Կողմերը պետք է ապահովեն, որ դրա շրջանակներում բռնության տարբեր ձևերի հետապնդման համար նախատեսված իրավախախտումների համար «սահմանվեն արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ պատժամիջոցներ՝ հաշվի առնելով դրանց ծանրությունը»: Այսպիսով, առկա է Եվրոպայում բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի գործող իրավական շրջանակների մանրամասն վերլուծության անհրաժեշտություն՝ քրեական արդարադատության համակարգերում ծրագրերի ներդրման բարդությունն ամբողջությամբ հասկանալու և լավագույն գործելակերպերը վերհանելու համար: Ավելին, ԳՐԵՎԻՀՈ-ն նշել է, որ նույնիսկ եթե գոյություն ունեն ուղղորդման ուղիներ, այդուհանդերձ, դեպի բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրեր ուղղորդումները ոչ միշտ են իրականացվում: Այս անհամապատասխանությունը բացատրվում է այնպիսի գործոններով, ինչպիսիք են Ավստրիայում արձանագրված՝ դատվածության ցածր ցուցանիշները[28], Ֆրանսիայում արձանագրված՝ ուղղորդող կազմակերպությունների կարողությունների զարգացման անհրաժեշտությունը,[29] կամ բռնություն գործադրող անձանց

23 Եվրոպայի խորհուրդ: (2023ա): *ԳՐԵՎԻՀՈ-ի գործունեության վերաբերյալ 4-րդ ընդհանուր զեկույց*: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/4th-general-report-on-gre- vio-s-activities/1680aca199 (տե՛ս պարբերություն 104):

24 Հեսթեր, Մ. և Լիլլի, Ս. Ջ. (2014թ.), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 5):

25 Եվրոպայի խորհուրդ: (2022բ), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 7, տե՛ս պարբերություն 195):

26 Եվրոպայի խորհուրդ: (2019գ), *Պորտուգալիայի վերաբերյալ ԳՐԵՎԻՀՈ-ի ելակետային գնահատման զեկույց:* Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/grevio-reprt-on-portu- gal/168091f16f (տե՛ս պարբերություն 102):

27 Եվրոպայի խորհուրդ: (2020բ): *Բելգիայի վերաբերյալ ԳՐԵՎԻՀՈ-ի ելակետային գնահատման զեկույց:* Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/grevio-report-on-belgium/ 16809f9a2c (տե՛ս պարբերություն 91):

28 Եվրոպայի խորհուրդ: (2017թ.). *Ավստրիայի վերաբերյալ ԳՐԵՎԻՀՈ-ի ելակետային գնահատման զեկույց:* Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/grevio-report-austria-1st-eval- uation/1680759619 (տե՛ս պարբերություն 85):

29 Եվրոպայի խորհուրդ: (2022բ), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 7, տե՛ս պարբերություն 203):

ուղղված ծրագրերի բացակայությունը և Խորվաթիայում արձանագրված՝ ֆինանսավորման կրճատումը:[30]

Բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերը պետք է հասանելի լինեն ամբողջ երկրում՝ ընդգրկելով տարբեր շրջաններից, այդ թվում՝ քաղաքային և գյուղական վայրերից բռնություն գործադրող անձանց: ԳՐԵՎԻՈ-ն կոչ է արել իշխանություններին շատ երկրներում, այդ թվում՝ Ալբանիայում, Դանիայում, Իտալիայում, Մոնտենեգրոյում, Պորտուգալիայում, Սերբիայում և Թուրքիայում ավելացնել հասանելի ծրագրերի թիվը:[31]

Բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերը պետք է ստանան բավարար ֆինանսավորում՝ կայուն կերպով իրականացվելու և անվտանգ ու որակյալ միջամտության չափանիշներին համապատասխանելու համար: Վավերացնելով Ստամբուլի կոնվենցիան՝ կառավարությունները պարտավորություն են ստանձնում նախաձեռնելու բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրեր և օժանդակելու դրանց: Բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի հարցերով եվրոպական ցանցը խորհուրդ է տալիս առանձնացնել բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերին հատկացված բյուջեն ընտանեկան բռնության զոհերին աջակցություն ցուցաբերող ծառայություններին հատկացվող բյուջեից՝ միաժամանակ ընդգծելով, որ ոլորտի ֆինանսավորման ընդհանուր չափը պետք է ավելացվի:[32] Հիմնվելով սույն ուսումնասիրության շրջանակներում իրականացված հարցման և հարցազրույցների արդյունքների վրա՝ ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի 40 տոկոսի դեպքում նշվել է, որ իրենց գործունեությանը հատկացված է կայուն բյուջետային տող, ինչը խոստումնալից արդյունք է: Այնուամենայնիվ, ծրագրերի մեծ մասը հիմնված է կարճաժամկետ և նախագծային ֆինանսավորման վրա: Հարցազրույցի մասնակիցները նշել են, որ նախագծային ֆինանսավորումն առաջացնում է բազմաթիվ մարտահրավերներ, որոնցից մեկն անձնակազմի բարձր հոսունությունն է, որն արդյունքում հանգեցնում է փորձառու մասնագետների կորստին և կարող է բացասական ազդեցություն ունենալ միջամտության որակի վրա: Թեև ոչ բավարար ֆինանսավորումը գրեթե ամենուր նշվում է որպես բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի իրականացման հիմնական մարտահրավերներից մեկը, այնուամենայնիվ, որոշ երկրներում ֆինանսավորման բացակայությունն առավել լուրջ խնդիր է: Օրինակ՝ Խորվաթիայում ԳՐԵՎԻՈ-ն նշել է, որ ազգային կառավարությունը ֆինանսավորում է հոգեսոցիալական ռեաբիլիտացման ծրագրերի կայուն իրականացման համար անհրաժեշտ բյուջեի միայն 30 տոկոսը, և որ հավաստագրված մասնագետների թիվը զգալիորեն կրճատվել է, ինչը, ի վերջո, հանգեցրել է դատարանի կողմից՝ դեպի բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրեր պարտադիր ուղղորդումների նվազմանը:[33] Որոշ երկրներ փորձել են,

Խոստումնալից գործելակերպեր

Շոտլանդիայում Կալեդոնյան համակարգն ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված համապարփակ երկարաժամկետ ծրագիր է, որն ամբողջությամբ իրականացվում է պետության ֆինանսավորմամբ: Դրա ինտեգրված մոտեցմամբ համատեղվում է դատարանի կարգադրությամբ բռնացող տղամարդկանց ուղղված ծրագիրը՝ կանանց և երեխաներին ուղղված աջակցման ծառայություններով: Դրա ֆինանսավորման աղբյուրները բազմազան են՝ Շոտլանդիայի համայնքային արդարադատության դեպարտամենտը ֆինանսավորում է բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերը, իսկ Շոտլանդիայի կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի հիմնադրամը միջոցներ է հատկացնում կանանց և երեխաների աջակցության ծառայությունների գործունեության համար: Ավելին, հատկացված պետական ֆինանսավորումը հնարավորություն է տալիս ընդլայնելու բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի աշխարհագրական ընդգրկույթը, ինչպես նաև նախատեսելու Շոտլանդիայում ծառայությունների թիվն ավելացնելու ծրագրերը:

«Alternative to Violence (AVT)» կազմակերպությունը հասարակական կազմակերպություն է (ՀԿ), որը Նորվեգիայի 15 քաղաքներում իրականացնում է բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրեր: Դրա ծրագրերը կայուն ֆինանսավորում են ստանում ազգային և տեղական իշխանությունների կողմից:

30 Եվրոպայի խորհուրդ: (2023բ): *Խորվաթիայի վերաբերյալ ԳՐԵՎԻՈ-ի ելակետային գնահատման զեկույց:* Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/baseline-evaluation-re- port-on-croatia/1680ac76c9 (տե՛ս պարբերություն 106):

31 Եվրոպայի խորհուրդ: (2022բ), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 7, տե՛ս պարբերություն 194):

32 WWP EN [Ընտանեկան բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի հարցերով եվրոպական ցանց]: (2018թ.): *Ընտանեկան բռնություն գործադրող անձանց հետ աշխատող ծրագրերի համար չափանիշների մշակման ուղեցույց:* WWP EN: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ www.work-with-perpetrators.eu/fileadmin/ WWP_Network/redakteure/Resources/Guidelines/ WWP_EN_Guidelines_for_Standards_v3_2018.pdf:

33 Եվրոպայի խորհուրդ: (2023ա), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 23, տե՛ս պարբերություն 106):

առանց լրացուցիչ ռեսուրսներ հատկացնելու, ստեղծել բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրեր: Բոսնիա և Հերցեգովինայում, Մոնտենեգրոյում, Սերբիայում, Հյուսիսային Մակեդոնիայում[34] և Թուրքիայում[35] ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերն ինտեգրվել են գործող սոցիալական կամ առողջապահական ծառայություններին, ինչպիսիք են սոցիալական աշխատանքի և հոգեկան առողջության կենտրոնները՝ այդ ծառայությունների՝ այլ աշխատանքներում արդեն ներգրավված մասնագետների համար ստեղծելով լրացուցիչ ծանրաբեռնվածություն:

Ռեսուրսներ չհատկացնելը հաճախ հանգեցնում է նրան, որ բավարար կարողություններ չունեցող ծրագրերը չեն կարող ապահովել Ստամբուլի կոնվենցիայի համաձայն որակյալ աշխատանք: Բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերին օժանդակող շրջանակի կարևոր հայեցակետն ազգային մակարդակում որակի ապահովման մեխանիզմների առկայությունն է: Կարևոր է հասկանալ, որ բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի որակի ապահովումը չպետք է հիմնվի բացառապես նման ծրագրեր իրականացնողների առանձին նախաձեռնությունների և պատասխանատվության վրա: Կառավարությունները կարող են առանցքային դերակատարություն ունենալ ծրագրերի որակի բարելավման գործում՝ ստեղծելով դրանց մշտադիտարկման և գնահատման մեխանիզմներ:

Խոստումնալից գործելակերպեր

Գերմանիայում ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի ազգային ցանցը (BAG TäHG) կանանց աջակցման ծառայությունների հետ սերտ համագործակցությամբ մշակել է բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի չափանիշներ: Այդ չափանիշները ներառում են բռնություն գործադրող անձանց հետ անվտանգ աշխատանքի առանցքային տարրեր և համահունչ են Ստամբուլի կոնվենցիայի սկզբունքներին: Ավելին, այդ չափանիշները հաստատված են Ընտանեկան հարցերի, տարեց քաղաքացիների, կանանց և երիտասարդների հարցերով դաշնային նախարարության կողմից: «BAG TäHG»-ը պատասխանատու է հավատարմագրման համակարգի ներդրման համար, որը գնահատում և մշտադիտարկում է վերը նշված չափանիշներին համապատասխանությունը: Որոշ շրջաններում հավատարմագրման համակարգը կապված է ֆինանսավորման հնարավորությունների հետ, ինչը ենթադրում է, որ պետական ֆինանսավորումն կստանան միայն այն ծրագրերը, որոնք համապատասխանում են որակի հատուկ չափանիշներին:

Ընտանեկան բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի հարցերով եվրոպական ցանցը մշակել է բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի եվրոպական չափանիշներ, որոնք կարող են ելակետային լինել ազգային մակարդակում անվտանգ և արդյունավետ գործելակերպերի նվազագույն չափորոշիչների սահմանման համար, հատկապես այն երկրների համար, որոնք չունեն իրենց ազգային չափանիշները: Ավելին, WWP EN-ն աշխատում է բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի եվրոպական հավատարմագրման համակարգի մշակման ուղղությամբ:

Պետությունները ներդրել են տարբեր մեթոդներ՝ բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի որակի ապահովման մեխանիզմներ ստեղծելու համար: Համապատասխան հաստատությունները, օրինակ՝ ի թիվս այլ երկրների, Հյուսիսային Մակեդոնիայում[36], Մոլդովայի Հանրապետությունում[37] և Միացյալ Թագավորությունում[38] մշակել են բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի ազգային չափանիշներ: Որպես այլընտրանք՝ բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերը, որոնք հաճախ վերածվել

34 Յովանովիչ, Ս. և Վալլ, Բ. (2022թ.), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 8):
35 Եվրոպայի խորհուրդ: (2018թ.): *Թուրքիայի վերաբերյալ ԳՐԵՎԻՀՈ-ի ելակետային գնահատման զեկույց:* Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/grevio-baseline-evaluation-report-turkey/16808e5283:
36 Յովանովիչ, Ս. և Վալլ, Բ. (2022թ.), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 8):
37 Մոլդովայի կառավարություն: (2014թ.): *Ընտանեկան բռնարարների աջակցման և խորհրդատվության կենտրոնի շրջանակներում մատուցվող ծառայությունների նվազագույն որակի չափանիշների վերաբերյալ: Հավելված 2:* Հասանելի է հետևյալ հղմամբ՝ www.legis.md/cautare/getResults?doc_id=64111&lang=ro:
38 Քելլի, Լ. և Ուեստմարլենդ, Ն. (2023թ.): *Ընտանեկան բռնարարքներ գործադրող անձանց ուղղված միջամտությունների չափանիշներ:* Դարհեմի համալսարան, Լոնդոնի Մետրոպոլիտեն համալսարան: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ www.gov.uk/government/publications/standards-for-domestic-abuse-perpetrator-interventions:

են ազգային ցանցի, ստանձնել են Գերմանիայում[39], Իտալիայում[40], Սերբիայում[41] և Միացյալ Թագավորությունում[42] չափանիշներ ստեղծելու պատասխանատվությունը: Որոշ դեպքերում, ինչպես օրինակ՝ Շոտլանդիայում, որակի ապահովման մեխանիզմները ներդրվել են ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ազգային ծրագրի հավատարմագրման միջոցով: Այնուամենայնիվ, կարևոր է նշել, որ եվրոպական երկրների մեծ մասում չկան բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի որակն ապահովելու և մշտադիտարկելու մեխանիզմներ: Թեև չափանիշները հիմք են տալիս երկրում բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի համար, այնուամենայնիվ, ծրագրերի գործնական իրականացման ժամանակ այդ չափանիշների կատարումը պետք է ապահովվի, օրինակ՝ հավատարմագրման գործընթացների միջոցով: Լավագույն գործելակերպերը ենթադրում են ֆինանսավորումը չափանիշների կատարման հետ փոխկապակցելը, ինչը որոշվում է բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի հավատարմագրման միջոցով: Հատկանշական է, որ Գերմանիան որդեգրել է այդ մոտեցումը, քանի որ բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի ազգային ցանցը վերահսկում է հավատարմագրման գործընթացը (BAG TäHG): Սա խոստումնալից գործելակերպ է, քանի որ հավատարմագրումը ոլորտում աշխատող փորձագետներին վստահելը կարող է ապահովել ծրագրերի՝ որակի հաստատված չափանիշներին համապատասխանության առավել մանրամասն գնահատումը: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ շատ քիչ երկրներ են ստեղծել բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի հավատարմագրման համակարգ:

Խոստումնալից գործելակերպերը

Իտալիայում «Centro di Ascolto Uomini Maltrattanti (CAM)» ՀԿ-ն, Չեխիայում «League of Open Men (LOM)» ՀԿ-ն, Միացյալ Թագավորությունում «Developing Health and Independence (DHI)» ՀԿ-ն, Ալբանիայում «Counseling Line for Men and Boys (CLMB)» ՀԿ-ն և «Counseling Centre for Men and Boys (ZDB)» ՀԿ-ն կիրառում են արդյունքների գնահատման համապարփակ և զոհակենտրոն ընթացակարգ՝ օգտագործելով Ազդեցության արդյունքների մշտադիտարկման «Impact» գործիքակազմը: Այն ուղղված է մի շարք արդյունքների, ինչպիսիք են վարքագծի փոփոխությունը, այդ վարքագծի ազդեցությունը, (նախկին) զուգընկերոջ բարեկեցությունն ու անվտանգությունը, ծրագրին մասնակցելու տղամարդկանց մոտիվացիան, բռնությանն կատմամբ տղամարդկանց վերաբերմունքը և երեխաների բարեկեցությունը: Այդ ցուցանիշների վերաբերյալ տվյալները հավաքագրվում են տարբեր ժամանակահատվածներում տղամարդ մասնակիցներից և նրանց (նախկին) զուգընկերներից:

Շոտլանդիայում Կալեդոնյան համակարգը կիրառում է իր ծրագրերի իրականացումն ու արդյունքները գնահատելու առաջադեմ շրջանակ: Համակարգը կիրառում է ստանդարտացված ընթացակարգեր՝ ամբողջ երկրում տվյալներ հավաքագրելու համար: Մասնագետները վերապատրաստումներ են անցնում տվյալների հավաքագրման և իրենց աշխատանքի գնահատման կարևորության վերաբերյալ, մինչդեռ գործընթացը համակարգվում է հատուկ գնահատման հարցերով զբաղվող փորձագետի կողմից: Ավելին, Կալեդոնյան համակարգը պատվիրում է իր ծրագրի արտաքին գնահատումներ:

Որակի ապահովման շրջանակի մեկ այլ կարևոր տարր է բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի շրջանակներում կիրառվող ընթացակարգերի և դրանց արդյունքների գնահատումը: ԳՐԵՎԻՈ-ն բազմիցս ընդգծել է գիտահետազոտական աշխատանքների իրականացման և բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի գնահատման կարևորությունը: Իր

39 Bundesministerium fϑr Familie, Senioren, Frauen und Jugend (BMFSFJ). (2021). *Arbeit mit T tern in F llen h uslicher Gewalt: Standard der Bundesarbeitsgemeinschaft T terarbeit H usliche Gewalt e.V.* BMFSFJ. Available at www.bmfsfj.de/bmfsfj/service/publikationen/ arbeit-mit-taetern-in-faellen-haeuslicher-gewalt-80734:

40 Relive Relazioni Libere dalle Violenze. (n.d.). *Linee guida nazionali dei programmi di trattamento per uomini autori di violenza contro le donne nelle relazioni affettive.* Relive. Հասանելի է հետևյալ հղմամբ՝ www.associazionerelive.it/joomla/images/LineeGuidaRelivea.pdf:

41 Յովանովիչ, Ս. և Վալլ, Բ. (2022թ.), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 8):

42 Դինես, Ս. (2022): *,Respect» չափանիշ: Հավատարմագրման շրջանակ՝ Միացյալ Թագավորությունում ընտանեկան բռնարարք գործադրող անձանց հետ անվտանգ, արդյունավետ և բռնություն վերապրածների վրա կենտրոնացած աշխատանքի համար: Միացյալ Թագավորության կառավարություն:* Հասանելի է հետևյալ հղմամբ՝https://hubble-live-assets.s3.amazonaws.com/respect/file_asset/file/1458/ Respect_Standard_4th_edition_2022.pdf, Քելլի, Լ. և Ուեստմարլենդ, Ն. (2023թ.), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 36):

ելակետային գնահատման զեկույցներից մեծ մասում, հատկապես Անդորրայի[43], Բելգիայի[44], Ֆինլանդիայի[45], Ֆրանսիայի[46], Իտալիայի[47], Մալթայի[48], Նիդեռլանդների[49], Պորտուգալիայի[50], Սերբիայի[51], Իսպանիայի[52] և Թուրքիայի[53] վերաբերյալ ելակետային գնահատման զեկույցներում ԳՐԵՎԻՈ-ն անդրադարձել է գիտահետազոտության իրականացման և բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի կարճաժամկետ ու երկարաժամկետ ազդեցության գնահատման անհրաժեշտությանը՝ վերլուծելու համար, թե արդյոք այդ ծրագրերն իրականում ծառայում են իրենց կանխարգելիչ նպատակին:[54]

Բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի հաջողության գնահատումը չպետք է սահմանափակվի բռնի վարքագիծը դադարեցնելով, դրա ընթացքում պետք է հաշվի առնել, թե արդյոք դրանք որևէ դրական արդյունք թողել են ընտանեկան բռնության ենթարկված կանանց վրա, թե ոչ: Սա կարող է ներառել իրենց բռնի վարքագծի համար տղամարդկանց կողմից պատասխանատվության ստանձնման մակարդակի բարձրացումը, զոհերի վրա բռնության վնասակար ազդեցության մասին բռնություն գործադրող անձանց տեղեկացվածության մակարդակի բարձրացումը, ինչպես նաև զոհերի անվտանգության և ազատության բարձրացումը: Վերոնշյալի հիման վրա արդյունավետ գնահատման համար անչափ կարևոր է միացնել տարբեր աղբյուրներից, այդ թվում՝ զոհերի ցուցմունքներից ստացված տվյալները: Ծրագրի ընթացքում առաջընթացի շարունակական մշտադիտարկումը, ծրագրից առաջ և դրա ավարտին հավաքագրված տվյալների համադրումը, ինչպես նաև գնահատման ստանդարտացված գործիքների կիրառումը կարևոր են արդյունավետ գնահատման շրջանակի համար: Սույն ուսումնասիրության շրջանակներում իրականացված հարցման արդյունքները ցույց են տվել, որ թեև ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված՝ ուսումնասիրված ծրագրերի մեծ մասի (84.0%) դեպքում նշվում է աշխատանքի արդյունքի գնահատման մասին, այնուամենայնիվ, դրանց մեծ մասը դա իրականացնում է միայն մեկ անգամ՝ ծրագրի ավարտին: Սա թույլ չի տալիս համադրել ծրագրին մասնակցելուց առաջ ու հետո հավաքագրված արդյունքները, ուստի և կատարել որոշ եզրահանգումներ: Հետաքրքիր է, որ հարցմանը մասնակցած միայն մեկ կազմակերպություն է գնահատումներ իրականացնում ծրագրից առաջ, դրա ընթացքում և դրանից հետո: Ավելին, ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված՝ ուսումնասիրված ծրագրերի միայն 42.85 տոկոսի դեպքում է նշվել, որ արդյունքների գնահատման մեջ ընդգրկվում են զոհերից ստացված արձագանքները: Քանի որ բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի ընդհանուր նպատակը զոհերի անվտանգությունը բարձրացնելն է, վերջիններիս ներդրումը կարևոր է՝ որոշելու համար, թե արդյոք այդ նպատակներն իրականացվել են, թե ոչ:

Ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված շատ ծրագրեր արժևորում են գնահատման կարևորությունը, սակայն նշում են դրա իրականացման ընթացքում առաջացող մարտահրավերների մասին: Սույն ուսումնասիրության շրջանակներում անցկացված հարցազրույցի մասնակիցները ռեսուրսների բացակայությունը նշել են որպես համակարգված գնահատումներ իրականացնելու խոչընդոտ, քանի որ տվյալների հավաքագրումն ու վերլուծությունը պահանջում են ժամանակ և փորձառություն, և որի համար անհրաժեշտ են այնպիսի ռեսուրսներ, որոնք բռնություն գործադրող անձանց ուղղված բազմաթիվ ծրագրերում չկան: Ավելին, բռնություն գործադրող անձանց ուղղված շատ ծրագրեր կանգնում

43 Եվրոպայի խորհուրդ: (2020ա): *Անդորրայի վերաբերյալ ԳՐԵՎԻՈ-ի ելակետային գնահատման զեկույց:* Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/grevio-report-andorra/ 1680a07ebd:

44 Եվրոպայի խորհուրդ: (2020բ), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 27):

45 Եվրոպայի խորհուրդ: (2019ա): *Ֆինլանդիայի վերաբերյալ ԳՐԵՎԻՈ-ի ելակետային գնահատման զեկույց:* Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/grevio-report-on-finland/ 168097129d:

46 Եվրոպայի խորհուրդ: (2019բ): *Ֆրանսիայի վերաբերյալ ԳՐԵՎԻՈ-ի ելակետային գնահատման զեկույց:* Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/grevio-inf-2019-16/168098c61a:

47 Եվրոպայի խորհուրդ: (2020գ): *Իտալիայի վերաբերյալ ԳՐԵՎԻՈ-ի ելակետային գնահատման զեկույց:* Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/grevio-report-italy-first-baseline-evaluation/168099724e:

48 Եվրոպայի խորհուրդ: (2020դ): *Մալթայի վերաբերյալ ԳՐԵՎԻՈ-ի ելակետային գնահատման զեկույց:* Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/grevio-inf-2020-17-malta-final-report-web/1680a06bd2:

49 Եվրոպայի խորհուրդ: (2020ե): *Նիդեռլանդների վերաբերյալ ԳՐԵՎԻՈ-ի ելակետային* գնահատման *զեկույց:* Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/grevio-report-on-netherlands/1680997253:

50 Եվրոպայի խորհուրդ: (2019գ), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 26):

51 Եվրոպայի խորհուրդ: (2020զ): *Սերբիայի վերաբերյալ ԳՐԵՎԻՈ-ի ելակետային գնահատման զեկույց:* Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/grevio-report-on-serbia/ 16809987e3:

52 Եվրոպայի խորհուրդ: (2020է): *Իսպանիայի վերաբերյալ ԳՐԵՎԻՈ-ի ելակետային գնահատման զեկույց:* Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/grevio-s-report-on-spain/ 1680a08a9f:

53 Եվրոպայի խորհուրդ: (2018), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 35):

54 Տե՛ս հետևյալ երկրների վերաբերյալ ԳՐԵՎԻՈ-ի ելակետային գնահատման զեկույցները՝ Անդորրա, պարբերություն 84, Բելգիա՝ պարբերություն 95, Ֆինլանդիա, պարբերություն 79, Ֆրանսիա՝ պարբերություններ 120 և 122, Իտալիա՝ պարբերություն 117, Մալթա, պարբերություն 87, Նիդեռլանդներ, պարբերություն 107, Պորտուգալիա, պարբերություն 105, Սերբիա, պարբերություն 90, Իսպանիա, պարբերություն 112 և Թուրքիա, պարբերություն 129:

են ընտանեկան բռնությանը հատուկ գնահատման համարժեք գործիքներ (օրինակ՝ տարբեր հասանելի գործիքները ստանդարտացված չեն և (կամ) շեշտադրում են տարբեր արդյունքներ), ինչպես նաև դրանց իրականացման համապատասխան եղանակներ գտնելու խնդրի առջև:

Ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված անվտանգ և արդյունավետ ծրագրերի շրջանակի վերաբերյալ առաջարկություններ

Ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է համապատասխան օրենսդրական, քաղաքականության և որակի ապահովման շրջանակ: Այդ ծրագրերը կարող են ինտեգրվել ազգային օրենսդրական շրջանակին՝ որպես կանանց նկատմամբ բռնության ու ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարում դրանց դերակատարության ճանաչման միջոց: Ստամբուլի կոնվենցիայի Կողմերը պետք է ապահովեն դեպի բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրեր ուղղորդելու տարբեր ճանապարհներ՝ առաջարկելով պարտադիր և կամավոր մասնակցությունը որպես բռնություն գործադրող անձանց տարբեր խմբերին ընդգրկելու միջոց: Անչափ կարևոր է, որ ուղղորդումները դիտարկվեն առավելապես որպես լրացուցիչ միջոցներ, այլ ոչ որպես քրեական հետապնդմանը, դատապարտմանն ու պատիժը կրելու այլընտրանքներ: Կառավարությունները պետք է ապահովեն, որ դեպի բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրեր ուղղորդումներն ամբողջ երկրում լայնորեն կիրառեն տարբեր շահագրգիռ կողմերի կողմից, ինչի համար պահանջվում է նաև, որ այդ ծրագրերն ամբողջ երկրում ունենան համապատասխան աշխարհագրական ընդգրկույթ: Կառավարությունները պետք է նաև ապահովեն, որ բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերին հատկացվի համապատասխան և հատուկ ֆինանսավորում: Բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի համար նախատեսված լրացուցիչ ֆինանսավորման հատկացումը չպետք է հանգեցնի ընտանեկան բռնության զոհ դարձած կանանց և իրենց երեխաներին աջակցություն ցուցաբերող ծառայություններին հատկացված ֆինանսական և մարդկային ռեսուրսների կրճատմանը: Անհրաժեշտ է խուսափել բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի՝ գործող սոցիալական կամ առողջապահական ծառայություններին առանց լրացուցիչ ֆինանսավորման և այդ ծառայությունների մասնագետների աշխատանքային ծանրաբեռնվածության ճշգրտման ինտեգրումից, քանի որ դա կարող է բացասաբար անդրադառնալ միջամտության անվտանգության և արդյունավետության վրա:

Ստամբուլի կոնվենցիայի Կողմերը պետք է նաև մշակեն ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի որակն ապահովելու շրջանակ: Դա կարող է իրականացվել ազգային չափանիշների մշակման կամ բռնություն գործադրող անձանց հետ միջամտությունների համար ազգային ուսումնական պլանի մշակման միջոցով: Ազգային չափանիշները կամ ուսումնական պլանը պետք է փոխկապակցված լինեն հավատարմագրման համակարգի հետ: Ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերը պետք է գնահատեն դրանց միջամտության իրականացումն ու արդյունքները: Այդ նպատակով կարևոր է տվյալների հավաքագրման միջոցով կենտրոնանալ մի շարք արդյունքների վրա, որը հնարավորություն կտա համեմատել միջամտությունից առաջ և հետո արձանագրված տարբերությունը (այսինքն՝ միջամտությունից առաջ և հետո դիտարկումների տարբերությունների համեմատությունը), ինչպես նաև զոհի և բռնություն գործադրող անձի տեսակետները: Ավելին, գնահատման արդյունքները պետք է պարբերաբար կիրառվեն բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերը բարելավելու ուղղությամբ գործողություններ ձեռնարկելու համար:

1.2. Ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերն ապահովողները

Ծրագրերն ապահովողները, այն պայմանները, որտեղ դրանք իրականացվում են և միջամտություն իրականացնող անձնակազմի հմտություններն այդ ծրագրերի որակի ու արդյունքի վրա ազդող կարևոր գործոններից են:

Բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերը կարող են կառավարվել պետական գերատեսչությունների կամ ՀԿ-ների կողմից և իրականացվել արդարադատության, սոցիալական

ապահովության, առողջապահական համակարգերում կամ ակադեմիական շրջանակներում: Որոշ երկրներում կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունները տրամադրում են ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրեր: Նման ծրագրեր տրամադրվում են հատկապես Բուլղարիայում, Իտալիայում, Ալբանիայում, Բոսնիա և Հերցեգովինայում, Վրաստանում[55], Հյուսիսային Մակեդոնիայում[56] և Մոլդովայի Հանրապետությունում: Այդ դեպքերում բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերը պետք է իրականացվեն զոհերին մատուցվող ծառայություններից առանձին: Բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերը, այդ թվում՝ զոհերին մասնագիտացված աջակցություն ցուցաբերող ծառայությունների կողմից տրամադրվող ծրագրերն ուղղված չեն ընտանիքի վերամիավորմանը կամ միջնորդությանը:

Ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերը, որոնք տեղակայված են առողջապահական ծառայություններում, կարող են բախվել Ստամբուլի կոնվենցիայի հետ իրենց գործելակերպերը համապատասխանեցնելու մարտահրավերների հետ: Թուրքիայի վերաբերյալ իր ելակետային գնահատման զեկույցում ԳՐԵՎԻՈ-ն մտահոգություն է հայտնել նրա մասին, թե արդյոք առողջապահական կենտրոններն ապահովում են համապատասխան միջավայր բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի համար, և արդյոք բուժաշխատողներն ունեն համապատասխան սարքավորումներ՝ այդ միջամտության ծրագրերի հետ աշխատանքի համար:[57] ԳՐԵՎԻՈ-ն մասնավորեցրել է, որ իր մտահոգությունները պայմանավորված են այն փաստով, որ առողջապահական հաստատությունները հակված են բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերը նույնացնել բացառապես հոգեբանական խանգարումների կամ կախվածությունների բուժման հետ: Բոսնիա և Հերցեգովինայում ու Մոնտենեգրոյում բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի վերլուծությունը ցույց է տվել, որ հոգեկան առողջության կենտրոններում իրականացվող այդ ծրագրերն ավելի շուտ հիմնված են կլինիկական մոտեցման, այլ ոչ թե այն մոտեցման վրա, որը կվերհաներ ընտանեկան բռնության հիմքում ընկած հիմնական պատճառները՝ կապված գենդերային անհավասարությունների և հսկելու ու ուժ գործադրելու ցանկության հետ:[58] Առողջապահական ծառայությունների շրջանակներում իրականացվող ծրագրերը կարող են ամրապնդել այն ընկալումը, որ ընտանեկան բռնությունը հիմնականում հանդիսանում է հոգեկան առողջության խնդիր՝ պոտենցիալ նվազեցնելով բռնություն գործադրող անձի պատասխանատվությունը: Նույն կերպ, հոգեկան առողջության հաստատություններում իրականացվող ծրագրերը կարող են ինքնաուղղորդման համար ստեղծել լրացուցիչ խոչընդոտներ, քանի որ բռնություն գործադրող անձինք ձգտում են խուսափել հաճախ հոգեկան առողջության խնդիրների հետ կապված սոցիալական խարանից: Կարևոր է նշել, որ առողջապահական ծառայությունների շրջանակներում իրականացվող ոչ բոլոր ծրագրերն են բախվում այդ մարտահրավերներին: Օրինակ՝ Իտալիայի առողջապահության ոլորտում իրականացվող՝ բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերը համապատասխանում են երկրի ազգային «Relive» ցանցի չափանիշներին (Relazioni Libere dalle Violenze),[59] որոնք համահունչ են Ստամբուլի կոնվենցիայի սկզբունքներին:[60]

Թեև ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված շատ ծրագրեր ստեղծվել են որպես առանձին մասնագիտացված ծրագրեր, այնուամենայնիվ, ԳՐԵՎԻՈ-ի ելակետային գնահատման զեկույցները և որոշ ուսումնասիրություններ վերհանել են այդ միջամտությունները գործող ծառայություններին ինտեգրելու բացասական միտում՝ առանց դրանք լրացուցիչ ռեսուրսներով և վերապատրաստման դասընթացներով զինելու, ինչպես նկարագրված է սույն փաստաթղթի նախորդ բաժնում: Այս մոտեցումը կարող է բացասաբար անդրադառնալ բռնություն գործադրող անձանց անվտանգության և նրանց ուղղված ծրագրերի արդյունքների վրա: Մասնագետները կարող են ժամանակ չունենալ բռնություն գործադրող անձանց միջամտություններին պատշաճ կերպով մասնակցելու համար, եթե նրանցից ակնկալվում է իրականացնել նաև իրենց հիմնական գործունեությունը: Ավելին, ինչպես նկատվել է որոշ դեպքերում, մասնագետների համար կարող է դժվար լինել բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի մեջ կիրառել գենդերազգայուն տեսակետ՝ միաժամանակ կիրառելով կլինիկական մոտեցում իրենց մյուս հաճախորդների հետ աշխատանքում: Բացի դրանից, այն որոշ երկրներում, որտեղ բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերն ինտեգրված են սոցիալական ծառայություններին, մասնագետները կարող են կատարել իրար հակասող գործառույթներ, երբ նրանց հանձնարարվում է երեխաների

55 Յովանովիչ, Ս. և այլք: (2022թ.), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 9):
56 Յովանովիչ, Ս. և Վալլ, Բ.: (2022թ.), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 8):
57 Եվրոպայի խորհուրդ: (2018թ.), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 35, տե՛ս պարբերություն 124):
58 Յովանովիչ, Ս. և Վալլ, Բ.: (2022թ.), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 8):
59 Relive Relazioni Libere dalle Violenze. (չթվագրված), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 40):
60 Եվրոպայի խորհուրդ: (2020գ), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 47, տե՛ս պարբերություն 111):

խնամակալության գործերով տրամադրել եզրակացություն՝ միևնույն ժամանակ բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի համատեքստում աշխատելով բռնացող հայրերի հետ, կամ երբ նրանց հանձնարարվում է միաժամանակ աշխատել զոհի և բռնություն գործադրող անձի հետ: Այդ գործելակերպերը կարող են զգալի ռիսկեր պարունակել զոհերի և վերջիններիս երեխաների անվտանգության համար:

Ստամբուլի կոնվենցիայի բացատրական զեկույցում ընդգծվում է բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի համար հմուտ և վերապատրաստված համակարգողներ ունենալու անհրաժեշտությունը:[61] Այս ոլորտը կարգավորած եվրոպական երկրներ տարբեր պահանջներ են սահմանում բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերում աշխատելու իրավունք ունեցող մասնագետների ֆորմալ կրթության համար, որոնք սովորաբար պահանջում են բարձրագույն կրթություն այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են հոգեբանությունը, սոցիալական աշխատանքը և այլ ոլորտներ: Անչափ կարևոր է նշել, որ ցանկացած ֆորմալ կրթություն պետք է զուգակցվի կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնության և բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի համակարգման վերաբերյալ հատուկ ուսուցմամբ: Ընտանեկան բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի եվրոպական ցանցը սահմանել է համակարգողների կոմպետենցիաները՝ ընդգրկելով այդ մասնագետների գիտելիքները, հմտություններն ու արժեքները:[62] Բացի դրանից, բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի եվրոպական չափանիշներով առաջարկվում է, որ նախքան բռնություն գործադրող անձանց հետ աշխատելը մասնագետներն անցնեն առնվազն 84 ժամ մասնագիտացված վերապատրաստում:[63] Այդ վերապատրաստման ծրագրի մեջ պետք է ընդգրկվեն մի շարք թեմաներ, այդ թվում՝ գենդերային հիմքով բռնությունը և ընտանեկան բռնությունը, ռիսկերի գնահատումն ու կառավարումը, զուգընկերոջ կողմից բռնության ենթարկված անձանց աջակցման ծառայությունների հետ համագործակցությունը,[64] փոփոխության գործընթացը և բռնություն գործադրող անձանց փոխվելու մոտիվացիան, խմբի դինամիկայի կառավարումը և ընդունված ուսումնական պլանի իրականացումը: Ավելին, ծրագրերը պետք է իրականացվեն՝ հաշվի առնելով մշակութային առանձնահատկությունները՝ լայն հասանելիություն ապահովելու համար:[65]

Մասնագիտացված նախնական վերապատրաստման միջոցով բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրեր իրականացնելու համար անհրաժեշտ հմտություններով օժտված համակարգողներն ունեն շարունակական աջակցության կարիք՝ իրենց աշխատանքի որակը պահպանելու և բարձրացնելու համար: Բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի եվրոպական չափանիշներով առաջարկվում է տարեկան նվազագույնը վեց ժամ վերահսկողություն, ի լրումն յուրաքանչյուր տարի նվազագույնը 16 ժամ վերապատրաստման:[66]

61 Եվրոպայի խորհուրդ: (2011ա), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 2, տե՛ս պարբերություն 104):
62 WWP EN: (2018թ.), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 32):
63 WWP EN [Ընտանեկան բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի հարցերով եվրոպական ցանց]: (2023թ.), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 6):
64 Զուգընկերների նկատմամբ բռնության հասցեագրմանն ուղղված միջամտության մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս ,1.3. Զոհերի, հատկապես կանանց և երեխաների անվտանգությունն ու բարեկեցությունը ենթաբաժինը:
65 Եվրոպայի խորհուրդ: (2011բ), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 3):
66 WWP EN [Ընտանեկան բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի հարցերով եվրոպական ցանց]: (2023թ.), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 6):

Ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի ապահովման վերաբերյալ առաջարկություններ

Ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերն ապահովող կազմակերպությունները, այն միջավայրերը, որտեղ դրանք իրականացվում են և ծառայություն մատուցող անձնակազմի կոմպետենցիաներն այդ ծրագրերի արդյունքների վրա ազդող վճռորոշ գործոններ են: Ծրագրերը պետք է տեղակայվեն այնպիսի հաստատություններում, որոնք խթանում են բռնություն գործադրող անձի պատասխանատվությունը՝ միևնույն ժամանակ առավելագույնի հասցնելով ծրագրին մասնակցելու հավանականությունը:

Ծրագրերի ապահովող ընտրելիս կարևոր է վստահ լինել, որ բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերը նախաձեռնվեն որպես առանձին մասնագիտացված ծրագրեր՝ մարդկային և ֆինանսական ռեսուրսներով: Անչափ կարևոր է ապահովել, որ բռնություն գործադրող անձանց հետ աշխատող մասնագետները ներգրավված չլինեն այլ մասնագիտական գործունեության մեջ, որը կարող է բացասաբար անդրադառնալ բռնություն գործադրող անձի հետ աշխատանքային հարաբերությունների հաստատման վրա կամ վտանգել զոհերի կարիքներին առաջնահերթություն տալու գործընթացը (օրինակ՝ մասնագետները չպետք է առաջարկեն երեխաների խնամատարության գործերում ընտանեկան հարցերով դատարաններ կամ հանդես գան որպես բռնություն գործադրող անձի կամ զոհի անհատական հոգեբան): Նույն կերպ, ծրագրերը պետք է տեղակայվեն զոհերին մասնագիտացված աջակցություն ցուցաբերող ծառայություններից (ինչպիսիք են ապաստանները, խորհրդատվական ծառայությունները) առանձին և բռնություն գործադրող անձանց հետ աշխատող մասնագետները չպետք է միաժամանակ աշխատեն զոհերի հետ:

Բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերն ապահովողները պետք է վստահ լինեն, որ իրենց անձնակազմն ունենա մասնագիտական բարձր որակավորում: Այն ենթադրում է, որ անձնակազմը պետք է անցնի կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնության և ընտանեկան բռնության վերաբերյալ մասնագիտացված վերապատրաստումներ: Այն նաև պահանջում է, որ նրանք նախքան պարտականությունները ստանձնելն անցնեն բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի վերաբերյալ հատուկ վերապատրաստում՝ անկախ նախկինում ստացած որևէ ֆորմալ կամ ոչ ֆորմալ կրթությունից: Ավելին, ծառայությունները պետք է ապահովեն, որ մասնագետներն իրենց աշխատանքի ընթացքում ստանան շարունակական աջակցություն, այդ թվում՝ ապահովեն, որ նրանց աշխատանքը պարբերաբար վերահսկվի, և նրանք անցնեն համապատասխան ծառայողական վերապատրաստում:

1.3. Զոհերի, մասնավորապես կանանց և երեխաների անվտանգությունն ու բարեկեցությունը

Զոհերի անվտանգությունը բռնություն գործադրող անձանց ուղղված ցանկացած ծրագրում ամենակարևորն է: Ստամբուլի կոնվենցիայի համաձայն՝ ծրագրերում պետք է առաջնահերթություն տրվի զոհերին ցուցաբերվող աջակցությանը, նրանց անվտանգությանն ու մարդու իրավունքներին, ինչպես նաև դրանք պետք է ստեղծվեն և իրականացվեն զոհերին աջակցություն ցուցաբերող մասնագիտացված ծառայությունների հետ սերտ համագործակցությամբ:[67] Ստամբուլի կոնվենցիայի բացատրական զեկույցում այդ հարցն ուսումնասիրվում է առավել մանրամասնությամբ՝ մատնանշելով ծառայությունների մատուցման գործընթացում առաջացող հնարավոր ռիսկերը, ինչպիսիք են զոհերին անվտանգության կեղծ զգացում տալը, երբ բռնություն գործադրող անձը սկսում է ծրագիրը:[68] Ավելին, Ստամբուլի կոնվենցիայի 16-րդ հոդվածի վերաբերյալ Եվրոպայի խորհրդի փաստաթղթում ներկայացված է առավել մանրամասն ուղեցույց ընտանեկան բռնության զոհ դարձած կանանց անվտանգության և բարեկեցության ապահովման վերաբերյալ:[69] Այն ենթադրում է բոլոր միջամտությունների ուղղորդումը զոհի անվտանգությանը՝ ապահովելով զուգընկերների հետ կապը՝ ծրագրի վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու նպատակով, ինչպես նաև իրականացնելով ռիսկերի համակարգված գնահատում և կառավարում:

67 Եվրոպայի խորհուրդ: (2011ա), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 2):
68 Եվրոպայի խորհուրդ: (2011ա), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 2):
69 Հեսթեր, Մ. և Լիլլի, Ս. Ջ. (2014թ.), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 5):

Զուգընկերների հետ կապը

Ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի համատեքստում «զուգընկերների հետ կապը» եզրույթը սովորաբար վերաբերում է այն մասնագետներին, որոնք կապ են հաստատում ընտանեկան բռնության զոհերի հետ՝ նրանց անվտանգությունը գնահատելու, ծրագրի վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու և նրանց աջակցությունից օգտվելն ապահովելու համար: Զուգընկերների հետ կապը կարող է ապահովվել զոհերին ուղղված աջակցության մասնագիտացված ծառայությունների (օրինակ՝ կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների, ապաստանների, կանանց խորհրդատվություն տրամադրող կենտրոնների) միջոցով, որոնք համագործակցում են բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի հետ: Այն կարող է բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի շրջանակներում տրամադրվել նաև հատուկ մասնագետների կամ կազմակերպության ստորաբաժանումների կողմից:

Թեև բռնություն գործադրող անձանց հետ ամբողջ միջամտության ընթացքում առաջնահերթություն պետք է տրվի զոհի անվտանգությանը, այնուամենայնիվ, առկա է զոհի անվտանգությանը միտված գործելակերպի երկու հիմնական տարր՝

1) զուգընկերների հետ կապ ապահովող ծառայությունների առկայությունը՝ բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի և զուգընկերների հետ կապ ապահովող ծառայությունների գործառույթների ու պարտականությունների վերաբերյալ հստակ ընթացակարգերով և նրանց միջև տեղեկությունների փոխանակմամբ, այդ թվում՝ զոհերին աջակցության ուղղորդմամբ, և 2) Ստամբուլի կոնվենցիայի 51-րդ հոդվածին համապատասխան ռիսկերի համակարգված գնահատման և կառավարման իրականացում:

Զուգընկերների հետ կապ ապահովող ծառայությունների դերակատարությունն է ապահովել, որ (նախկին) զուգընկերների կողմից բռնության ենթարկված անձինք տեղեկացված լինեն ծրագրի մասնակցության մասին, որ ռիսկերը լինեն համարժեք գնահատված և կառավարված, որ զոհերին առաջարկվի աջակցություն, որը կարող է ներառել նրանց համապատասխան աջակցություն ցուցաբերող ծառայություններ ուղղորդելը: Զուգընկերների հետ կապ ապահովող ծառայություններից կարող են օգտվել ծառայություններից իրենց նախաձեռնությամբ օգտվելու համար բռնության վտանգի տակ գտնվող բոլոր կին զուգընկերները կամ նախկին զուգընկերները:

Սույն ուսումնասիրության շրջանակներում իրականացված հարցման և հարցազրույցների արդյունքներն արժեքավոր տեղեկություններ են տալիս նրա մասին, թե որքանով են զոհերի անվտանգությանն ուղղված այդ գործելակերպերն իրականացվում ծրագիր տրամադրողների կողմից: Արդյունքները ցույց են տալիս, որ թեև ծրագրերի մեծ մասը պնդում է, որ զոհերին ինչ-որ ձևով աջակցություն ցուցաբերվում է, այնուամենայնիվ, զոհերի անվտանգությունն ապահովելու համար ձեռնարկված հիմնական գործողություններում առկա են լուրջ թերություններ:

Հիմնական թերություններն ամփոփ հետևյալն են՝

- Բռնություն գործադրող անձանց ուղղված շատ ծրագրեր զոհերի հետ կանոնավոր կապ չեն հաստատում և (կամ) չեն պահպանում: Ծրագրերը պետք է ապահովեն, որ բռնության զոհ դարձած կանանց առաջարկվի զուգընկերների հետ կապ ապահովող ծառայություններ: Բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի եվրոպական չափանիշների[70] և Փաունցի[71] համաձայն՝ ծրագրի ընթացքում զոհերի հետ բոլոր կապերը պետք է լինեն կամավոր և շարունակական՝ հաշվի առնելով առանձին ռիսկերի դինամիկ բնույթը: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի 70.4%-ը կին զոհերի հետ կապ են հաստատում իրենց միջամտության սկզբնական փուլերում, իսկ գրեթե 30%-ը՝ ոչ: Ավելին, ծրագրերի միայն մոտ կեսն է միջամտության ընթացքում (48.1%) կամ ծրագրի ավարտին (51.9%) կապ պահպանում զոհերի հետ: Սա ենթադրում է, որ բռնություն գործադրող անձանց ուղղված շատ ծրագրեր նախնական զրույցներից հետո զոհերի հետ կապ չեն պահպանում, ինչը

70 WWP EN [Ընտանեկան բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի հարցերով եվրոպական ցանց]: (2023թ.), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 6):

71 WWP EN [Ընտանեկան բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի հարցերով եվրոպական ցանց]: (Չթվագրված): *Ո՞վ պետք է տրամադրի զոհերին ցուցաբերվող աջակցության ծառայություններ. Բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի և կանանց աջակցման ծառայությունների միջև համագործակցության փաստաթղթերի և աշխատանքային փաստաթղթերի ուսումնասիրություն:* WWP EN: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ www.work-with-perpetrators.eu/fileadmin/WWP_Network/redakteure/Resources/Expert_Papers/FINAL_WWP_EN_Paper_on_Collaboration_Between_DVPP_and_WSS.pdf:

կարող է ազդել նրանց անվտանգության վրա, և ինչը խաթարում է ծրագրերի՝ ռիսկերի շարունակական գնահատում և կառավարում իրականացնելու կարողությունը: Դրական արդյունքն այն է, որ ծրագրերի երկու երրորդը (63.0%) կապ է հաստատում զոհերի հետ, եթե բռնություն գործադրող անձը դուրս է գալիս ծրագրից: Թեև դա հուսադրող է զոհերի անվտանգության վերաբերյալ իրազեկվածության առումով, այնուամենայնիվ, տվյալները ցույց են տալիս, որ արձագանքող ծրագրերի մեկ երրորդը չի հետևում այդ մոտեցմանը,

- զոհերի հետ կապ հաստատելիս զուգընկերների հետ կապ ապահովող որոշ ծառայություններ նրանց չեն տրամադրում համապատասխան տեղեկություններ: Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ մեծամասնությունը զոհերին տեղեկացնում է բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրի և դրա բովանդակության (72.0%), ինչպես նաև դրա սահմանափակումների (72.0%) մասին: Սա ենթադրում է, որ ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված՝ ուսումնասիրված ծրագրերի մոտավորապես 30%-ն այս խնդիրները չի հասցեագրում զուգընկերների հետ կապի ժամանակ՝ բաց թողնելով ծառայությունների մատուցման գործընթացում առաջացող հնարավոր ռիսկերը մեղմելու հնարավորությունը, ինչպիսիք են զոհերի անվտանգության կեղծ զգացումը կամ բռնություն գործադրող անձի կողմից ծրագրի հնարավոր մանիպուլյատիվ օգտագործումը,

> **Խոստումնալից գործելակերպերը**
>
> Շոտլանդիայում Կալեդոնյան համակարգն ունի եզակի կառուցածք, որը ենթադրում է ընտանեկան բռնություն գործադրող տղամարդկանց ուղղված ծրագրերի, կին զոհերին և երեխաներին աջակցություն ցուցաբերող ծառայությունների ինտեգրումը: Ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերը շեշտադրում են կին և երեխա զոհերի անվտանգությունն ու բարեկեցությունը:
>
> Գերմանիայի, Իտալիայի, Սերբիայի և Միացյալ Թագավորության ծրագրերի ապահովողների ցանցերի կողմից մշակված՝ գործող չափանիշների համաձայն՝ ծրագրերը չեն կարող իրականացվել առանց զուգընկերների հետ կապ ապահովող ծառայության հետ համագործակցության: Բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի և զուգընկերների հետ կապ ապահովող ծառայությունների միջև համագործակցությունը հստակորեն սահմանված է, ինչպես նաև ուրվագծված են փոխադարձ գործառույթները, պարտականությունները և տեղեկությունների փոխանակումը: Ավելին, ռիսկերի գնահատումը և կառավարումը հանդիսանում են ծրագրերի անբաժանելի մասը, որոնք շարունակաբար իրականացվում են յուրաքանչյուր հաճախորդի համար, այդ թվում՝ բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի և զուգընկերների հետ կապ ապահովող ծառայությունների միջև համագործակցության միջոցով:

- բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի և զուգընկերների հետ կապ ապահովող ծրագրերի միջև համագործակցությունն ու տեղեկությունների փոխանակումը չեն իրականացվում հստակ կառուցվածքով և կանոնավորությամբ: Բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի միայն 5.0%-ն է նշել զուգընկերների հետ կապ ապահովող ծառայությունների մատուցմամբ զբաղվող կազմակերպությունների և անձանց հետ կանոնավոր հանդիպումներ ունենալու մասին, մինչդեռ ընդամենը 35.0%-ն ունի իրենց համագործակցությունը սահմանող արձանագրություններ,

- բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերը համակարգված կերպով չեն գնահատում և կառավարում ռիսկերը, ինչպես նաև այս առումով չեն համագործակցում զուգընկերների հետ կապ ապահովող ծառայությունների հետ: Հարցմանն արձագանքող ծրագրերի երկու երրորդը նշել է ռիսկերի գնահատման ստանդարտացված ընթացակարգերի (67.9%), ինչպես նաև ռիսկերի գնահատման հատուկ գործիքների կիրառման մասին (68.0%): Սա ենթադրում է, որ բռնություն գործադրող անձանց ուղղված՝ ուսումնասիրված ծրագրերի մեկ երրորդը չի որդեգրում այդ մոտեցումը: Ավելին, բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի 25%-ը ռիսկերը գնահատելու համար զոհերից տեղեկություններ չի հավաքագրում, և բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի միայն 28.6%-ն է համագործակցում զուգընկերների հետ կապ ապահովող ծառայությունների հետ՝ յուրաքանչյուր դեպքում ռիսկը գնահատելու համար: Հաշվի առնելով, որ ընտանեկան բռնության ոլորտում աշխատելը ենթադրում է լուրջ վնասի շարունակական և դինամիկ ռիսկի կամ մահվան ելքի դեմ պայքար՝ անչափ կարևոր է, որ բոլոր միջամտությունները, այդ թվում՝ բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերն ունենան ապացույցների և լավագույն գործելակերպերի վրա հիմնված

ընթացակարգեր և գործիքներ: Ավելին, հետազոտությունը ցույց է տալիս, որ զոհի կողմից իր անվտանգության ընկալումը զգալիորեն ազդում է ռիսկերի ճիշտ գնահատման վրա, ինչը պետք է հաշվի առնել:[72]

Թեև բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի զգալի մասը պարբերաբար տեղեկություններ է հավաքագրում երեխաների անվտանգության վերաբերյալ (64.3%), այնուամենայնիվ, հարցման արդյունքները ցույց են տալիս, որ դրանց մոտ մեկ երրորդը նման գործունեություն չի իրականացնում: Հարցազրույցների ընթացքում պարզվել է, որ ծրագրերը հաճախ կանգնում են երեխաների անվտանգությանն ակտիվորեն նպաստելու դժվարությունների, այդ թվում՝ երեխաների պաշտպանությամբ զբաղվող գերատեսչությունների հետ համագործակցության կամ երեխաների գործերով դատական վարույթներում բռնություն գործադրող անձանց՝ իրենց կողմից գործադրված բռնության համար պատասխանատվության ենթարկելուն նպաստելու մարտահրավերների առջև: Բացի դրանից, բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի համատեքստում երեխաների անվտանգության հարցը հասցեագրելու համար կարող է լինել գիտելիքների և կոմպետենտության պակաս:

Հարցման և հարցազրույցների արդյունքները ցույց են տալիս լրացուցիչ ուղղորդման և կարողությունների զարգացման անհրաժեշտություն, հատկապես զուգընկերների հետ համապատասխան կապի ապահովման, բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի և զուգընկերների հետ կապ ապահովող ծառայությունների միջև համագործակցության, ինչպես նաև ռիսկերի գնահատման և կառավարման ոլորտներում: Բռնություն գործադրող անձանց ուղղված որոշ ծրագրերը նշել են իրենց ծրագրերի և կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների միջև վստահության պակասի մասին, ինչը խոչընդոտ է արդյունավետ համագործակցության համար: Մի շարք կողմերի վերաբերյալ ԳՐԵՎԻՈ-ի ելակետային գնահատման զեկույցներում նշվել են բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի և զոհերին աջակցություն ցուցաբերող ծառայությունների միջև արդյունավետ համագործակցության լրացուցիչ մարտահրավերների մասին:[73]

Սույն ուսումնասիրության նպատակով իրականացված հարցման և հարցազրույցների արդյունքները համապատասխանում են ԳՐԵՎԻՈ-ի կողմից վերհանված հիմնական մարտահրավերների հետ: Առավել կոնկրետ, ԳՐԵՎԻՈ-ի՝ մինչ օրս հրապարակված ելակետային գնահատման գրեթե բոլոր զեկույցներում դիտարկվել են զոհակենտրոն մոտեցման ապահովման և մասնագիտացված աջակցություն ցուցաբերող ծառայությունների հետ համագործակցության թերություններ: Նույն կերպ, նմանատիպ թերություններ վերհանվել են Արևմտյան Բալկաններում[74] և Արևելյան գործընկերության երկրներում[75] բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի քարտեզագրման վարժանքների միջոցով:

72 ՄըքԳինն, Թ., Թեյլոր, ԲԲ., Թեյլոր, Մ., և ՄըքՔոլգան, Մ. (2021թ.): Բռնություն գործադրող անձանց՝ վարքագծի փոփոխմանն ուղղված ծրագրերի վերաբերյալ ընտանեկան բռնություն վերապրած անձանց տեսակետների որակական ուսումնասիրությունը: Միջանձնային հարաբերություններում գործադրվող բռնության վերաբերյալ ամսագիր, *36(17-18)*, 9364-9390: https://doi. org/10.1177/0886260519855663:

73 Եվրոպայի խորհուրդ: (2020է), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 52, տե՛ս պարբերություններ 111 և 112):

74 Եվրոպայի խորհուրդ: (2022բ), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 7):

75 Յովանովիչ, Ս. և այլք: (2022թ.), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 9):

Ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի միջոցով զոհերի անվտանգության ապահովման վերաբերյալ առաջարկություններ

Բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի հիմնական նպատակը զոհերի, մասնավորապես՝ կանանց և երեխաների անվտանգությունն ու բարեկեցությունն ապահովելն է, ինչը պետք է ուղղորդի նրանց միջամտության և գործողությունների յուրաքանչյուր հայեցակետը: Մի շարք տարրեր նպաստում են բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի համատեքստում զոհերի անվտանգությանը:

Նախևառաջ՝ բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերը պետք է ներգրավեն զուգընկերների հետ կապ ապահովող ծառայությունների: Լավագույն տարբերակը կլինի այն, որ զուգընկերների հետ կապն ապահովվի զոհերին աջակցություն ցուցաբերող մասնագիտացված ծառայությունների հետ գործընկերությունների միջոցով, որոնք զոհերին տրամադրում են համապարփակ ծառայություններ: Եթե դա հնարավոր չէ, ապա բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերը պետք է հիմնեն զուգընկերների հետ կապ ապահովող ծառայություններ: Այն դեպքերում, երբ բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագիրը տրամադրվում է զոհերին աջակցություն ցուցաբերող մասնագիտացված ծառայության կողմից, այդ ծառայությունը կարող է ապահովել զուգընկերների հետ կապը: Այդ դեպքերում կարևոր է, որ համագործակցությունը և տեղեկությունների փոխանակումը հստակորեն սահմանվեն ներքին ընթացակարգերի միջոցով:

Բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերը զուգընկերների հետ կապ ապահովող ծառայություններ մատուցող կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ պետք է իրականացնեն ռիսկերի շարունակական գնահատում և կառավարում: Այդ նպատակով նրանք պետք է ինտեգրեն ինչպես հաստատուն, այնպես էլ դինամիկ գործոնները՝ կենտրոնանալով բռնություն գործադրող անձի հետ կապված ռիսկի գործոնների, զոհերի խոցելիության և ծառայությունների մատուցման գործընթացում առաջացող ռիսկերի վրա: Ռիսկերի գնահատման և կառավարման գործընթացում պետք է կիրառվեն փաստերի վրա հիմնված գործիքներ և ընթացակարգեր:

Բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի և զուգընկերների հետ կապ ապահովող ծառայությունների միջև համագործակցության ժամանակ այդ ծրագրերը պետք է հստակ պատկերացում ունենան տեղեկությունների փոխանակման համար ստեղծված շրջանակի մասին, այդ թվում՝ վարեն կանոնավոր հանդիպումներ, որոնց հաճախականությունը կարող է ավելանալ՝ կախված ռիսկի մակարդակից: Ավելին, զոհերի հետ կապի սկզբունքները, ինչպիսիք են զոհերի մասնակցության կամավոր բնույթը և ծրագրի վերաբերյալ ստացվելիք տեղեկությունների տեսակը (օրինակ՝ հասցեագրելով զոհերի հույսերն ու վախերը և տեղեկացնելով նրան այդ ծրագրերի բովանդակության, սահմանափակումների, ինչպես նաև դրանց հնարավոր մանիպուլյատիվ օգտագործման մասին) պետք է հստակ սահմանված լինեն:

1.4. Ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի

Մոտեցումը

Ինչպես նշված է Ստամբուլի կոնվենցիայի բացատրական զեկույցում, կանխարգելիչ միջամտության և ռեաբիլիտացման ծրագրերը պետք է խրախուսեն բռնություն գործադրող անձանց ստանձնել իրենց գործողությունների համար պատասխանատվություն և վիճարկել կանանց նկատմամբ ունեցած իրենց բացասական վերաբերմունքներն ու համոզմունքները:[76] Սա պահանջում է տեսական լայն շրջանակների, ինչպես օրինակ՝ էկոլոգիական մոդելի միջոցով բռնության մասին պատկերացումների ձևավորում, որն ընդգրկում է բռնություն գործադրող անձանց նկատմամբ դրանց միջամտության մեջ հասարակական, ինստիտուցիոնալ, համայնքային և անհատական մակարդակների որոշիչ գործոնները:[77] Թեև բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերը բռնության խնդիրն առաջին հերթին հասցեագրում են անհատական մակարդակում՝ աշխատելով բռնություն գործադրող անձի հետ, այնուամենայնիվ,

76 Եվրոպայի խորհուրդ: (2011ա), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 2, տե՛ս պարբերություն 104):
77 Հեսթեր, Մ. և Լիլլի, Ս. Ջ. (2014թ.), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 5):

ծրագրերի համար կարևոր է բոլոր մակարդակներում ինտեգրել նպաստող բարդ գործոնները: Օրինակ, թեև բռնություն գործադրող անձանց նկատմամբ միջամտությունները կենտրոնանում են անհատի պատասխանատվության և համոզմունքների վրա, այնուամենայնիվ, գենդերային անհավասարությունների և ուժերի անհավասարակշռության վերաբերյալ բռնություն գործադրող անձանց տեղեկացվածությունն անչափ կարևոր է: Սա ընդգծում է բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի գենդերազգայուն լինելու կարևորությունը՝ նպատակ ունենալով խթանել գենդերային հավասարությունը և կանանց իրավունքների ու հնարավորությունների ընդլայնումը՝ միևնույն ժամանակ վերացնելով վնասակար սոցիալական նորմերը՝ Ստամբուլի կոնվենցիայի 6-րդ և 12-րդ հոդվածներին համապատասխան:

Թեև Եվրոպայում ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված շատ ծրագրեր որդեգրում են գենդերազգայուն մոտեցում, այնուամենայնիվ, այն շարունակում է մարտահրավեր մնալ մեծ թվով երկրներում: ԳՐԵՎԻՈ-ն մտահոգություն է հայտնել ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի մշակման ու իրականացման հարցում գենդերազգայուն մոտեցման բացակայության կապակցությամբ: Հատկանշական է, որ Նիդեռլանդների վերաբերյալ ԳՐԵՎԻՈ-ն նշել է, որ ընտանեկան բռնությունը հասկանալու համար ծրագրերի մեծ մասը որդեգրում է գենդերային առումով չեզոք մոտեցում:[78] Արևմտյան Բալկանների[79] և Արևելյան Եվրոպայի մի շարք ծրագրերում վերհանվել են նաև բռնություն գործադրող անձանց նկատմամբ գենդերազգայուն միջամտությունների իրականացման հետ կապված մարտահրավերներ:[80] Եվրոպայում ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի անձնակազմի անդամների շրջանում իրականացված հարցման և հարցազրույցների արդյունքների համաձայն՝ այդ ծրագրերի միայն 64%-ն է իր մոտեցումը բնութագրում որպես գենդերազգայուն:

Բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերը պետք է ապահովեն, որ բռնություն գործադրող անձինք իրենց վարքագծի համար ենթարկվեն պատասխանատվության, և որ նրանք իրենց բռնության արարքների համար ստանձնեն ամբողջ պատասխանատվությունը: Միևնույն ժամանակ, ծրագրերը պետք է բռնություն գործադրող անձանց վերաբերվեն հարգանքով և զարգացնեն պրոֆեսիոնալ հարաբերություններ՝ դրական արդյունքի հավանականությունը մեծացնելու համար: Բազմաթիվ ապացույցներ կան, որ մոտիվացիոն հարցազրույցներ անցկացնելու ռազմավարությունները դրական են ազդում բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի արդյունքների վրա:[81] Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մոտիվացիոն հարցազրույցների ինտեգրումը, մոտեցում, որը շեշտադրում է փոխվելու անձնական մոտիվացիայի ամրապնդումը, կարող է բարձրացնել ծրագրի արդյունավետությունը և նվազեցնել ծրագրից դուրս գալու ցուցանիշները:

Նույն կերպ, ծրագրերը պետք է առաջնահերթություն տան իրենց ծառայությունների լայն հասանելիությանը՝ որդեգրելով տարբեր մշակութային և սոցիալական նախադրյալները հաշվի առնող մշակութազգայուն մոտեցումը: Այս առումով Ստամբուլի կոնվենցիայի բացատրական զեկույցով նախատեսվում է, որ բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերը պետք է իրականացվեն հմուտ և վերապատրաստված համակարգողների կողմից, որոնք «*ունեն անհրաժեշտ մշակութային և լեզվական հմտություններ, ինչը նրանց հնարավորություն կտա աշխատել նման ծրագրերին մասնակցող տղամարդկանց լայն շերտերի հետ*»:[82]

Բովանդակությունը

Թեև Եվրոպայի տարբեր երկրներում ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերն ունեն տարբեր բովանդակություն, այնուամենայնիվ, ուսումնական պլանում պետք է ներառվեն որոշ էական թեմաներ՝ բռնությունը որպես գենդերային հիմքով երևույթ արդյունավետորեն հասցեագրելու համար: Բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերը

78 Եվրոպայի խորհուրդ: (2020), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 53, պարբերություն 106):
79 Յովանովիչ, Ս. և Վալլ, Բ. (2022թ.), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 8):
80 Յովանովիչ, Ս. և այլք (2022թ.), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 9):
81 Կունյա, Օ., Կատարինա, Տ., Ալմեյդա, Աբրունհոսա, Ռ. և Կարիդադ, Ս. (2023թ): Մոտիվացիոն հարցազրույցի տեխնիկաների արդյունավետությունը սեռական զուգընկերոջ նկատմամբ բռնություն գործադրող անձանց հետ. ոչ պատահական կլինիկական փորձարկում: *Ագրեսիայի, վատ վերաբերմունքի և տրավմաների տեսակների վերաբերյալ ամսագիր*: 1-20: https://doi.org/10.1080/10926771.2023.2189043, Փինթո ե Սիլվա, Տ., Կունհա, Օ. և Կարդիդադ, Ս. (2023թ.): Մոտիվացիոն հարցազրույցի տեխնիկաները և սեռական զուգընկերոջ նկատմամբ բռնություն գործադրող անձանց ուղղված միջամտության ծրագրերի արդյունավետությունը. համակարգված ուսումնասիրությունը: *Տրավմա, բռնություն և բռնարարք*, *24(4)*, 2691-2710: https://doi.org/10.1177/15248380221111472, Ռոմերո-Մարտինեզ, Ա., Լիլա, Մ., Գրասիա, Ե. և Մոյա-Ալբիոլ, Լ. (2019թ.): Ծեծողներին ուղղված միջամտության ծրագրերում մոտիվացիոն ռազմավարություններով ապրումակցման բարելավում. պատահական վերահսկվող փորձարկման արդյունքներ: *Կլինիկական հոգեբանության բրիտանական ամսագիր*, *58(2)*, 125-139: https://doi.org/10.1111/bjc.12204:
82 Եվրոպայի խորհուրդ: (2011ա), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 2, տե՛ս պարբերություն 104):

պետք է կենտրոնանան ընտանեկան բռնության բոլոր ձևերի վրա, որոնք կարող են կիրառվել բռնություն գործադրող անձանց կողմից, այդ թվում՝ հարկադրական, մանիպուլյատիվ և բռնացող վարքագծի բոլոր տեսակների վրա: Սա ներառում է ոչ միայն ֆիզիկական և սեռական բռնությունը, այլև պետք է տարածվի նաև հարկադրական վարքագծի և հոգեբանական բռնության, այդ թվում՝ առցանց և տեխնոլոգիաների կիրառման միջոցով դրսևորվող նման վարքագծի վրա:[83] Հավասարապես կարևոր է հասցեագրել այն հարցը, որ գնալով ավելանում է բռնություն գործադրող անձանց կողմից հարուցվող ընտանեկան գործերով վարույթը[84] և այլ դատավարությունները[85]՝ որպես բռնարարքը շարունակելու միջոց:[86] Ավելին, այդ ծրագրերը պետք է կենտրոնանան զոհի և բռնություն գործադրող անձի միջև ուժի անհավասար դինամիկայի վրա և ընդունեն ընտանեկան բռնությունը որպես զոհին վերահսկելու վարքագծի օրինակ: Աշխատանքի լրացուցիչ հիմնական տարրը գենդերային վնասակար կարծրատիպերի վերացումն է: Սույն ուսումնասիրության շրջանակներում իրականացված հարցման և հարցազրույցների արդյունքների համաձայն՝ ուսումնասիրված ծրագրերի միայն 51.6%-ն ունի հատուկ հանդիպումներ կամ մոդուլներ, որոնք կենտրոնանում են գենդերային դերերի, կարծրատիպերի, առնականության և այն հանգամանքի վրա, թե ինչպես են այդ հասկացությունները հարաբերվում կանանց նկատմամբ բռնության հետ: Մնացած շատ ծրագրեր նշում են, որ գենդերային կարծրատիպերի և առնականության թեման հասցեագրված է՝ անկախ հատուկ հանդիպումներ չկազմակերպելու հանգամանքից, քանի որ այդ թեման բնականոն կերպով արծարծվում է նրանց զրույցներում: Այնուամենայնիվ, յուրաքանչյուր դեպքում համակարգված հանդիպումները կապահովեին այս կարևորագույն հարցերի հետևողական և մանրամասն ուսումնասիրությունը:

Նույնքան կարևոր է, որ բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերը հասցեագրեն ընտանեկան բռնության իրավիճակներում ապրող երեխաների տեսանկյունը՝ որպես ստանդարտ բաղադրիչ: Թե՛ զոհ, թե՛ վկա հանդիսացող երեխաների վրա այդ ուշադրությունը կարևոր է՝ հաշվի առնելով նրանց վրա այդ բռնության ծանր և տևական հետևանքները: Ալդերսոնի, Ուեսթմարլենդի և Քելլիի կողմից իրականացված ուսումնասիրությունը ցույց է տվել, որ բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի դրական արդյունքները երեխաների վրա ունեն մի քանի ուղղություններ՝ հոր վարքագծի փոփոխություններ, որոնք օգուտ են բերում երեխաներին (ընտանեկան բռնությունը դադարեցնելու կամ նվազեցնելու միջոցով), երեխա-հայր հարաբերությունների փոփոխություններ (բարելավված հարաբերություններ՝ ծնողավարության բարելավված հմտությունների միջոցով) և երեխայի վարքագծի (հուզական, կոգնիտիվ և այլ վարքագծի) փոփոխություններ:[87] Բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերում երեխաների կարիքների վրա կենտրոնանալը կարող է նույնպես դրական ազդեցություն ունենալ բռնություն գործադրող անձի ներգրավվածության և միջամտության արդյունքի վրա: Երեխաները և վերջիններիս բարեկեցությունը հաճախ այն հիմնական ներքին մոտիվացիաներն են, որոնք օգնում են տղամարդկանց փոխել իրենց վարքագիծը:[88]

Հարցման և հարցազրույցների արդյունքները հաստատում են, որ ավելի լավ ծնողավարման հմտություններ ունենալու ցանկությունը և երեխաների հանդեպ հոգածությունը բռնություն գործադրող անձանց համար փոխվելու հիմնական մոտիվացիաներն են: Բացի դրանից, բռնություն գործադրող անձանց ուղղված՝ ուսումնասիրված ծրագրերի 65.4%-ում առկա էին երեխաների նկատմամբ բռնության ազդեցությունը հասցեագրող՝ հատուկ հանդիպումներ կամ մոդուլներ, ինչպես նաև անվտանգ ու ներգրավված հայրության և երեխայի զարգացման ռազմավարություններ: Այնուամենայնիվ, ծրագրերի 29.6%-ը նշում է, որ այդ թեմաներն

83 Հեսթեր, Մ. և Լիլլի, Ս. Ջ. (2014թ.), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 5):

84 Էլիզաբեթ, Վ. (2017թ.) Խնամակալության հարցերի շուրջ հետամտում. բաժանումից հետո մայրերին հարկադրաբար վերահսկելու մեխանիզմ: *«Ֆեմինիստական իրավական ուսումնասիրություններ» 25-րդ ամսագիր*, 185ՎՆ201: https://doi.org/10.1007/s10691-017-9349-9:

85 Գուտովսկի, Ե. Ռ., Գուդմեն, Լ.Ա: Հարկադիր հսկողությունը դատարանի նիստերի դահլիճում. իրավական չարաշահումների սանդղակը (ԻՉՍ): *Ջ Ֆեմ Վիոլ* 38, 527ՎՆ542 (2023թ.): https://doi.org/10.1007/s10896-022-00408-3:

86 Ալսալեմ, Ռ. (2023թ.): Խնամակալություն, կանանց և երեխաների նկատմամբ բռնություն: *Կանանց և աղջիկների նկատմամբ բռնության, դրա պատճառների և հետևանքների մասին հատուկ զեկուցողի զեկույց:* Միավորված ազգերի կազմակերպություն: www.ohchr.org/en/documents/thematic-reports/ ahrc5336-custody-violence-against-women-and-violence-against-children:

87 Ալդերսոն, Ս., Ուեսթմարլենդ, Ն. և Քելլի, Լ. (2013թ.): Ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերում ներգրավված տղամարդկանց երեխաների նկատմամբ պատասխանատվության և նրանց աջակցման անհրաժեշտություն: *Երեխաների նկատմամբ բռնարարքների վերաբերյալ ամսագիր*, 22(3), 182-193: https://doi.org/10.1002/car.2223:

88 Դի Նապոլի, Ի., Պրոսենտեզ, Ֆ., Կարնեվալ, Ս., Էսպոսիտո, Ս., և Արչիդիանկոնո, Ս. (2019թ.): Սեռական զուգընկերոջ նկատմամբ բռնության (ՍԶԲ) դադարեցումը և վտանգի տակ գտնվող տղամարդկանց տեղորոշումը. էկոլոգիական մոտեցում. *Բնապահպանական հետազոտությունների և հանրային առողջապահության միջազգային ամսագիր, 16(9),* 1652: https://doi. org/10.3390/ijerph16091652, Հենդերսոն, Ա. Ֆ., և Արենա, Ջ. Ս. (2004թ.): *Հայրությունը բռնության գործադրումից հետո. ուսումնական ուղեցույցներ և գործիքներ ծեծողներին ուղղված միջամտության ծրագրերի համար:* Հայրություն: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ www.futureswithoutviolence.org/userfiles/file/Children_and_Families/ FAV%20Guidelines%202011.pdf:

ինքնաբուխ կերպով արծարծվում են զրույցների ընթացքում, ինչը մտահոգություն է առաջացնում ստանդարտացված մոտեցման բացակայության առումով:

Գենդերային հիմքով բռնության, այդ թվում՝ ընտանեկան բռնության թվային ուղղվածությունը գնալով ընդլայնվում է: ԳՐԵՎՈ-ի թիվ 1 ընդհանուր առաջարկությամբ սահմանվում է կանանց նկատմամբ բռնության թվային ուղղվածությունը որպես կանանց և աղջիկների նկատմամբ բռնությունների մաս, որը «ներառում է կանանց և աղջիկների նկատմամբ իրականացվող վնասակար վարքագծի թե՛ առցանց հայեցակետերը (համացանցում կատարված գործողությունները և հասանելի տվյալները, այդ թվում՝ մակերեսային ցանցի, ինչպես նաև թաքնված ցանցի համացանցային միջնորդները) և թե՛ տեխնոլոգիաների օգտագործմամբ (տեխնոլոգիական և հաղորդակցության սարքավորումների, այդ թվում՝ ծրագրաշարի և ծրագրային ապահովման կիրառմամբ իրականացվող գործողությունները) հայեցակետերը»:[89] Կանանց նկատմամբ խտրականության և բռնության հարցերով անկախ փորձագիտական մեխանիզմների հարթակը (EDVAW հարթակ), որն ընդգրկում է Միավորված ազգերի կազմակերպության յոթ և կանանց իրավունքների հարցերով տարածաշրջանային անկախ փորձագիտական մեխանիզմներ, այդ թվում՝ ԳՐԵՎԻՈ-ն ընդունել է նմանատիպ սահմանում:[90] «Economist Intelligence Unit» հետազոտավերլուծական բաժնի կողմից իրականացված ուսումնասիրությունը ցույց է տվել, որ Եվրոպայում կանանց 74%-ը ենթարկվել կամ ականատես է եղել առցանց և տեխնոլոգիաների օգտագործմամբ գործադրվող բռնության որոշ ձևերի:[91] ԳՐԵՎԻՈ-ն և EDVAW հարթակն ընդգծել են բռնության թվային ուղղվածության ծանր հետևանքները, որը կարող է հանգեցնել ֆիզիկական, հոգեբանական և տնտեսական վնասների, հարաբերությունների վատթարացման վնասի, կրկնակի վիկտիմիզացիայի ու համապարփակ վնասի:[92]

Խոստումնալից գործելակերպեր

Իտալիայում «Centro di Ascolto Uomini Maltrattanti» (CAM) և «Una asa per l'Uomo» հասարակական կազմակերպությունները բռնության թվային ուղղվածությունը ներառել են բռնություն գործադրող անձանց հետ իրենց աշխատանքում, ինչպես նաև զուգընկերների հետ իրենց միջամտությունների մեջ: Նրանք մշակել են ընթացակարգեր (օրինակ՝ հետամտման համար նախատեսված հավելվածը հայտնաբերելու և անվտանգ հեռացնելու ընթացակարգեր)՝ առցանց և տեխնոլոգիաների օգտագործմամբ բռնությունն իրենց ռիսկերի գնահատման և զոհերի պաշտպանության միջոցների մեջ ներառելու համար: Ավելին, այդ ՀԿ-ները թեման ընդգրկել են տղամարդկանց հետ իրենց խմբային աշխատանքի մեջ՝ ներկայացնելով առցանց և տեխնոլոգիաների օգտագործմամբ գործադրվող բռնությունը հարկադիր հսկողության պրիզմայի միջոցով:

«CAM» ՀԿ-ի մասնագետները մշակել են «Նույն բռնությունը, նոր գործիքներ. ինչպես աշխատել բռնի տղամարդկանց հետ կիբեռբռնության ուղղությամբ» վերնագրով ձեռնարկը, որը հրապարակվել է 2020 թվականին Ընտանեկան բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի հարցերով եվրոպական ցանցի կողմից: Ավելին, ռիսկերի գնահատումը և կառավարումը կազմում են յուրաքանչյուր հաճախորդի համար շարունակաբար իրականացվող ծրագրերի անբաժանելի մասը, այդ թվում՝ բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի և զուգընկերների հետ կապ ապահովող ծառայությունների միջև համագործակցության միջոցով:

Հաշվի առնելով կանանց և աղջիկների նկատմամբ գենդերային հիմքով բռնության թվային ուղղվածության ընդլայնվող շրջանակն ու հետևանքները՝ անհրաժեշտ է մշակել բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրեր՝ բռնության դրսևորումները բացահայտելու և վերացնելու համար: Սա, մասնավորապես, ներառում է առցանց և տեխնոլոգիաների օգտագործմամբ գործադրվող բռնության թեմաների ընդգրկումն իրենց ուսումնական պլաններում:

89 Եվրոպայի խորհուրդ: (2021ա). Կանանց նկատմամբ բռնության թվային ուղղվածության վերաբերյալ ԳՐԵՎԻՈ-ի թիվ 1 առաջարկություն: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/grevio-rec-no-on-digital-violence-against-women/1680a49147 (տե՛ս պարբերություն 21):

90 Եվրոպայի խորհուրդ: (2022գ): ,EDVAW հարթակի յոթ մեխանիզմների միջոցով հասցեագրված՝ կանանց նկատմամբ բռնության թվային ուղղվածությունը: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/thematic-report-on-the-digital-dimension-of-violence-against-women-as-/1680a933ae (տե՛ս էջ 8):

91 Կանանց նկատմամբ առցանց բռնություն: (2021թ.): *Կանանց նկատմամբ առցանց բռնության տարածվածության գնահատում:* ,The Economistե ամսագիր: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https:// onlineviolencewomen.eiu.com/:

92 Եվրոպայի խորհուրդ: (2021ա), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 89, տե՛ս էջ 10):

Ձևաչափը և տևողությունը

Բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի տևողությունը հաճախ պայմանավորված է այն իրավական կամ քաղաքականության շրջանակի հետ, որտեղ դրանք հիմնվել են, ինչպես նաև ֆինանսավորման հասանելի աղբյուրների հետ, սակայն շատ հաճախ նաև գենդերային հիմքով բռնության և մարդկանց փոխվելու տեսության ընկալման հետ: Հետազոտությունը ցույց է տալիս, որ խոր արմատավորված համոզմունքներում, ինչպես օրինակ՝ կանանց և աղջիկների նկատմամբ բացասական համոզմունքներում փոփոխությունների հասնելու համար անհրաժեշտ են ավելի երկար տևողությամբ միջամտություններ:[93] Ինչ վերաբերում է բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի նվազագույն տևողությանը՝ բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի եվրոպական չափանիշներով առաջարկվում է առնվազն 51 ժամ հատկացնել խմբային աշխատանքին կամ 27 ժամ՝ անհատական միջամտություններին, ինչը համարժեք է վեց ամիս տևողությամբ միջամտությանը:[94] Բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի առաջարկվող նվազագույն տևողությունը համընկնում է Միացյալ Թագավորության Ներքին գործերի նախարարության կողմից հրապարակված չափանիշներով ներկայացված շրջանակի հետ, որով նախատեսվում է 22 շաբաթ տևողությամբ ծրագիր:[95] Այդ չափանիշներով ընդգծվում են, որ ծրագրերի արդյունքները կախված են ոչ միայն դրանց տևողությունից, այլև հանդիպումների միջև ընկած ժամանակահատվածից, ինչը թույլ է տալիս բռնություն գործադրող անձանց ձեռք բերել և իրենց առօրյա կյանքում կիրառել նոր հմտություններ և համոզմունքներ:

Ինչ վերաբերում է ընտանեկան բռնություն գործադրող անձանց հետ միջամտության ձևաչափին՝ Եվրոպայում իրականացվող ծրագրերի շրջանակներում նախատեսվում են անհատական և խմբային հանդիպումներ կամ երկուսը միասին: Ընդունելով, որ կոնկրետ հանգամանքներում անհատական հանդիպումները կարող են լինել լավագույն կամ միակ տարբերակը (երբ առկա են լեզվական կամ այլ խոչընդոտներ կամ խմբային հանդիպումների համար բավարար թվով մասնակիցների առկայություն), այնուամենայնիվ, բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերում խմբային աշխատանքն ինտեգրելն ունի առավելություններ: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ խմբային հանդիպումները դրական ազդեցություն են ունենում մոտեցումներն ու համոզմունքները վիճարկելու և փոխելու, ինչպես նաև այնպիսի սոցիալապես ընդունելի վարքագիծ որդեգրելու վրա, ինչպիսիք են բռնության բացառումը և սեռական հարաբերություններում հավասարությունը:[96]

Տարբեր տեսակի բռնություն գործադրող անձինք

Թեև տարբեր տեսակի բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքում կան որոշ նմանություններ, օրինակ՝ բռնության ռիսկերի գնահատումը կամ ոչ բռնի հաղորդակցման հմտություններ սովորեցնելը, այնուամենայնիվ, յուրաքանչյուր տիպաբանություն պահանջում է համապատասխան մոտեցում:[97] Սույն ուսումնասիրության շրջանակներում իրականացված հարցման և հարցազրույցների արդյունքները ցույց են տալիս, որ ծրագրերի մեծ մասը հատուկ ստեղծված են կին զուգընկերների նկատմամբ բռնություն գործադրող տղամարդկանց հետ

93 Արսե, Ռ., Արիաս, Ե., Նովո, Մ., և Ֆարինա, Ֆ. (2020թ.): Արդյունավե՞տ են միջամտությունները ծեծողների հետ: Մետավերլուծական ակնարկ. *Հոգեսոցիալական միջամտություն*, 29(3), 153-164: https://doi.org/10.5093/pi2020a11:

94 WWP EN [Ընտանեկան բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի հարցերով եվրոպական ցանց]: (2023թ.), մեջբերված աշխատության մեջ, (ծանոթագրություն 6):

95 Քելլի, Լ. և Ուեստմարլենդ, Ն. (2023թ.), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 36):

96 Մըրֆի, Չ.Մ., Էկհարդ, Չ.Ի., Քլիֆֆորդ, Ջ.Մ., ԼաՄոտտ, Ա.Դ., Մեյս, Լ.Ա. (2020թ.): Խմբային հանդիպում, Զուգընկերոջ նկատմամբ բռնություն գործադրող տղամարդկանց համար անհատական և խմբային կոգնիտիվ-վարքային թերապիա. նախնական պատահական փորձարկում: *Միջանձնային բռնության վերաբերյալ ամսագիր*, *35(15-16)*, 2846-2868: https://doi.org/10.1177/0886260517705666:

97 Օգյուզտյուզյուն, Չ., Կոյուտուրկ, Մ. և Կարակուրտ, Գ. (2023թ.): Ֆիզիկական, հոգեբանական և սեռական զուգընկերոջ նկատմամբ գործադրվող սեռական բռնության ռեաբիլիտացման ծրագրերի արդյունավետության վերաբերյալ մետավերլուծությունների տվյալների համակարգված ուսումնասիրություն: *Հոգեսոցիալական միջամտություն*, *32(2)*, 59-68: https://doi. org/10.5093/pi2023a6, Արիաս, Ե., Արսե, Ռ. և Վիլարինո, Մ. (2013թ.): Ծեծողներին ուղղված միջամտության ծրագրեր. Արդյունավետության մետավերլուծությունների ուսումնասիրություն: *Հոգեսոցիալական միջամտություն*, 22(2), 153-160: https://doi. org/10.5093/in2013a18, Բաթթերս, Ռ. Փ., Դրուբեյ, Բ. Ա., Սիրայթ, Ջ. Լ., Տոլլեֆսոն, Դ. Ռ., Լունդալ, Բ. և Ուայթեյկեր, Լ. (2021թ.): Սեռական զուգընկերոջ նկատմամբ բռնություն գործադրող անձի ռեաբիլիտացում. միջամտությունների հարմարեցումն անհատական կարիքներին: *Կլինիկական, սոցիալական աշխատանքի վերաբերյալ ամսագիր*, *49*, 391-404: https://doi.org/10.1007/s10615-020-00763-y, Տրավերս, Ա., ՄըՔոնաղ, Թ., Քուննինգհեմ, Տ., Արմուր, Ս. և Հանսեն, Մ. (2021թ.): Սեռական զուգընկերոջ նկատմամբ բռնություն գործադրողների շրջանում ռեցիդիվիզմը կանխելու նպատակով իրականացվող միջամտությունների արդյունավետություն. համակարգված ուսումնասիրություն և մետավերլուծություն: *Կլինիկական հոգեբանության տեսություն*, *84*, 101974: https://doi.org/10.1016/j. cpr.2021.101974:

աշխատանքի համար, ինչը համահունչ է նախորդ արդյունքների հետ:[98] Այնուամենայնիվ, շատ ծրագրեր նշել են նաև, որ իրենք աշխատում են բռնություն գործադրող կանանց (64.3%), նույնասեռական հարաբերությունների մեջ բռնություն գործադրող անձանց (71.4%) կամ այլ հարաբերություններում բռնություն գործադրող անձանց հետ, օրինակ՝ երեխա-ծնող կամ ծնող-երեխա հարաբերություններում (60.7%): Բռնություն գործադրող անձանց ուղղված որոշ ծրագրեր ներկայումս չեն աշխատում բռնություն գործադրող անձանց այդ խմբերի հետ, սակայն հայտնել են նրանց հետ աշխատելու պատրաստակամություն, մինչդեռ մյուսները նշում են, որ հարմարեցնում են իրենց աշխատանքը՝ հաճախ առաջարկելով անհատական հանդիպումներ: Այնուամենայնիվ, որոշ ծրագրեր բռնություն գործադրող բոլոր անձանց ընդունում են նույն ծրագրում, որը, որպես կանոն, նախատեսված է սեռական զուգընկերոջ նկատմամբ բռնություն գործադրող տղամարդկանց համար: Ինչպես դիտարկվել է Մոլդովայի Հանրապետությունում, այդ մոտեցումը հանգեցրել է այնպիսի իրավիճակների, երբ ինքնապաշտպանության նպատակով գործող կին զոհերը համարվում են բռնություն գործադրող անձինք և ուղղորդվում են բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրեր:[99] Բացի դրանից, ինչպես նշված է ԳՐԵՎԻՈ-ի կողմից Խորվաթիայի վերաբերյալ իր ելակետային գնահատման զեկույցում, դա հանգեցնում է այնպիսի իրավիճակի, երբ բռնության զոհ դարձած կանայք իրենց բռնարարների հետ տեղավորվում են նույն խմբերում, ինչը հակասում է Ստամբուլի կոնվենցիայի 16-րդ հոդվածի պահանջներին:[100]

Սույն ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս նաև, որ անհրաժեշտ է զարգացնել ոչ միայն բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերն իրականացնող մասնագետների, այլև ուղղորդումների համար պատասխանատու շահագրգիռ կողմերի կարողությունները, որպեսզի նրանք առավել խոր պատկերացում ունենան բռնություն գործադրող անձանց, հատկապես բռնություն գործադրող կանանց տարբեր խմբերի ուրույն դինամիկայի և կարիքների մասին: Նույն կերպ, առկա է տարբեր թիրախային խմբերին ուղղված մասնագիտացված ծրագրերի մշակման անհրաժեշտություն: Բռնություն գործադրող կանանց հետ աշխատանքը պահանջում է մանրամասն և մասնագիտացված գնահատում, որը կարող է ներառել նախկինում պատճառված տրավմաների վրա կենտրոնանալու անհրաժեշտությունը, ինչպես դա արվում է որոշ դեպքերում:[101] Խորվաթիայում ԳՐԵՎԻՈ-ն ընդգծել է, որ գենդերային առումով չեզոք օրենքների և քաղաքականությունների պատճառով դատարանները շատ բռնություն գործադրող կանանց կարգադրում են մասնակցել ի սկզբանե ընտանեկան բռնություն գործադրող տղամարդկանց համար մշակված ռեաբիլիտացման ծրագրերին:[102]

98 Գելդշլիգեր, Հ., Գինես, Օ., Նաքս, Դ. և Փոնս, Ա. (2014թ.): *Բռնություն գործադրող անձանց ուղղված եվրոպական ծրագրերում արդյունքների գնահատում. հարցում:* Հասանելի է հետևյալ հղմամբ՝ www.work-with-perpetrators.eu/fileadmin/WWP_Network/redakteure/IMPACT/Daphne_III_Impact_-_Working_paper_1_-_Outcome_ Measurement_in_European_Perpetrator_Programs_-_A_Survey.pdf:

99 Յովանովիչ, Ս. և այլք (2022թ.), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 9):

100 Եվրոպայի խորհուրդ: (2023բ), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 30, տե՛ս պարբերություն 105):

101 ՄըքԿիի, Ս. Ա. և Հիլտոն, Ն. Զ. (2019թ.): Թմրանյութերի օգտագործումը՝ հետտրավմատիկ սթրեսային խանգարման և սեռական զուգընկերոջ նկատմամբ բռնությունից տրավմաների զուգակցմամբ. հետևանքները՝ բռնություն գործադրող կանանց ուղղված ծառայությունների համար: *Տրավմա, բռնություն և բռնարարք*, 20(3), 303-314: https://doi.org/10.1177/1524838017708782, Գրավես, Կ. Ն., Սեխրիստ, Ս. Մ., Ուայթ, Ջ. Ուայ. և Փերըդայզ, Մ. Ջ. (2005թ.): Ուսանող կանանց կողմից գործադրվող սեռական զուգընկերոջ նկատմամբ բռնությունը նախկինում տարած տրավմաների համատեքստում: *«Կանանց հոգեբանություն» եռամսյակային ամսագիր, 29(3),* 278-289: https://doi.org/10.1111/j.1471-6402.2005.00222.x:

102 Եվրոպայի խորհուրդ: (2023բ), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 30, տե՛ս պարբերություն 105):

Ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված որակյալ ծրագրեր մշակելու առաջարկություններ

Բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերը պետք է որդեգրեն էկոլոգիական մոդել՝ գենդերազգայուն մոտեցմամբ՝ հիմնված այն սկզբունքի վրա, որ բռնությունն անընդունելի ընտրություն է և բռնություն գործադրող անձի բացառիկ պատասխանատվությունն է: Շեշտը պետք է դնել բռնություն գործադրող անձանց՝ իրենց գործողությունների համար պատասխանատվություն ստանձնելուն օգնելու վրա՝ միևնույն ժամանակ նրանց վերաբերվելով հարգանքով և կիրառելով արդյունավետ ռազմավարություններ՝ փոխվելու մոտիվացիան մեծացնելու համար: Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ՝ ծրագրի ամփոփման ցուցանիշներն առավելագույնի հասցնելու համար: Բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերը պետք է կիրառեն մշակութազգայուն մոտեցում՝ ընդունման լայն մակարդակ ապահովելու համար:

Այդ ծրագրերի բովանդակության մեջ բռնության բոլոր ձևերը, այդ թվում՝ ֆիզիկական և սեռական բռնությունը, հարկադիր հսկողությունը և բռնության թվային ուղղվածությունները հասցեագրելն անչափ կարևոր է: Ստանդարտացված մոտեցում ապահովելու և առանցքային թեմաները (օրինակ՝ գենդերային կարծրատիպերի վրա աշխատելը, երեխաների վրա բռնության ազդեցությունը հասկանալը և հայրությունը) շեշտադրելու համար այդ առարկաները պետք է ընդգրկվեն ծրագրի ուսումնական պլանի հատուկ հանդիպումներում կամ մոդուլներում:

Թեև ծրագրերի տևողությունը տատանվում է՝ կախված համատեքստից և թիրախային խմբից, այնուամենայնիվ, առաջարկվում է, որ ծրագրերի տևողությունը լինի առնվազն վեց ամիս և իրականացվի ավելի երկար միջամտություն: Ծրագրի կառուցվածքի և կազմակերպչական ռեսուրսների վրա հիմնված ընդունման հստակ չափանիշները պետք է սահմանվեն ծրագրի կողմից և փոխանցվեն ուղղորդումների համար պատասխանատու մասնագետներին: Ավելին, ծրագրերը պետք է մշակեն տարբեր թիրախային խմբերի համար մասնագիտացված մոտեցումներ: Բռնություն գործադրող կանանց հետ աշխատելիս ծրագրերը պետք է ապահովեն, որ բռնություն գործադրող բոլոր կանայք անցնեն գնահատում, հաշվի առնելով նրանց նախկինում տարած հնարավոր տրավմաները, համապատասխանաբար հարմարեցնեն աշխատանքը և հարկ եղած դեպքում նրանց ուղղորդեն մասնագիտացված աջակցություն ցուցաբերող ծառայություններ:

1.5. Ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի ստուգացանկը

Հետևյալ ստուգացանկը նախատեսված է բռնություն գործադրող անձանց ուղղված արդյունավետ, զոհակենտրոն և անվտանգակենտրոն ծրագրեր նախաձեռնելու հարցում քաղաքականություն մշակողներին, կառավարություններին, միջազգային կազմակերպություններին և ծառայություններ մատուցողներին աջակցելու համար: Ավելին, ստուգացանկը կարող է օգնել բռնություն գործադրող անձանց ուղղված՝ գործող ծրագրերը և դրանց Ստամբուլի կոնվենցիայի դրույթներին համապատասխանությունը գնահատելու հարցում: Ստուգացանկում ամփոփված են ԳՐԵՎԻՈ-ի ելակետային գնահատման զեկույցներից և Եվրոպայում բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի առնչությամբ հետազոտություններից տեղեկություններ:

Ստուգացանկում ընդգրկված չափանիշները կիրառելի են ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ցանկացած տեսակի ծրագրի նկատմամբ՝ անկախ այն հանգամանքից, թե դրանք իրականացվում են բանտում, պրոբացիայի ծառայություն մատուցող հաստատություններում, թե համայնքում:

Ստուգացանկը կազմված է չորս բաժնից՝ 1) անհրաժեշտ շրջանակ, 2) ծրագրերն ապահովողների դերակատարություն, 3) զոհերի անվտանգության և բարեկեցության շեշտադրում, և 4) ծրագրի կառուցվածք: Կարևոր է նշել, որ արդյունավետ ու անվտանգ լինելու համար ծրագիրը պետք է համապատասխանի բոլոր չորս ոլորտների ցուցանիշներին:

Երկրում ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի շրջանակը պետք է ունենա հետևյալ առանձնահատկությունները՝

- ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերը ներառված են իրավական կամ քաղաքականության շրջանակում,
- գոյություն ունեն ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրեր ուղղորդման հստակ ճանապարհներ, որոնք ներառում են ինչպես պարտադիր, այնպես էլ կամավոր ուղեգրումները,
- ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրեր ուղղորդումները չեն կարգադրվում՝ որպես քրեական հետապնդման, դատապարտման կամ պատժի կրման այլընտրանք,
- համապատասխան մարմինները (օրինակ՝ դատարանները և երեխաների պաշտպանությամբ զբաղվող ծառայությունները) բռնություն գործադրող անձանց ուղղորդում են այդպիսի ծրագրեր,
- բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերը հասանելի են և համարժեքորեն բաշխված են ըստ աշխարհագրական տարածքների,
- բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերն ունեն համապատասխան և կայուն ֆինանսական միջոցներ՝ կայուն իրականացման և որակի չափանիշներին համապատասխանելու համար.
- բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի ֆինանսավորումը չի ազդում զոհերին մասնագիտացված աջակցություն ցուցաբերող ծառայությունների ֆինանսավորման վրա,
- Կողմերը մշակում և ընդունում են ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի (նվազագույն) չափանիշները, որոնք համահունչ են Ստամբուլի կոնվենցիային և լավագույն գործելակերպերին, այդ թվում՝ Ստամբուլի կոնվենցիայի 16-րդ հոդվածի[103] և (կամ) բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի եվրոպական չափանիշների առնչությամբ հրապարակված ուղեցույցներին:[104]

Երկրում ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի շրջանակը պետք է ունենա հետևյալ առանձնահատկությունները՝

- Գոյություն ունի շրջանակ, ինչպես օրինակ՝ հավատարմագրման կամ լիցենզավորման համակարգը, որը գնահատում և մշտադիտարկման է ենթարկում բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի համապատասխանությունը որակի նվազագույն չափանիշներին,
- ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերը գնահատում են ինչպես իրենց աշխատանքի իրականացումը, այնպես էլ արդյունքները: Տվյալները հավաքագրվում են ծրագրի իրականացման տարբեր ժամանակահատվածներում, ինչը հնարավորություն է տալիս համեմատել արդյունքները դրա իրականացումից առաջ և հետո: Սա ներառում է տվյալների հավաքագրում՝ հնարավորության դեպքում զոհի և բռնություն գործադրող անձանց տեսակետների համեմատությունը դյուրացնելու համար,
- գնահատման գործընթացի շրջանակներում հավաքագրված տվյալները վերլուծվում և օգտագործվում են ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի բարելավման համար:

103 Եվրոպայի խորհուրդ: (2011ա), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 2), Եվրոպայի խորհուրդ: (2011բ), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 3), Եվրոպայի խորհուրդ (2008թ.), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 4), Հեսթեր, Մ. և Լիլլի, Ս. Ջ. (2014թ.), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 5):
104 WWP EN [Ընտանեկան բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի հարցերով եվրոպական ցանց]: (2023թ.), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 6):

Ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերը պետք է առաջնահերթություն տան զոհերի անվտանգությանը՝

- գտնվում է այնպիսի միջավայրում, որը խթանում է բռնություն գործադրող անձանց հաշվետվողականությունը՝ միևնույն ժամանակ առավելագույնի հասցնելով ծրագրին մասնակցության հավանականությունը,
- մասնագիտացված ծառայություն է՝ ֆինանսական, մարդկային և այլ ռեսուրսներով,
- ապահովում է, որ բռնություն գործադրող անձանց հետ աշխատող մասնագետները ներգրավված չլինեն այլ մասնագիտական աշխատանքներում, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքային հարաբերությունների հաստատման վրա կամ վտանգել զոհի կարիքներին առաջնահերթություն տալը (օրինակ՝ սոցիալական աշխատողը խորհուրդ է տալիս նախաձեռնել երեխայի խնամակալության գործերով դատական վարույթ կամ հանդես է գալիս որպես բռնություն գործադրող անձի կամ զոհի հոգեբույժ),
- գտնվում է զոհերին ուղղված մասնագիտացված աջակցություն ցուցաբերող ծառայություններից (օրինակ՝ ապաստաններից և խորհրդատվական ծառայություններից) առանձին,
- ապահովում է, որ բռնություն գործադրող անձանց հետ աշխատող մասնագետները միաժամանակ չաշխատեն նրանց զոհերի հետ,
- ապահովում է, որ մասնագետները մինչև իրենց պարտականությունները ստանձնելն անցնեն մասնագիտացված վերապատրաստում՝ բռնություն գործադրող անձանց հետ աշխատելու համար,
- ապահովում է, որ մասնագետներն իրենց աշխատանքում ստանան շարունակական աջակցություն, այդ թվում՝ իրենց աշխատանքը կանոնավոր կերպով վերահսկվի և անցնեն համապատասխան շարունակական վերապատրաստում:

Ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերը պետք է առաջնահերթություն տան զոհերի անվտանգությանը՝

- ապահովելով, որ ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերն իրականացվեն զուգընկերների հետ կապ ապահովող ծառայություններ մատուցող կազմակերպությունների հետ համագործակցությամբ,
- բոլոր գործողություններում և որոշումներում առաջնահերթություն տալով զոհերի, մասնավորապես՝ կանանց և երեխաների անվտանգությանն ու բարեկեցությանը,
- ընտրելով զուգընկերների հետ կապ ապահովող ծառայություններ մատուցելու համար համապատասխան մոդել բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի համատեքստում, լավագույն դեպքում՝ զոհերին աջակցություն ցուցաբերող մասնագիտացված ծառայությունների հետ հաստատված գործընկերության միջոցով:
  Այդ մասնագիտացված ծառայություններն են կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունները, որոնք զոհերին նույն վայրում (մեկ պատուհանի սկզբունքով ծառայություններ) ապահովում են համապարփակ ծառայությունների հասանելիությամբ:[105] Եթե դա հնարավոր չէ, ապա ծրագրերը պետք է հիմնեն զուգընկերների հետ կապ ապահովող ծառայություններ,
- իրականացնելով շարունակական ռիսկերի գնահատում և կառավարում զուգընկերների հետ կապ ապահովող ծառայությունների հետ սերտ համագործակցությամբ,

105 Սա կիրառելի չէ այն դեպքերում, երբ կանանց աջակցման ծառայությունը նախաձեռնել է բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագիր: Այդ դեպքերում կազմակերպությունը ստեղծում է իր երկու ծառայությունների (բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի և զոհերին աջակցություն ցուցաբերող ծառայությունների) միջև համագործակցության ընթացակարգեր:

- ռիսկերի գնահատման մեջ ներառելով թե՛ հաստատուն (օրինակ՝ դատվածությունը, նախկինում գործադրված բռնության արարքները), թե՛ դինամիկ գործոնները (օրինակ՝ զբաղվածության կարգավիճակը, թմրամիջոցների չարաշահումը, հղիությունը)՝ շեշտադրելով բռնություն գործադրող անձանց ռիսկի գործոնները, զոհերի խոցելիությունը և ծառայությունների մատուցման գործընթացում առաջացող հնարավոր ռիսկերը (օրինակ՝ ծրագրին մասնակցության հնարավոր մանիպուլյատիվ օգտագործման կամ ծրագրում բռնարարի ընդգրկվելուց հետո անվտանգության կեղծ զգացումին բնորոշ ռիսկերը): Այդ նպատակով ծրագրերը պետք է կիրառեն փաստերի վրա հիմնված գործիքներ և ընթացակարգեր,
- ընդունելով բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի և զուգընկերների հետ կապ ապահովող ծառայությունների միջև համագործակցության և տեղեկությունների փոխանակման հստակ ընթացակարգեր: Ամբողջ անձնակազմը պետք է այդ ընթացակարգերի ներդրման առնչությամբ անցնի վերապատրաստում,
- ապահովելով, որ զուգընկերների հետ կապ ապահովող ծառայությունները զոհին տեղեկացնեն բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրի (օրինակ՝ դրա բովանդակության, մոտեցման, տևողության) և դրա սահմանափակումների մասին, ինչպես նաև հասցեագրեն նրա մտահոգություններն ու վախերը: Ավելին, ծրագիրը պետք է երաշխավորի, որ զոհը տեղեկացված լինի բռնություն գործադրող անձի կողմից ծրագրի հնարավոր մանիպուլյատիվ օգտագործման մասին:

Ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերը պետք է առաջնահերթություն տան զոհերի անվտանգությանը՝

- ապահովելով, որ զուգընկերոջ հետ կապ ապահովող ծառայություններում զոհի ներգրավվածությունը լինի կամավոր: Ծրագրում ընդգրկվելու դեպքում դրանք պետք է սահմանեն կապի ապահովման դինամիկան և եղանակը: Կապ հաստատելու հաճախականությունը պետք է համապատասխանի հայտնաբերված այն ռիսկերին և զոհի կարիքներին, որոնք գնահատվել են ծրագրի սկզբում, դրա ընթացքում և վերջում,
- պահպանելով մշտական կապ և համագործակցություն զուգընկերոջ հետ կապ ապահովող ծառայությունների հետ՝ հնարավոր ռիսկերը, մասնավորապես՝ ռեցիդիվի ցանկացած ռիսկ հայտնաբերելու համար: Բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի և զուգընկերոջ հետ կապ ապահովող ծառայությունների միջև համատեղ հանդիպումներն անցկացվում են առնվազն մեկ անգամ ծրագրում ընդգրկվելու փուլում, այնուհետև երեք ամիսը մեկ անգամ՝ ծրագրի ընթացքում և մեկ անգամ՝ փակման փուլում:

Բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի կառուցվածքում պետք է՝

- ներառվի լայն տեսական շրջանակ, որն ընդգծում է բռնությանը՝ հասարակական, ինստիտուցիոնալ, համայնքային և անհատական մակարդակներում վերջ դնելու եղանակների ըմբռնումը,
- հասցեագրվի ընտանեկան բռնությունը որպես գենդերային խնդիր, որի արմատները գտնվում են գենդերային անհավասարության, ուժի և հսկողության մեջ: Այն շեշտադրում է բռնության բոլոր ձևերը, այդ թվում՝ ֆիզիկական բռնությունը, սեռական բռնությունը և հարկադիր հսկողությունը, ինչպես նաև առցանց և տեխնոլոգիաների օգտագործմամբ գործադրվող բռնությունը,
- դիտարկվի ընտանեկան բռնությունը որպես ընտրություն, որը երբեք ընդունելի չէ և բռնություն գործադրող անձի բացառիկ պատասխանատվությունն է, ինչպես նաև նախատեսվի աջակցություն բռնություն գործադրող անձանց, որպեսզի վերջիններս պատասխանատվություն ստանձնեն իրենց գործողությունների համար,
- ներդրվեն ռազմավարություններ՝ բռնություն գործադրող անձանց փոխվելու մոտիվացիան մեծացնելու համար և հարգանքով վիճարկի նրանց՝ այլոց մերժման, կարևորությունը նվազագույնի հասցնելու, արդարացնելու կամ մեղադրելու ռազմավարությունները,
- ձեռնարկվի միջոցներ՝ ծրագրերի ամփոփման ցուցանիշներն առավելագույնի հասցնելու համար,
- ապահովվի, որ գենդերային կարծրատիպերի և առնականության վրա աշխատանքը հանդիսանա ծրագրի անբաժանելի մասը՝ այդ թեմաները ներառելով հատուկ հանդիպումներում կամ մոդուլներում,
- ապահովվի, որ սեռական զուգընկերոջ նկատմամբ բռնության և երեխաների նկատմամբ ընտանեկան բռնության հետևանքների ըմբռնումը, դրական ծնողավարման հմտությունների զարգացումը և երեխայի զարգացման փուլերը հասկանալը դառնան ծրագրի անբաժանելի մասը՝ թեման ներառելով հատուկ հանդիպումներում կամ մոդուլներում,
- ապահովվի, որ ծրագրի նվազագույն տևողությունը լինի վեց ամիս և հնարավորության դեպքում ներառի խմբային աշխատանք,
- հիմնված լինի մշակութազգայուն մոտեցման վրա և ձեռնարկի միջոցներ՝ ծրագրի լայն հասանելիությունն ապահովելու համար,
- լինեն ծրագրում ընդգրկման հստակ չափանիշներ՝ հիմնված դրա կառուցվածքի և տրամադրողի ռեսուրսների վրա: Անհրաժեշտ է նաև ապահովել, որ ծրագրում ընդգրկման չափանիշները հստակորեն փոխանցվեն բռնություն գործադրող անձանց ուղղորդման համար պատասխանատու շահագրգիռ կողմերին,
- ներդրվեն մասնագիտացված ծրագրեր՝ տարբեր թիրախային խմբերի համար: Անհրաժեշտ է ապահովել, որ բռնություն գործադրող բոլոր կանայք անցնեն գնահատում՝ շեշտը դնելով նախկինում անցած հնարավոր տրավմաների վրա, և որ ծրագրերը համակարգողները համապատասխանաբար հարմարեցնեն իրենց աշխատանքը:

Մաս 2. Սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերը

Ստամբուլի կոնվենցիայի 16-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը պարունակում է սեռական ոտնձգություն և բռնաբարություն կատարած անձանց ուղղված ռեաբիլիտացիոն ծրագրեր նախաձեռնելու կամ դրանց օժանդակելու պարտավորություն: Այդ ծրագրերը պետք է «հատուկ նախատեսված լինեն բանտում կամ բանտից դուրս սեռական բնույթի հանցանքներ կատարած և դատապարտված անձանց ռեաբիլիտացնելու համար՝ այդ արարքների ռեցիդիվը նվազագույնի հասցնելու համար»: Հաշվի առնելով, որ Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում գոյություն ունեն ծրագրերի շատ տարբեր մոդելներ, ծրագիր մշակողներն այդ ծրագրերի իրականացման հարցում որոշակի հայեցողություն են տվել Կողմերին և (կամ) ծառայություններ մատուցողներին՝ միաժամանակ ընդգծելով, որ «նրանց վերջնանպատակը պետք է լինի ռեցիդիվի կանխումը և բռնություն գործադրող անձանց հաջողությամբ համայնք վերաինտեգրումը»:

Ստամբուլի կոնվենցիայի 36-րդ հոդվածով պահանջվում է քրեականացնել սեռական բռնությունը, այդ թվում՝ բռնաբարությունը: Այն ընդգրկում է բոլոր տեսակի սեքսուալ բնույթի գործողությունները, որոնք կատարվել են մեկ այլ անձի նկատմամբ՝ առանց նրա ազատ կամահայտնության հիման վրա տրված համաձայնության, և որոնք կատարվել են միտումնավոր: Սույն դրույթն իրականացնելիս Կոնվենցիայի կողմերը պետք է ընդունեն ցանկացած սեքսուալ բնույթի գործողությունների նկատմամբ անձի ազատ կամահայտնության հիման վրա տրված համաձայնության բացակայության հասկացությունը ներառող քրեական օրենսդրություն, որը պետք է «գնահատվի հարակից հանգամանքների համատեքստում»[106]: 36-րդ հոդվածի 3-րդ պարբերությամբ պահանջվում է, որ սեռական բռնության և բռնաբարության քրեական հանցանքների սահմանման մեջ ներառվեն առանց անձի ազատ կամահայտնության հիման վրա տրված համաձայնության բոլոր տեսակի սեռական արարքները՝ անկախ բռնություն գործադրող անձի և զոհի միջև առկա հարաբերությունները հաշվի առնելու: Այնուամենայնիվ, ԳՐԵՎԻՈ-ի գործունեության վերաբերյալ 4-րդ ընդհանուր զեկույցում նշվում է, որ «Կոնվենցիայի կողմերի կողմից սեռական բռնության, այդ թվում՝ բռնաբարության քրեականացումը բնութագրվում է պաշտպանության տարբեր սահմանումներով և շրջանակներով, ինչպես նաև տարբեր վարքագծով, տարբեր պատժամիջոցներով և ծանրացնող ու մեղմացնող հանգամանքներով»:[107] Ուստի, սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերը տարբերվում են երկրից երկիր, քանի որ դրանք պայմանավորված են գործող իրավական շրջանակով, այդ թվում՝ սեռական բռնության վերաբերյալ քրեական օրենքներով, որոնք, ի վերջո, ազդում են սեքսուալ բնույթի գործողությունների և այդ ծրագրերում ընդգրկված բռնություն գործադրող անձանց շրջանակի վրա:

2021 թվականին Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն ընդունել է «Սեռական բնույթի հանցանքի մեջ մեղադրվող կամ դրա համար դատապարտված անձանց գնահատման, ռեաբիլիտացման և վերաինտեգրման մասին» CM/Rec(2021)6 առաջարկությունը:[108] Վերջինիս համաձայն՝ *սեռական բնույթի հանցանքը սահմանվում է որպես «սեքսուալ բնույթի ցանկացած գործողություն կամ վարք կամ մտադրություն, որն ազգային իրավունքի համաձայն ենթակա է քրեական պատասխանատվության կամ միջոցների: Սեռական բնույթի հանցանքը կարող է ներառել ֆիզիկական, էմոցիոնալ կամ հոգեբանական ճնշում կամ բռնություն և կարող է լինել ֆիզիկական կոնտակտ պարունակող հանցանք (ինչպես օրինակ՝ բռնաբարությունը կամ սեռական ոտնձգությունը, այդ թվում՝ հպումը) կամ ֆիզիկական կոնտակտ չպարունակող հանցանք (օրինակ՝ գրումինգը, էքսհիբիցիոնիզմը, վուայերիզմը կամ երեխաների նկատմամբ սեռական բռնության պատկերների ներբեռնումը կամ դիտումը)*: Առաջարկությամբ ընդգծվում է, որ սեռական բնույթի հանցանքի համար դատապարտված անձինք, որոնք գտնվում են բանտում կամ պրոբացիայի ծառայության

106 Եվրոպայի խորհուրդ: (2011բ), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 3, տե՛ս պարբերություն 193):
107 Եվրոպայի խորհուրդ: (2023ա), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 23):
108 Եվրոպայի խորհուրդ: (2021բ): *«Սեռական բնույթի հանցանքի մեջ մեղադրվող կամ դրա համար դատապարտված անձանց գնահատման, ռեաբիլիտացման և վերաինտեգրման մասին» Նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին ուղղված CM/Rec(2021)6 առաջարկություն*: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/0900001680a4397a:

վերահսկողության ներքո, պետք է օգտվեն իրենց հանցագործ վարքագիծն ու կարիքները հասցեագրող միջամտություններից և (կամ) ռեաբիլիտացման ծրագրից: Որպես ընդհանուր սկզբունք՝ այն առաջարկում է, որ *«միջամտություններն ու ռեաբիլիտացիան լինեն փաստերի վրա հիմնված, համաչափ և համապարփակ մոտեցման մի մաս, որն օգնում է անձանց հասցեագրել իրենց հանցագործ վարքագիծը»*: Կարևոր է, որ այն առաջարկում է իրականացնել ռիսկերի համապարփակ և կանոնավոր գնահատում *«որպես սեռական բնույթի հանցանքի մեջ մեղադրվող կամ դատապարտված անձանց կառավարման, միջամտությունների և (կամ) ռեաբիլիտացիան վերաբերյալ տեղեկացված որոշումներ կայացնելու նախապայման»:* Այն նաև նշում է, որ *«ռեաբիլիտացիայի և միջամտության ծրագրերը պետք է իրականացվեն հատուկ վերապատրաստում անցած բանտային և պրոբացիոն ծառայության անձնակազմի կողմից և անմիջականորեն վերահսկվեն որակյալ մասնագետների կողմից»:* Վերջապես, առաջարկությունը նշում է, որ *«հարկ եղած դեպքերում բանտային ծառայությունները և պրոբացիոն մարմինները պետք է կապ հաստատեն քրեական արդարադատության այլ մարմինների, ինչպես նաև զոհերին աջակցություն ցուցաբերող ծառայությունների և համապատասխան այլ գերատեսչությունների հետ՝ զոհերի կարիքների բավարարումն ապահովելու և հետագա վիկտիմիզացիայից խուսափելու համար»:*

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի վերոնշյալ առաջարկությանը համահունչ՝ Եվրոպական պրոբացիայի կոնֆեդերացիան (ԵՊԿ) իր անդամների շրջանում անցկացրել է հարցում՝ հասկանալու համար Եվրոպայում սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի շրջանակը և գործունեության ոլորտը:[109] Հարցման արդյունքում պարզվել է հետևյալը՝

- ռեսպոնդենտները նշել են, որ ուսումնասիրված երկրների հասարակություններում առկա է սեռական բռնարարքի խնդրի ընկալման որոշակի մակարդակ, ինչի արդյունքում հասարակությունը որոշակի աջակցություն է ցուցաբերում սեռական բնույթի հանցանքի համար դատապարտված անձանց՝ դատապարտումից հետո վերահնտեգրմանը.
- ռեսպոնդենտների մեծ մասը կարծում էր, որ սեռական բռնարարքի կանխարգելումն իրենց երկրում առաջնահերթություն էր և գտնում էր, որ իրենց կառավարությունը (68%), քրեական արդարադատության ոլորտի մասնագետները (79%) և բուժօգնություն իրականացնողները/թերապևտները (75%) խոր պատկերացում ունեն խնդրի մասին և ձգտում են լուծել այն: Այնուամենայնիվ, երբ ռեսպոնդենտներին խնդրեցին նշել երկրում գործող ծրագրերի անվանումները, նրանցից քչերը կարողացան նշել մի քանի ծրագրերի անվանումներ.
- ռեսպոնդենտները պնդում էին, որ բավարար ֆինանսավորման հատկացմանը և այդ կանխարգելիչ նախաձեռնությունների իրականացմանը նպաստելու համար անհրաժեշտ է ունենալ փաստերի վրա հիմնված առավել հուսալի մոտեցում: Կարևոր է նշել, որ որոշ երկրներում ընդհանրապես չկա փաստերի վրա հիմնված ազգային մոտեցում կամ գործիքներ, մինչդեռ այլ երկրներում չկա հատուկ ոլորտների համար, ինչպիսիք են ռիսկի գնահատումը, ռեաբիլիտացման ծրագրերի արդյունավետությունը, տրավմաների մասին տեղեկացված գործելակերպը կամ կանխարգելումը, փաստերի վրա հիմնված մոտեցում կամ գործիքներ:

Նախորդ հետազոտությունը ցույց է տալիս, որ ամբողջ Եվրոպան աջակցում է սեռական բռնության կանխարգելմանը, սակայն այն հետևողականորեն չի իրականացվում կամ ֆինանսավորվում:[110] Ակադեմիական գրականության մեջ նկատվում է սեռական բռնության կանխարգելման սահմանման շուրջ աճող կոնսենսուս,[111] միևնույն ժամանակ ընդունելով, որ մասնագիտական գործելակերպերն ու քաղաքականությունները տարբերվում են ազգային եւ միջազգային մակարդակներում կանխարգելման չորս մակարդակների (այսինքն՝ առաջնային, երկրորդային, երրորդային և չորրորդային կանխարգելում) տեսանկյունից: Առաջնային կանխարգելումը վերաբերում է ցանկացած միջամտության՝ նախքան բռնության ի սկզբանե գործադրումը և շեշտադրում է սեռական բռնության վերաբերյալ սոցիալական իրազեկվածության մակարդակի բարձրացումը: Երկրորդային կանխարգելումը տեղի է ունենում բռնության գործադրումից անմիջապես հետո և ուղղված է հանցանքը նորից կատարելու ռիսկի առջև կանգնած մարդկանց հետ աշխատելուն: Երրորդային կանխարգելումը հիմնված է բռնության գործադրումից հետո երկարաժամկետ մոտեցման վրա և ընդգրկում է բռնություն գործադրող անձանց ռեաբիլիտացումն ու

109 Մըքքարթան, Կ. և այլք (2022թ.), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 13):

110 Մըքքարթան, Կ., Ուզիեբլո, Կ., և Սմիդ, Ուայ. Ջ. (2020թ.): Սեռական բռնարարքի կանխարգելման վերաբերյալ մասնագետների ընկալումները և վերաբերմունքը. Միջազգային հետազոտական ուսումնասիրություն: *Հանցանք կատարած անձանց թերապիայի և համեմատական քրեագիտության հարցերով միջազգային ամսագիր*, 65(8), էջեր 815831: https:// doi.org/10.1177/0306624x20919706:

111 Մըքքարթան, Կ. և այլք (2020թ.), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 110):

վերականգնումը: Վերջապես, չորրորդային կանխարգելումը նպատակ ունի մեղմելու ցանկացած միջամտության բացասական հետևանքները՝ շեշտադրելով վնասի նվազեցումը, դադարեցումը և համայնք ինտեգրումը: Կանխարգելման այս բոլոր մակարդակները պետք է իրականացվեն՝ կիրառելով սոցիալ-էկոլոգիական մոտեցումը, որը հաշվի է առնում անհատական, միջանձնային, համայնքային և հասարակական գործոնների փոխհարաբերությունը: [112] Այն թույլ է տալիս վերոնշյալ տարբեր մակարդակներից յուրաքանչյուրում հասկանալ այն մի շարք գործոնները, որոնք մարդկանց դնում են բռնության ենթարկվելու ռիսկի առջև կամ պաշտպանում են նրանց բռնության ենթարկվելու կամ բռնություն գործադրելու ռիսկից:

Սեռական բռնարարքի վրա կենտրոնացած ցանկացած միջամտություն պետք է լինի փաստերի վրա հիմնված, համապարփակ (այսինքն՝ ուղղված անհատին համապարփակ ձևով), ուժեղ կողմերի վրա հիմնված (այսինքն՝ խրախուսելով մասնակիցներին ցուցաբերել դրական վարքագիծ և վերաբերմունք, ինչպես նաև օգնել նրանց հասկանալ, թե ինչպես նրանք կարող են փոխել հանցանք կատարելու հետ կապված բացասական վարքագիծն ու համոզմունքները) և տրավմաների մասին տեղեկացված: Կանխարգելման քաղաքականությունների և գործելակերպերի քարտեզագրումից պարզ է դառնում, որ երեխաների նկատմամբ սեռական բռնարարքի կանխարգելմանն առնչվող ծրագրերն ավելի զարգացած են, քան չափահաս անձանց նկատմամբ սեռական բռնության կանխարգելմանն առնչվող ծրագրերը:[113] Պարզվել է նաև, որ երկրորդային կանխարգելումը կանխարգելման բոլոր մակարդակներից ամենապակաս սահմանված մակարդակն է, որի դեպքում առկա են ամենաքիչ թվով հասանելի ծառայություններ և (կամ) միջամտություններ:

Հաշվի առնելով սեռական բռնության կանխարգելման բարդ խնդիրը և սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված առկա ծրագրերի սահմանափակ թիվը՝ սույն ուսումնասիրությամբ վերհանվել և դիտարկել են կանխարգելիչ միջամտության և ռեաբիլիտացման ծրագրերի հետևյալ երեք լայն կատեգորիաները՝

1. Չափահաս անձանց, հատկապես կանանց նկատմամբ սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրեր.
2. Երեխաների նկատմամբ սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրեր.
3. Վնասակար սեռական վարքագիծ դրսևորող երեխաներին և երիտասարդներին ուղղված ծրագրեր:

Նշված երեք ոլորտներից յուրաքանչյուրի դեպքում շեշտը կդրվի սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի վրա՝ չդիտարկելով դեռևս սեռական բռնություն չգործադրած անձանց ուղղված ծրագրերը, մասնավորապես՝ առաջնային կանխարգելման ծրագրերն ու երկրորդային կանխարգելման որոշ ծրագրեր:

2.1 Չափահաս անձանց, հատկապես կանանց նկատմամբ սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերը

Սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված կանխարգելիչ միջամտության և ռեաբիլիտացման ծրագրերը կարևոր են սեռական բռնության բոլոր դեպքերում, սակայն լայնորեն չեն իրականացվում չափահաս զոհերի նկատմամբ սեռական հարձակումների և բռնաբարության համատեքստում: Հետազոտությունների և գործելակերպի մեծ մասն ուղղված է երեխաների և երիտասարդների նկատմամբ սեռական բռնություն գործադրող անձանց (տե՛ս 2.2. և 2.3 բաժինները), մինչդեռ չափահաս անձանց, մասնավորապես՝ կանանց նկատմամբ սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված կանխարգելիչ միջամտության և ռեաբիլիտացման ծրագրերն այդքան էլ զարգացած չեն: Արդյունքում, չափահաս անձանց նկատմամբ սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերը հաճախ բախվում են սոցիալական համոզմունքների ու գենդերային կարծրատիպերի վրա հիմնված դիմադրության և միշտ չէ, որ ընդգրկվում են

112 Դի Ջիոյա, Ռ., Բեսլեյ, Լ., Քասսար, Ա., և Պաուլա, Ա. (2022թ.): *Երեխաների նկատմամբ սեռական բռնարարքի և շահագործման կանխարգելմանն ուղղված ծրագրերի դասակարգման չափորոշիչներ*: Եվրոպական հանձնաժողով, Համատեղ հետազոտությունների կենտրոն: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://data.europa.eu/doi/10.2760/725913:

113 Եվրոպական հանձնաժողով: (2022թ.): *«2PS. Կանխարգելել և պաշտպանել աջակցության միջոցով»* ծրագիր: Համայնքի գիտահետազոտության և փորձարարական նախագծման հարցերով տեղեկատվական ծառայություն: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://cordis.europa.eu/project/ id/101073949:

սեռական հանցագործությունների դեմ ուղղված քաղաքականության մեջ:[114] Այնուամենայնիվ, վերջին տարիներին այդ կանխարգելիչ միջամտության ծրագրերը, այդ թվում՝ ռեաբիլիտացման և վերաինտեգրման ծրագրերն աստիճանաբար զարգանում են, թեև դրանց բովանդակության և իրականացման մեջ տարածաշրջանային ու մշակութային տարբերությունները պահպանվում են:[115]

Ստամբուլի կոնվենցիայի 16-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ Կողմերը պարտավոր են նախաձեռնել սեռական ոտնձգում և բռնաբարություն կատարած անձանց ռեաբիլիտացման ծրագրեր կամ օժանդակել դրանց: Դրանք այն ծրագրեր են, որոնք պետք է հատուկ նախատեսված լինեն բանտում և բանտից դուրս սեռական բռնություն գործադրելու համար դատապարտված անձանց ռեաբիլիտացնելու համար՝ ռեցիդիվը նվազագույնի հասցնելու նպատակով:[116] ԳՐԵՎԻՈ-ն նշել է, որ շատ երկրներում Կոնվենցիայի 16-րդ հոդվածին համահունչ գործող սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերը հազվադեպ են հասանելի:[117] Թեև Եվրոպայում դրանց միջև առկա տարբերություններին, այնուամենայնիվ, սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերը հաճախ հիմնված են բժշկական կամ դեղաբանական մոտեցման վրա, ինչը ԳՐԵՎԻՈ-ի համար մեծ մտահոգության առարկա է:[118] Ինչպես նշվում է ԳՐԵՎԻՈ-ի եզրահանգումներում՝ սեռական բռնությունը չպետք է դիտարկել բռնություն գործադրող անձի՝ իր սեռական ցանկությունը վերահսկելու անկարողություն, այլ ավելի շուտ պետք է դիտարկել կնոջ և նրա մարմնի նկատմամբ գենդերային ուժ և իշխանություն կիրառելու միջոց, ինչպես դա տեղի է ունենում կանանց նկատմամբ բռնության ցանկացած այլ տեսակի դեպքում:[119]

Եվրոպական պրոբացիայի կոնֆեդերացիայի զեկույցը ցույց է տվել, որ հետազոտությանը մասնակցած պրոբացիոն ծրագրերից չորսը նշել են, որ իրենց երկրներում սեռական բնույթի հանցանքի համար դատապարտված անձանց ռեբիլիտացման ծրագրեր չեն տրամադրվել:[120] Հարցմանը մասնակցած երկրներում ռեսպոնդենտների 41.7%-ը նշել է, որ իրենց ռեաբիլիտացման ծրագրերը հավատարմագրված են և հիմնված են սեռական բնույթի հանցանքի համար դատապարտված անձանց կառավարման միջգերատեսչական մոտեցման վրա (58.3%): Մասնակիցների մեծ մասը նշել է, որ իրենց երկրում չկան սեռական բնույթի հանցանքի համար դատապարտված անձանց վերաինտեգրման այլընտրանքային մոտեցումների օրինակներ (54.2%): Որոշ երկրներ կիրառում են «Աջակցության և հաշվետվողականության շրջանակներ մոդելը», այն է՝ սեռական բռնություն գործադրած տղամարդկանց ուղղված կամավոր միջամտության ծրագիրը, որն ընդգրկում է համայնքի կամավորների փոքր խմբերը, որոնք աջակցում են բռնություն գործադրած անձանց հասարակություն վերաինտեգրմանը բանտից ազատ արձակվելուց հետո:

Եվրոպական պրոբացիայի կոնֆեդերացիայի զեկույցում ներկայացվել են նաև սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի իրականացման գործընթացում ազգային տարբերություններին վերաբերող եզրահանգումները:[121] Ինչ վերաբերում է ռեաբիլիտացման ծրագրերին՝ բոլոր երկրների կեսից ավելին ուներ սեռական բնույթի հանցանքի համար դատապարտված չափահաս տղամարդկանց (58%) և անչափահաս տղաներին (54%) ուղղված ծրագրեր: Քիչ թվով երկրներում կային սեռական բնույթի հանցանքների համար դատապարտված չափահաս կանանց (33%), անչափահաս աղջիկներին (8%), հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ ունեցողներ անձանց (12%) և սովորելու դժվարություններ ունեցող մարդկանց (29%) ուղղված ծրագրեր: Այս առումով կարևոր է նշել, որ սեռական բռնություն գործադրող դատապարտված անձանց մեծ մասը տղամարդիկ են, ինչը ցույց է տալիս, որ կա սեռական բռնություն գործադրող տղամարդկանց ուղղված ծրագրերի առկայության անհրաժեշտություն:

114 Ուգիեբլո, Ք., Սմիդ, Ուայ. և Մըքքարթան, Կ. (2022թ.): *Խաչմերուկում. Սեռական բնույթի հանցանք կատարած անձանց ռեաբիլիտացման և կառավարման ապագա ուղղությունները: Փալգրեյվ Մըքմիլլան, Փրուլքս, Ջ., Քորթոնի, Ֆ., Քրեգ, Լ.Ա. և Լետուրնո, Ե..Ջ. (2020թ.): «Ուայլի ձեռնարկ սեռական բնույթի հանցանք կատարած անձանց հետ աշխատանքի մեթոդների վերաբերյալ. տեսության, գնահատման, ռեաբիլիտացման և կանխարգելման ժամանակակից հեռանկարներ»: Ուայլի*:

115 Ֆրենկեն, Ջ. (1999թ.): Սեռական բնույթի հանցանք կատարած անձանց ռեաբիլիտացումը Եվրոպայում. միջմշակութային տարբերությունների վերաբերյալ տպավորություն: *Սեռական բռնարարք*, 11(1), 87-93: https://doi.org/10.1177/107906329901100107, Մըքքարթան, Կ. և այլք (2022թ.), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 13):

116 Եվրոպայի խորհուրդ: (2011ա), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 2):

117 Եվրոպայի խորհուրդ: (2022բ), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 7, տե՛ս պարբերություն 197):

118 Եվրոպայի խորհուրդ: (2018թ.), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 35):

119 Եվրոպայի խորհուրդ: (2018թ.), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 35):

120 Մըքքարթան, Կ. և այլք: (2022թ.), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 13):

121 Մըքքարթան, Կ. և այլք: (2022թ.), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 13):

Այնուամենայնիվ, ծրագրերը պետք է լինեն տարբեր թիրախային խմբերի համար, քանի որ նրանց կարիքները տարբեր են:

Չափահաս անձանց նկատմամբ սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերը գրանցել են տարբեր աստիճանի հաջողություններ: Սույն ուսումնասիրության համատեքստում իրականացված գրականության ուսումնասիրությունը չի տվել հստակ արդյունքներ, քանի որ գործող ծրագրերը կիրառում են տարբեր գործիքներ և շատ տարբեր մոտեցումներ: Սույն ուսումնասիրության շրջանակներում իրականացված հարցմանը մասնակցած ռեսպոնդենտների կողմից նշված հիմնական մարտահրավերը սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված՝ փաստերի վրա հիմնված ծրագրերի բացակայությունն է (55%): Այդ արդյունքը համահունչ է այն փաստի հետ, որ ռեսպոնդենտների մեծ մասը (60%) նշել է, որ իրենք չեն գնահատում իրենց ծրագրի արդյունքները:

Խոստումնալից գործելակերպեր

Միացյալ Թագավորությունում գործող՝ Բանտում սեռական բնույթի հանցանքներ կատարած անձանց ռեաբիլիտացման հիմնական ծրագիրը (SOTP) հավատարմագրված ռեաբիլիտացման ծրագիր է: Այն պահանջում է, որ ազատազրկման վայրերում իրականացվող՝ սեռական բնույթի հանցանքներ կատարած անձանց ուղղված ծրագրերում աշխատող բոլոր մասնագետներն անցնեն ազգային, համապարփակ ընտրության գործընթաց, ինչպես նաև վերապատրաստում, որի միջոցով կգնահատվեն նրանց գիտելիքները, կոմպետենցիաները և կարողությունները: Նախևառաջ՝ այդ մասնագետները պետք է ունենան համապատասխան որակավորում՝ (հոգեմետրիկ գնահատման և հարցազրույցների միջոցով) համակարգող դառնալու համար: Այնուհետև նրանք պետք է մասնակցեն սեռական բնույթի հանցանքներ կատարած անձանց հետ աշխատանքի համար անհրաժեշտ հիմնարար հմտությունների ձեռքբերմանն ուղղված վերապատրաստման դասընթացին: Վերջապես, նրանք պետք է մասնակցեն Սեռական բնույթի հանցանքներ կատարած անձանց ռեաբիլիտացման հիմնական ծրագրին, որը սեռական բնույթի հանցանքների համար դատապարտված չափահաս անձանց համար նախատեսված երրորդային կանխարգելման հիմնական ծրագիրն է: Այդ վերապատրաստումն անցած անձնակազմի անդամներին թույլ կտրվի համակարգել ռեաբիլիտացման ծրագիրը՝ ղեկավարի կամ նշանակված ղեկավարի վերահսկողության ներքո:

Չափահասների նկատմամբ սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերում աշխատող անձնակազմի անդամների հատուկ կոմպետենցիաները և վերապատրաստումները հստակ չեն: Հարցմանը մասնակցած ռեսպոնդենտները նշել են, որ անձնակազմի անդամների հատուկ կոմպետենցիաների բացակայությունը (35%) և վերականգնողական աշխատանքներ իրականացնող մարդկային ռեսուրսների բացակայությունը (35%) իրենց աշխատանքի հիմնական մարտահրավերներից են: Ռեսպոնդենտների մեծ մասն իր անձնակազմի անդամների համար ապահովում է առանց աշխատանքից կտրվելու կրթություն (90%), վերահսկողություն (85%) և թիմային հանդիպումներ (85%): Բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի եվրոպական չափանիշների համաձայն՝ մասնագետների կանոնավոր վերապատրաստումներն անչափ կարևոր են:[122] Հետևաբար, անձնակազմի անդամները պետք է անցնեն համապատասխան և շարունակական վերապատրաստում, որպեսզի զինվեն իրենց պարտականություններն ամենաբարձր չափանիշներով կատարելու համար անհրաժեշտ հմտություններով և գիտելիքներով:[123]

Խոստումնալից գործելակերպեր

Իսպանիայում Սեռական բնույթի հանցանքներ կատարած անձանց վերականգնման ծրագիրը (SOCP) տրամադրվում է բանտերում՝ սեռական բնույթի հանցանքի համար դատապարտված անձանց: Հուսադրող է այն հանգամանքը, որ այդ ծրագիրը մանրամասն գնահատվել է արտաքին փորձագետների կողմից և վերլուծվել են դրա արդյունքները, ինչպես նաև տարբեր տեսակի՝ սեռական բռնություն գործադրող անձանց համար ռիսկի տարբեր գործոնները:

122 WWP EN [Ընտանեկան բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի հարցերով եվրոպական ցանց]: (2023թ.), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 6):
123 Եվրոպայի խորհուրդ: (2021բ), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 108):

Գրասենյակային հետազոտությունների միջոցով ստացված տեղեկությունները թույլ չեն տալիս եզրակացություններ կատարել ծրագրերի մոտեցումներում գենդերազգայունության մակարդակի վերաբերյալ: Այնուամենայնիվ, հարցման արդյունքները ցույց են տվել, որ ռեսպոնդենտների կեսը (50%) իրենց միջամտության ժամանակ կիրառել է գենդերազգայունության մոտեցում: Այդ մոտեցման վերաբերյալ առավել մանրամասն հարցերը ցույց են տվել, որ դրա էությունը հիմնականում բռնություն գործադրող տղամարդկանց և կանանց համար առանձին խմբեր առաջարկելն է՝ առանց գենդերային տեսանկյունի վրա հիմնված որևէ ծրագրի բովանդակության: Մյուս ռեսպոնդենտները նշել են, որ կիրառել են գենդերազգայուն մոտեցում՝ ընդունելով, որ բռնությունը հիմնականում գործադրվում է տղամարդկանց կողմից, կամ հղում կատարելով գենդերազգայուն մոտեցման կիրառումը խրախուսող ձեռնարկներին: Այդ մոտեցումներն առավել խոստումնալից հենք են խոստանում սեռական բռնության՝ գենդերի վրա հիմնված ընկալումը սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերում ինտեգրելու համար: Այնուամենայնիվ, ընդհանուր առմամբ, հարցման արդյունքները ցույց են տալիս, որ սեռական բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի մեջ գենդերային մոտեցումն արմատավորելու առումով առկա են լուրջ մարտահրավերներ: Սա արտացոլում է ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի գենդերազգայունության մակարդակի հետ կապված արդյունքները:

Հարցման արդյունքները ցույց են տալիս նաև, որ տարբեր երկրներում և դրանց սահմաններից դուրս մասնագետները կիրառում են ռիսկերի գնահատման մի շարք գործիքներ, ինչը վկայում է ստանդարտացման մեջ հետևողականության բացակայության մասին: Իրապես, ռիսկերի գնահատման՝ կիրառվող ընթացակարգերը հաճախ հատուկ են կոնկրետ ազգային կամ տեղական համատեքստին: Սա մտահոգությունների տեղիք է տալիս, քանի որ ռիսկերի գնահատումը կարող է առանցքային դերակատարություն ունենալ դատականորոշումների կայացման (75%), անհատական ռեաբիլիտացման ծրագրերի (83%) և անհատական կառավարման/վերահսկողության ծրագրերի մշակման գործընթացում (87%), ինչպես նշվել է վերոնշյալ՝ Եվրոպական պրոբացիայի կոնֆեդերացիայի կողմից անցկացված հարցմանը մասնակցած մասնագետների կողմից: Այնուամենայնիվ, սույն ուսումնասիրության համար իրականացված հարցման արդյունքները ցույց են տվել, որ ուսումնասիրված ծրագրերի միայն 30%-ն է իրականացնում ռիսկերի շարունակական գնահատում՝ առնվազն որոշ գնահատումներ իրականացնելով ծրագրի սկզբում, դրա ընթացքում և վերջում: Մյուս 30%-ը դա անում է ծրագրի մեկնարկին և ավարտին, իսկ ծրագրերի 35%-ը ռիսկը գնահատում է բացառապես ծրագրի սկզբում: Սա ցույց է տալիս, որ ծրագրերի մեծ մասը ռիսկի մակարդակը հիմնականում համարում է որպես հաստատուն, ինչը նման է ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերում ռիսկի հայեցակարգային մոտեցման ձևավորմանը:

Սույն ուսումնասիրության համար իրականացված հարցման մեկ այլ արդյունքն այն է, որ սեռական բնույթի հանցանքների համար դատապարտված անձանց ռեաբիլիտացման ծրագրերը հիմնված են ընդհանուր հոգեբանակրթական և կոգնիտիվ-վարքային մոտեցման վրա՝ շեշտադրելով ռիսկերի կառավարումը և վնասի նվազեցումը: Սա համահունչ է Եվրոպական պրոբացիայի կոնֆեդերացիայի զեկույցում արված եզրահանգումներին: Սեռական բնույթի հանցանքների համար դատապարտված անձանց ռեաբիլիտացման մեջ կիրառվող հիմնական մոտեցումները մեծապես հիմնված են եղել հետևյալ մոդելներից մեկ կամ մի քանիսի վրա՝ «լավ կյանքի մոդել» և (կամ) «ռիսկ-կարիք-զգայունություն մոդել» անհատական և (կամ) խմբային ծրագրերի միջոցով՝ հիմնված կոգնիտիվ-վարքային թերապիայի վրա: Թեև այդ ծրագրերի հիմնական բովանդակությունը բռնություն գործադրող անձանց բացասական իմպուլսիվ և սեռական վարքագծի խնդրի հասցեագրումն է, այնուամենայնիվ, որոշ ռեսպոնդենտներ նշել են նաև, որ այդ ծրագրերի առանցքում զոհի հանդեպ ապրումակցման մակարդակի բարձրացումն է: Բացի դրանից, սեռական բնույթի հանցանքի համար դատապարտված անձանց ռեաբիլիտացման և վերականգնման հարցում վերականգնողական արդարադատության ու գործելակերպերի համատեքստում Շոտլանդիայում իրականացվող՝ «Thriving Survivors» նորարարական ծրագիրը հիմնված է զոհակենտրոն մոտեցման վրա:[124] Այնուամենայնիվ, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն ընդգծել է, որ սեռական բռնության համատեքստում «վերականգնողական արդարադատության հետ կապված միջամտություններին մասնակցությունը պետք է իրականացվի միայն, այնտեղ, որտեղ

124 ,Thriving Survivorsե ծրագիր: (2022թ.): *Սեռական վնասի հարցերով վերականգնողական արդարադատության ազգային ծառայություն. Տեղեկություններ.* ,Thriving Survivorsե Լիմիթեդ: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ www.thrivingsurvivors.co.uk/_files/ugd/b7bff6_1c43ea7a343d4acf89f73828fdf1354c.pdf:

հնարավոր է և նպատակահարմար»:[125] Բացի դրանից, Ստամբուլի կոնվենցիայի 48-րդ հոդվածն արգելում է վեճերի այլընտրանքային լուծման պարտադիր ընթացակարգերը, այդ թվում՝ կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերի առնչությամբ միջնորդությունը և հաշտարարությունը:

Չափահաս անձանց նկատմամբ սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրեր նախաձեռնելու և իրականացնելու վերաբերյալ առաջարկություններ

Չափահաս անձանց նկատմամբ սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերն իրենց աշխատանքի բոլոր փուլերում պետք է առաջնահերթություն տան զոհերի անվտանգությանը, մարդու իրավունքներին և բարեկեցությանը: Ընդունելով, որ կանանց նկատմամբ սեռական բռնությունը հիմնված է գենդերային անհավասարությունների և տղամարդու ուժի ու գերազանցության մասին պատկերացումների վրա, այդ ծրագրերը պետք է ինտենսիվորեն վիճարկեն այն համոզմունքները, որոնք արդարացնում են կանանց նկատմամբ տղամարդկանց կողմից գործադրվող բռնությունը: Դրանք անչափ կարևոր են, քանի որ օգնում են բռնություն գործադրող անձանց հասկանալու իրենց գործողությունների հետևանքները և դրանց համար ստանձնելու պատասխանատվություն:

Այդ ծրագրերը պետք է շեշտադրեն անցյալի գործոնները, ինչպիսիք են դիսֆունկցիոնալ կապվածությունը, բռնարարքի փորձը և սոցիալականացումը, ինչպես նաև սեռական բնույթի հանցանք կատարելու հետ կապված ներկա գործոնները (այդ թվում՝ անընդունելի սեռական գրգռման դեպքում վարքագծի փոփոխությունը): Ավելին, ծրագրերը պետք է հասցեագրեն հետագա գործոնները, այդ թվում՝ ռեցիդիվի կանխարգելման հմտությունների զարգացումը: Ծրագրերը պետք է ներառեն նաև անհատապես ընտրված, ուժեղ կողմերի վրա հիմնված մոտեցում՝ հավասարակշռելով սեռական բռնարարքի համատեքստի նյութն ու ընդհանուր քրեագիտական նյութը: Կարևոր է, որ այդ ծրագրերը հաշվի առնեն համաձայնության, սեռական ինքնավարության և անձնական անձեռնմխելիության հասկացությունները: Կարևոր է նաև առցանց և անցանց սեռական բռնության վերաբերյալ միջամտությունների ինտեգրումը:

Անհրաժեշտ է իրականացնել մշտադիտարկում և ռիսկերի շարունակական գնահատում, ինչպես նաև ընդհանուր քրեագիտական ռիսկերի, ինչպես նաև սեռական բռնության հետ կապված հատուկ ռիսկերի վերհանում: Ծրագրերը պետք է հարմարեցվեն և արձագանքեն անհատական կարիքներին՝ հաշվի առնելով հոգեկան առողջությունը, նյարդաբազմազանությունը և այլ հարակից խնդիրները, ինչը մասնագետներին հնարավորություն է տալիս աշխատել անձանց հետ՝ միևնույն ժամանակ հաշվի առնելով նրանց հատուկ կարիքները: Մասնակցությունը պետք է լինի թե՛ պարտադիր, թե՛ կամավոր հիմունքներով: Հատուկ ծրագիրն իրականացնող անձնակազմը պետք է անցած լինի լավ պատրաստություն՝ շարունակաբար զարգացնելով իր կոմպետենցիաները և անցնելով կանոնավոր վերահսկողություն:

Այլ համապատասխան գերատեսչությունների հետ համագործակցությունն անչափ կարևոր է, և հանրության համակարգված արձագանքները կազմում են դրա անբաժանելի մասը:

Ծրագրերը պետք է իրականացնեն իրենց աշխատանքի կանոնավոր գնահատումներ՝ դրանց արդյունավետությունն ու կարիքներին արձագանքելու կարողությունն ապահովելու համար: Այդ գնահատումը պետք է շեշտը դնի ծրագրի արդյունքների, այդ թվում՝ ռեցիդիվի շրջանակի մեջ չմտնող հայեցակետերի վրա, ինչպիսիք են՝ համոզմունքների փոփոխությունները, փոխվելու մոտիվացիան, ապրումակցման մակարդակի ավելացումը և այլն: Ծրագրերը պետք է հիմնվեն տեսության և փաստերի վրա հիմնված արդյունքների վրա:

125 Եվրոպայի խորհուրդ: (2021բ), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 108):

2.2 Երեխաների դեմ սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերը

Երեխա զոհերի նկատմամբ սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերով պահանջվում են հատուկ երաշխիքներ: Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունների, այդ թվում՝ Ռուսաստանի Դաշնության և Թունիսի կողմից վավերացված՝ Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայով (Լանզարոտեի կոնվենցիա) սահմանվում են սեռական բնույթի բռնության և այլ հանցանքների համար դատապարտված անձանց ու հարակից մեղադրանքների առնչությամբ քրեական վարույթում ընդգրկված անձանց ուղղված միջամտության ծրագրերի և միջոցների վերաբերյալ պարտավորություններ (15-րդ և 16-րդ հոդվածներ): Լանզարոտեի կոնվենցիայով կողմերից պահանջվում է նաև նախաձեռնել այն անձանց ուղղված կանխարգելիչ միջամտության ծրագրեր, որոնք մտավախություն ունեն, որ կարող են կատարել վերը նշված հանցանքներից որևէ մեկը (7-րդ հոդված):

Լանզարոտեի կոնվենցիայի 18-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ երեխայի նկատմամբ սեռական բնույթի բռնության հանցանքը սահմանվում է որպես այն երեխայի նկատմամբ սեքսուալ բնույթի գործողություններ դիտավորությամբ կատարելու արարքը, որը, ազգային իրավունքի համաձայն, չի հասել սեքսուալ բնույթի գործողությունների համար օրենքով սահմանված տարիքին: 18-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ քրեականացվում է նաև ցանկացած երեխայի հետ սեքսուալ բնույթի գործողությունների մեջ ներգրավվելը, եթե «գործադրվել է հարկադրանք, ուժ կամ սպառնալիք», կամ եթե անձը բռնությունը կատարել է «երեխայի նկատմամբ վստահության, իշխանության կամ ազդեցության՝ ընդունված դիրքի օգտագործմամբ», կամ եթե «բռնությունը կատարվել է՝ օգտվելով երեխայի առանձնապես խոցելի իրավիճակից»: Կոնվենցիայի բացատրական զեկույցում նշվում է, որ այդ հանցանքների բաղկացուցիչ տարրերը պետք է գնահատվեն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի հիման վրա:[126] *Մ.Ս.-ն ընդդեմ Բուլղարիայի գործով* [M.C. v. Bulgaria] կայացրած իր վճռում դատարանը ճանաչել է պետությունների պոզիտիվ պարտավորությունը՝ քրեականացնելու և արդյունավետորեն հետապնդելու «առանց անձի ազատ կամահայտնության հիման վրա տրված համաձայնության ցանկացած սեքսուալ բնույթի գործողություն, այդ թվում՝ տուժողի կողմից ֆիզիկական դիմադրության բացակայության դեպքում»:[127]

Ի լրումն 18-րդ հոդվածի, Լանզարոտեի կոնվենցիայով պահանջվում է նաև քրեականացնել երեխաների նկատմամբ սեռական բնույթի բռնության այլ հատուկ ձևերը, այդ թվում՝ ի թիվս այլ հանցանքների, մարմնավաճառության միջոցով երեխաների սեռական շահագործումը:[128]

Կարևոր է, որ Լանզարոտեի կոնվենցիայի 15-րդ, 16-րդ և 17-րդ հոդվածներով սահմանվում են հատուկ պարտավորություններ, որոնք վերաբերում են քրեական գործով քննություն անցնող՝ բռնություն գործադրած անձանց և երեխաների նկատմամբ սեռական բռնություն գործադրելու համար դատապարտված անձանց ուղղված միջամտության ծրագրերին կամ միջոցառումներին:

126 Եվրոպայի խորհուրդ: (2007թ.): Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի բացատրական զեկույց: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/16800d3832 (տե՛ս պարբերություն 121):

127 Եվրոպայի խորհուրդ: (2003թ.): Մարդու իրավունքների եվրոպական դատարան, *Մ.Ս.-ն ընդդեմ Բուլղարիայի գործ*, Գանգատ թիվ 39272/98: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ www.coe.int/t/dg2/ equality/domesticviolencecampaign/resources/M.C.v.BULGARIA_en.asp (տե՛ս պարբերություն 166):

128 Օր.՝ երեխաների սեռական շահագործում մարմնավաճառության մեջ (,երեխայի մարմնավաճառությունե) և երեխաների նկատմամբ սեռական բնույթի բռնության նյութերի արտադրություն, առաջարկ, տարածում, գնում, տիրապետում և գիտակցաբար հասանելիության ձեռքբերում (,մանկական պոռնոգրաֆիաե), երեխաների կոռուպցիա, երեխաներին սեռական նպատակներով առաջարկ անել (,գրումինգե):

Հոդված 15. Ընդհանուր սկզբունքները

1. Յուրաքանչյուր Կողմ իր ներպետական իրավունքին համապատասխան ապահովում կամ խթանում է 16-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերություններում նշված անձանց ուղղված արդյունավետ միջամտության ծրագրերը կամ միջոցները՝ երեխաների նկատմամբ սեռական բնույթի հանցանքների կրկնման ռիսկերը կանխարգելելու կամ նվազագույնի հասցնելու նպատակով: Նման ծրագրերը կամ միջոցները հասանելի են վարույթի ընթացքում ցանկացած պահի, բանտի ներսում և բանտից դուրս՝ ներպետական իրավունքով սահմանված պայմանների համաձայն:

2. Յուրաքանչյուր Կողմ իր ներպետական իրավունքին համապատասխան ապահովում կամ խթանում է իրավասու մարմինների, մասնավորապես առողջապահական ծառայությունների և սոցիալական ծառայությունների, ինչպես նաև դատական մարմինների ու 16-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերություններում նշված անձանց համար պատասխանատու այլ մարմինների միջև գործընկերության կամ համագործակցության այլ ձևերի զարգացումը:

3. Յուրաքանչյուր Կողմ իր ներպետական իրավունքին համապատասխան գնահատում է սույն Կոնվենցիային համապատասխան սահմանված հանցանքները 16-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերություններում նշված անձանց կողմից կրկին կատարելու վտանգավորությունը և հնարավոր ռիսկերը՝ համապատասխան ծրագրերը կամ միջոցները նախանշելու նպատակով:

4. Յուրաքանչյուր Կողմ իր ներպետական իրավունքին համապատասխան գնահատում է իրականացված ծրագրերի և միջոցների արդյունավետությունը:

Հոդված 16. Միջամտության ծրագրերի և միջոցների շահառուները

1. Յուրաքանչյուր Կողմ իր ներպետական իրավունքին համապատասխան ապահովում է, որ սույն Կոնվենցիային համապատասխան սահմանված որևէ հանցանքի առնչությամբ քրեական վարույթում ընդգրկված անձինք կարողանան մասնակցել 15-րդ հոդվածի 1-ին պարբերությունում նշված ծրագրերին կամ միջոցներին այն պայմաններով, որոնք ոչ վնաս են հասցնում, ոչ էլ հակասում են պաշտպանության կողմի իրավունքներին և արդար ու անաչառ դատավարության պահանջներին, և մասնավորապես՝ պատշաճ կերպով պահպանելով անմեղության կանխավարկածի սկզբունքը կարգավորող կանոնները:

2. Յուրաքանչյուր Կողմ իր ներպետական իրավունքին համապատասխան ապահովում է, որ սույն Կոնվենցիային համապատասխան սահմանված որևէ հանցանքի համար դատապարտված անձինք կարողանան մասնակցել 15-րդ հոդվածի 1-ին պարբերությունում նշված ծրագրերին կամ միջոցներին:

3. Յուրաքանչյուր Կողմ իր ներպետական իրավունքին համապատասխան ապահովում է, որ միջամտության ծրագրերն կամ միջոցները մշակվեն կամ հարմարեցվեն այնպես, որ բավարարեն սեռական բնույթի հանցանքներ կատարող երեխաների զարգացման կարիքները, այդ թվում՝ այն երեխաների, որոնց տարիքը ցածր է քրեական պատասխանատվության ենթարկվելու համար սահմանված տարիքից՝ նրանց սեռական վարքագծի հետ կապված խնդիրները հասցեագրելու նպատակով:

Հոդված 17. Տեղեկատվությունը և համաձայնությունը

1. Յուրաքանչյուր Կողմ իր ներպետական իրավունքին համապատասխան ապահովում է, որ 16-րդ հոդվածում նշված անձինք, որոնց առաջարկվել են միջամտության ծրագրերը կամ միջոցները, ամբողջությամբ տեղեկացված լինեն առաջարկի պատճառների մասին և համաձայն լինեն ծրագրին կամ միջոցին՝ ամբողջությամբ իրազեկ լինելով փաստերի մասին:

2. Յուրաքանչյուր Կողմ իր ներպետական իրավունքին համապատասխան ապահովում է, որ այն անձինք, որոնց առաջարկվել են միջամտության ծրագրերը կամ միջոցները, կարողանան հրաժարվել դրանցից, իսկ դատապարտված անձանց դեպքում նրանք իրազեկվեն դրանցից հրաժարման հնարավոր հետևանքների մասին:

Բացի դրանից, Լանզարոտեի կոնվենցիայի 7-րդ հոդվածով նախատեսվում են կանխարգելիչ միջամտության ծրագրերին վերաբերող հատուկ պարտավորություններ: Այդ դրույթը Կողմերից պահանջում է, որ այն «անձինք, որոնք մտավախություն ունեն, որ կարող են կատարել սույն Կոնվենցիային համապատասխան սահմանված հանցանքներից որևէ մեկը, անհրաժեշտության դեպքում կարողանան մասնակցել արդյունավետ միջամտության ծրագրերին կամ միջոցներին, որոնք նախատեսված են գնահատելու և կանխարգելելու կատարվող հանցանքների ռիսկը»:

Նույն կերպ, «Երեխաների նկատմամբ սեռական բռնարարքի և սեռական շահագործման, ինչպես նաև մանկական պոռնոգրաֆիայի դեմ պայքարի մասին» ԵՄ հրահանգը (2011/93/ԵՄ) իր անդամ պետությունների համար սահմանել է պարտավորություններ՝ ներդրումներ կատարելու կանխարգելիչ միջամտության այն ծրագրերում, որոնց թիրախում երեխաների նկատմամբ սեռական բռնարարքի որևէ հանցանք կատարելու մտավախություն ունեցող մարդիկ են:[129] Հրահանգով պահանջվում է նաև միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու համար քրեական վարույթով անցնող և սեռական բռնության համար դատապարտված անձանց համար բանտում ու բանտից դուրս միջամտության ծրագրերի հասանելիությունը՝ ռեցիդիվից խուսափելու համար:[130] Եվրոպական հանձնաժողովի համատեղ հետազոտական կենտրոնը ջանքեր է գործադրել այդ ծրագրերի հասանելիությունը դյուրացնելու, և բռնություն գործադրող անձանց կանխարգելմանն ուղղված նախաձեռնությունները քարտեզագրելու ու դրանց մասին տեղեկություններ տարածելու համար: [131]

Խոստումնալից գործելակերպեր

Եվրոպական հանձնաժողովի համատեղ հետազոտական կենտրոնը մշակել է դասակարգման չափորոշիչներ՝ Եվրոպական միության անդամ պետությունների մակարդակով երեխաների նկատմամբ սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված առկա ծրագրերը քարտեզագրելու և դրանց որակը վերլուծելու համար: Այն մշակելու է կանխարգելման հարթակ՝ այդ ծրագրերի իրականացման գործում անդամ պետություններին և այլ շահագրգիռ կողմերին աջակցելու համար:

Միացյալ Թագավորությունում գործունեություն իրականացնող ,Lucy Faithfull Foundation (LFF)ե ՀԿ-ն մշակել է երեխաների նկատմամբ սեռական բռնարարքի կանխարգելման գործիքակազմ, որը կկիրառվի միջազգային մակարդակում: Ավելին, այն ստեղծել է երեխաների նկատմամբ սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված՝ գործող ծրագրերի վերաբերյալ տվյալների շտեմարան, որը ծրագրերը դասակարգում է՝ ըստ տարբեր չափորոշիչների (թիրախային խումբ, երկրի լեզու, վարկանիշ, իրականացման եղանակ և այլն):

Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում երեխաների նկատմամբ սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերը տարբերվում են բազմաթիվ առումներով: Դրանք ներառում են ծառայություններ մատուցողի տեսակը (կա՛մ պետական գերատեսչություններ կա՛մ ՀԿ-ներ), կանխարգելման մակարդակը (առաջնային, երկրորդային, երրորդային և չորրորդային), նրանց թիրախային բնակչությունը (սեռական բնույթի հանցանք կատարող չափահաս անձինք կամ երեխաներ) և դրանց հիմնական մեթոդաբանական առանձնահատկությունները (մոտեցումը, տևողությունը, ձևաչափը): Թեև գոյություն ունեն մի շարք հիմնական կանխարգելման ծրագրեր, այնուամենայնիվ, սույն բաժնում կներկայացվեն երկրորդային և երրորդային կանխարգելման ծրագրերը:

129 Եվրոպական միություն: (2011թ.): Երեխաների նկատմամբ սեռական բռնարարքի, սեռական շահագործման և մանկական պոռնոգրաֆիայի դեմ պայքարի մասին և Խորհրդի 2004/68/ԱՆԳ շրջանակային որոշումը փոխարինող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2011 թվականի դեկտեմբերի 13-ի 2011/93/ԵՄ հրահանգ, Եվրոպական միության պաշտոնական տեղեկագիր: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://data.europa.eu/eli/dir/2011/93/oj (տե՛ս 22-րդ հոդվածը):
130 Եվրոպայի խորհուրդ: (1989թ.): Մարդու իրավունքների կոմիտեի 35-րդ նստաշրջանին ընդունված՝ ՔՔԻԿ-ի Ընդհանուր մեկնաբանություն թիվ 17. հոդված 24 (Երեխաների իրավունքները): Հասանելի է հետևյալ հղմամբ՝ www.refworld.org/pdfid/45139b464.pdf:
131 Դի Ջիոյա, Ռ. և Բեսլեյ, Լ. (2023թ.): Երեխաների նկատմամբ սեռական բռնարարքի և սեռական շահագործման հարցում օգնություն հայցողներին աջակցելու և բռնություն գործադրող անձանց վարքագիծը կանխելու նախաձեռնություններ. Եվրոպական հանձնաժողով, Համատեղ հետազոտությունների կենտրոն: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://data.europa.eu/doi/10.2760/600662, Դի Ջիոյա, Ռ. և Բեսլեյ, Լ. (2018թ.): Երեխաների նկատմամբ սեռական բռնարարքի դեմ պայքար. հանցանք կատարած անձանց ուղղված կանխարգելման քաղաքականություններ: Եվրոպական հանձնաժողով, Համատեղ հետազոտությունների կենտրոն: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https:// data.europa.eu/doi/10.2760/48791, Դի Ջիոյա, Ռ. և այլք, (2022թ.), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 112):

Ավելին, երեխաների նկատմամբ սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերն ավելի քիչ են, քան ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերը: Ինչպես ցույց են տվել սույն ուսումնասիրության համար իրականացված հարցման պատասխանները, պարտադիր ծրագրերին մասնակցությունը հիմնականում հնարավոր է դատական որոշումների միջոցով (67%): Պարտադիր ծրագրերին հաճախ մասնակցությունը տեղի է ունենում նաև որպես պրոբացիոն միջոցառումների մաս (52%) կամ բանտում աշխատող մասնագետների կողմից ուղղորդմամբ (43%): Ոստիկանությունը և (կամ) սոցիալական ծառայությունները հազվադեպ են ուղղորդումներ կատարում (19%): Հարցմամբ պարզվել է, որ զոհերին աջակցություն ցուցաբերող ծառայությունները, երեխաների պաշտպանությամբ զբաղվող ծառայությունները կամ ալկոհոլի և թմրանյութերի չարաշահման դեմ պայքարի հարցերով ծառայություններն ուղղորդումներ չեն կատարում:

Երեխաների նկատմամբ սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի համար մեկ այլ մարտահրավերն իրենց աշխատանքի համարժեք գնահատումն ապահովելն է: Սույն ուսումնասիրության շրջանակներում իրականացված գրականության ուսումնասիրությունը ցույց է տվել, որ թեև ուսումնասիրությունների մեծ մասում նշվում է գնահատման միջոցի ինչ-որ եղանակ, այնուամենայնիվ, առկա են դրանց ամբողջականության և համարժեքության մակարդակի տարբերություններ: Ակադեմիական ուսումնասիրություններում գնահատումը, որպես կանոն, քանակական է և իրականացվում է վալիդացված թեստերի միջոցով: Թեև որոշ ուսումնասիրություններում նշվում են էմոցիոնալ կարգավորման և կյանքի որակի հետ կապված այլ միջոցների մասին, այնուամենայնիվ, հաճախ ոչ բավարար ուշադրություն է դարձվում ռեցիդիվին՝ որպես հիմնական ցուցիչի կամ օգտատերերի շրջանում ծրագրից բավարարվածության՝ որպես որակի երաշխիքի: Ծրագրերն ապահովողների շրջանում անցկացված հարցման արդյունքները ցույց են տվել, որ ծրագրերի մեծ մասն աշխատանքի արդյունքների գնահատում չի իրականացնում (57%), իսկ այն ծրագրերը, որոնք իրականացնում են աշխատանքի արդյունքների գնահատում, այն իրականացնում են ծրագրից բավարարվածության կամ օգտատերերի կողմից լրացված ինքնագնահատման հարցաշարերի հիման վրա: Դրանք կարող են հիմնված լինել նաև մասնագետների կողմից՝ օգտատերերի գրանցած առաջընթացի գնահատման վրա: Վերջապես, մեկ այլ կարևոր մարտահրավերը սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված՝ փաստերի վրա հիմնված ծրագրերի բացակայությունն է, ինչպես վկայում էին հարցման պատասխանները (62%): Կարևոր է նշել, որ շատ ծրագրերի դեպքում հաջողությունը հաճախ ավելի շուտ գնահատվում է ծրագրի ամփոփման ցուցանիշներով, այլ ոչ թե վարքագծի ու վերաբերմունքի փոփոխություններով: Ինչ վերաբերում է այլ կանխարգելիչ միջամտության ծրագրերին՝ դրանք դժվարությամբ են գրանցում առողջության և բարեկեցության ոլորտում արդյունքներ:

Երեխաների նկատմամբ սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրեր տրամադրվում են ինչպես պետական գերատեսչությունների, այնպես էլ ՀԿ-ների կողմից: Դժվար է որոշել այս ոլորտում անձնակազմի պատրաստվածության և կոմպետենտության մակարդակը, քանի որ ծրագրերը բավականին տարբեր են, մինչդեռ գրականության ուսումնասիրությամբ վերհանված հասանելի ուսումնասիրությունները չեն պարունակում այդպիսի տեղեկություններ:

Այնուամենայնիվ, ինչպես նշվում է սույն ուսումնասիրության նպատակների համար ուսումնասիրված ծրագրերի 43%-ի կողմից, այդ ծրագրերի հիմնական մարտահրավերներից մեկը վերապատրաստված անձնակազմի բացակայությունն է՝ մարդկային ռեսուրսների բացակայությունը դարձնելով հիմնական մարտահրավեր: Ուսումնասիրված կազմակերպություններից շատերը նշել են, որ իրենք իրենց անձնակազմի անդամների համար անցկացնում են առանց աշխատանքից կտրվելու վերապատրաստում (95%), կազմակերպվում են թիմային հանդիպումներ և վերահսկում են անձնակազմի աշխատանքը (90%):

Երեխաների նկատմամբ սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի կողմից ռիսկերի գնահատման գործիքների կիրառումը մեկ այլ կարևոր խնդիր է: Ակադեմիական գրականության մեջ հաճախ բացակայում են ռիսկերի գնահատման գործիքների, ինչպես նաև դրանց կիրառման հաճախականության վերաբերյալ կոնկրետ տեղեկություններ: Բացակայում են նաև բռնություն գործադրող տղամարդկանց և կանանց հետ կապված ռիսկերի գնահատման հնարավոր տարբերությունների վերաբերյալ հատուկ մանրամասներ: Սույն ուսումնասիրության շրջանակներում իրականացված հարցման արդյունքները ցույց են տալիս, որ երեխաների նկատմամբ սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրեր իրականացնող գրեթե բոլոր կազմակերպությունները կիրառում են ռիսկերի գնահատման գործիքներ (95%), թեև գործիքների տեսակները տարբեր ծրագրերում տարբեր են: Դրանցից միայն կեսն է ռիսկերը բացառապես գնահատում ծրագրում ընդգրկվելու փուլում (48%)՝ մատնանշելով ժամանակի

ընթացքում ռիսկերի դինամիկ գնահատման թերությունները: Ուսումնասիրված ծրագրերի մյուս կեսը ռիսկը գնահատում է կա՛մ ծրագրում ընդգրկվելու, կա՛մ այն ավարտելու ժամանակ (24%), իսկ ինչն ավելի խոստումնալից է՝ ծրագրի երեք փուլերի ընթացքում՝ ծրագրում ընդգրկման, ծրագրի ընթացքում և դրա ավարտից հետո (29%):

Երեխաների նկատմամբ սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերն առաջարկում են տարբեր տեսակի միջամտություններ՝ կախված նրանից, թե դրանք նախատեսված են որպես երկրորդային, թե երրորդային կանխարգելում: Երկրորդային կանխարգելման ծրագրերի թիրախային բնակչությունն այն անձինք են, որոնք մտավախություն ունեն, որ կարող են սեռական բռնարարք կատարել երեխաների նկատմամբ, կամ այն անձինք են, որոնք երեխաների նկատմամբ սեռական բռնարարք կատարելու համար գտնվում են քրեական հետապնդման մեջ: Թիրախային բնակչության ընտրությունը պայմանավորված է գործող ազգային իրավական և քաղաքականության շրջանակից: Գրականության ուսումնասիրության և սույն ուսումնասիրության շրջանակներում իրականացված հարցման արդյունքները ցույց են տալիս, որ երկրորդային կանխարգելման ծրագրերը հիմնականում ինքնաուղղորդման ծրագրեր են, մասնավորապես՝ կայքեր, որտեղ անձինք կարող են ինքնուրույն անցնել առցանց մոդուլներ:[132] Այդ ծրագրերը հիմնականում անանուն են, իսկ որոշներն ունեն ֆորումներ կազմակերպելու տարբերակ, որը մասնակիցներին տրամադրում է հաղորդակցվելու տարածք: Երկրորդային կանխարգելման մյուս ծրագրերն ունեն թեժ գծեր, որոնցից մի մասն առաջարկում է լրացուցիչ ծառայություններ, ինչպիսիք են՝ ինքնաաջակցման նյութերը, ինչպես նաև առաջնային շփումից հետո անհատական և (կամ) թիմային հանդիպումներ:

Երրորդային կանխարգելման ծրագրերն առաջարկվում են այն անձանց, որոնք արդեն դատապարտվել են քրեական հանցանք կատարելու համար: Այդ ծրագրերը ներառում են ինչպես բանտում, այնպես էլ համայնքում իրականացվող միջամտության ծրագրեր՝ անհատական և (կամ) խմբային հանդիպումների միջոցով: Այդ ծրագրերի մեծ մասն առաջարկում է անհատական հանդիպումներ (42.4%), մինչդեռ մյուսներն առաջարկում եմ թե՛ խմբային և թե՛ անհատական հանդիպումներ (27%): Որոշ ծրագրեր տրամադրում են միայն խմբային հանդիպումներ (24%): Քիչ թվով ծրագրեր կազմակերպում են նաև ոչ թերապևտիկ բնույթի խմբային հանդիպումներ՝ կիրառելով, օրինակ՝ աջակցության և հաշվետվողականության շրջանակներ մոդելը (3%): Հետաքրքիր է, որ երրորդային կանխարգելման մեկ ծրագիրը հիմնված է վեբ տեխնոլոգիաների վրա, իսկ մյուս երկուսը բաղկացած են առցանց հավելվածներից, որոնք օգտագործվում են երեխաների նկատմամբ սեռական բռնություն գործադրող անձանց էլեկտրոնային սարքերը մշտադիտարկելու համար, մասնավորապես՝ կապված երեխաների նկատմամբ սեռական բռնարարքի և շահագործման հանցանքների հետ:

Խոստումնալից գործելակերպեր

Շվեդիայում «Հարաբերություններ և համակեցություն» ծրագիրը (ROS) իրականացվում է բանտերում և դատապարտված անձանց բաց խնամքի հաստատություններում: Այդ ծրագիրն ուղղված է բռնություն գործադրող անձանց ապրումակցման կարողությունը և զգացմունքներն ու հարաբերությունները կառավարելու մեթոդների վերաբերյալ նրանց ընկալումը բարձրացնելուն: Այն կազմակերպում է ինչպես անհատական, այնպես էլ խմբային հանդիպումներ: Գոյություն ունի նաև ROS ծրագրի՝ երեխաների համար հարմար տարբերակը՝ ուղղված վնասակար սեռական վարքագիծ դրսևորող երեխաներին և երիտասարդներին:

Աջակցության և հաշվետվողականության շրջանակներ (ԱՀՇ) ծրագիրը սկսվել է իրականացվել Կանադայում 1990-ականների կեսերին՝ որպես սեռական բնույթի հանցանքների կատարման համար դատապարտված միջին և բարձր ռիսկային խմբի տղամարդկանց՝ համայնք ինտեգրման ծրագիր: Այդ ժամանակից ի վեր այն ամբողջ աշխարհում ենթարկվել է բազմաթիվ գնահատումների և ներկայումս գոյություն ունի ավելի քան տասը երկրներում: Այն Եվրոպական միության կողմից համարվում է խոստումնալից գործելակերպ: Թեև ԱՀՇ-ն նախատեսված է որպես երրորդային միջամտության ծրագիր, այնուամենայնիվ, այն ավելի հաճախ համարվում է չորրորդային ծրագիր:

132 Հատուկ առցանց մոդելների օրինակներն են՝ ,ReDirectionե ծրագիրը, (www.mielenterveystalo.fi/en/self-help/redirection-self-help- program-stop-using-csam), ,Troubled-desireե ծրագիրը (https://troubled-desire.com/en/), ,Project Bridgeե ծրագիրը (www.iterapi.se/sites/ bridge/#):

Այդ ծրագրերի տևողությունը տատանվում է մի քանի շաբաթից մինչև անսահմանափակ ժամկետ: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ հարցմանը մասնակցած ռեսպոնդենտները միշտ չէ, որ տրամադրել են ծրագրի տևողության վերաբերյալ տեղեկություններ, ինչը հանդիսանում է սույն ուսումնասիրության որոշ սահմանափակումները:

Ինչ վերաբերում է բովանդակությանը կամ կիրառվող մոդելին՝ երկրորդային և երրորդային ծրագրերի մեծ մասը հիմնված է կոգնիտիվ-վարքային թերապիայի կամ կոգնիտիվ-վարքային թերապիայի ու այլ թերապևտիկ մոտեցումների համակցության վրա: «Ռիսկ-կարիք-զգայունություն» մոտեցումը և «լավ կյանքի մոդելը» առավել հաճախ կիրառվող մոդելներն են:

Սույն ուսումնասիրության շրջանակներում իրականացվող հարցման արդյունքները ցույց են տալիս, որ երեխաների նկատմամբ սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի մեծ մասը նախատեսված են ինչպես չափահաս տղամարդկանց, այնպես չափահաս կանանց համար (95%), ընդ որում դրանց մեկ քառորդը նախատեսված է միայն չափահաս տղամարդկանց համար (24%): Այնուամենայնիվ, չափահաս տղամարդկանց և կանանց համար ռիսկերի գնահատման գործիքների առումով որևէ տարբերություն չկա: Հարցման արդյունքների համաձայն՝ երեխաների նկատմամբ սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի անձնակազմի անդամների կեսից ավելին նշել է, որ իրենց միջամտության ժամանակ չեն առաջնորդվում հատուկ գենդերային մոտեցմամբ (52%):

Քիչ թվով ծրագրեր (5%-ից պակաս) են ադապտացված հոգեկան առողջության լուրջ խնդիրներ ունեցող անձանց կարիքներին: Ավելին, հարցմանն արձագանքած մի շարք ծրագրեր սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ընդհանուր ծրագրեր են, որոնք ընդգրկում են նաև երեխաների նկատմամբ սեռական բնույթի հանցանքներ կատարող անձանց՝ չհստակեցնելով, սակայն, թե արդյոք դրանք կիրառում են զոհի տարիքին համապատասխանեցված մոտեցում: Ավելին, երբեմն անհասկանալի է, թե արդյոք ինչպես երկրորդային, այնպես էլ երրորդային կանխարգելում իրականացնող ծրագրերը կազմակերպում են այնպիսի հանդիպումներ, որոնք համախմբում են դեռևս հանցանք չկատարած և արդեն դատապարտված անձանց: Հետազոտությունը ցույց է տալիս, որ առկա է այդ խմբերից յուրաքանչյուրի համար առանձին մոտեցումներ առաջարկելու խիստ անհրաժեշտություն, քանի որ այն կարող է բացասական ազդեցություն ունենալ դեռևս հանցանք չկատարած անձանց վրա: Այս վերջին խումբն ավելի մեծ օգուտ կքաղի նրանց ընդհանուր բարեկեցության բարելավմանն առնչվող նպատակների ուժեղացված շեշտադրումից, մինչդեռ հանցանք կատարած անձանց համար կարող է պահանջվել առավել ինտենսիվ ռեաբիլիտացման ծրագիր: Հետազոտությամբ ընդգծվել է, որ, օրինակ՝ «Dunkelfeld» կանխարգելման նախագծում, որը Գերմանիայում երեխաների նկատմամբ սեռական բռնություն գործադրելու ռիսկ ունեցող անձանց կանխարգելման և ռեաբիլիտացման ծրագիր է, «*այն անձինք, որոնք ունեն, և որոնք չունեն հանցանքներ կատարելու պատմություն, տարբեր կերպ են արձագանքում բուժմանը. այսինքն՝ ներխմբային ռեաբիլիտացման ազդեցություններն առավել ցայտուն են եղել այն անձանց դեպքում, որոնք ունեցել են հանցանքներ կատարելու պատմություն, և ռեաբիլիտացման մեջ որևէ էական փոփոխություն չի արձանագրվել հանցանքներ կատարելու պատմություն չունեցող անձանց դեպքում*»:[133] Այնուհետև նշվել է, որ «Dunkelfeld» նախագիծը որոշ ճշգրտումներ է կատարել երեխաների նկատմամբ սեռական բռնարարքի վերաբերյալ նյութերի օգտագործման պատմության ունեցող և չունեցող անձանց մեկ ընդհանուր խմբում ընդգկելու բացասական հետևանքները վերացնելու համար:[134]

133 Ստեֆենս, Ս., Էլչուկ, Դ., Դավիդսոն, Մ. և Ուլլիամս, Ս. (2022թ.): Մանկական սեռական բռնարարք կատարելը կանխարգելելուն ուղղված ծրագրերի գնահատում: *Ընթացիկ հոգեբուժական հետազոտությունների վերաբերյալ զեկույցներ*, *24*(11), 679-685: https://doi.org/10.1007/s11920-022-01375-8:

134 Նույն տեղում:

Երեխաների նկատմամբ սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի նախաձեռնման և իրականացման վերաբերյալ առաջարկություններ

Երեխաների նկատմամբ սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերը պետք է առաջնահերթություն տան երեխաների իրավունքներին ու բարեկեցությանը և պետք է շեշտադրեն մարդու իրավունքների մոտեցումը: Այդ ծրագրերը պետք է համապատասխանեցված լինեն տարբեր բնութագրերով բռնություն գործադրող անձանց կարիքներին և զոհերի հետ նրանց հարաբերություններին:

Այդ ծրագրերը պետք է ընդունեն ռիսկը որպես դինամիկ, որը պետք է գնահատվի և կառավարվի ծրագրի տևողության ամբողջ ընթացքում: Տարբեր տեսակի բռնություն գործադրող անձանց դեպքում պետք է վերհանվեն տարբեր ռիսկեր, և ռիսկերի գնահատման գործիքները պետք է համապատասխանեցվեն՝ այդ տարբերությունները հաշվի առնելու համար: [135] Ռիսկերի գնահատման ժամանակ պետք է հաշվի առնել այնպիսի կարևոր գործոններ, ինչպիսիք են՝ բռնություն գործադրող անձի սեռը, տարիքը, հանցանքի և զոհի հետ փոխհարաբերությունների տեսակը:

Երեխաների նկատմամբ սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերը պետք է լինեն ինտեգրացված մոտեցման մաս՝ ընդգրկելով բոլոր շահագրգիռ կողմերին:

Այդ ծրագրերը պետք է լինեն նաև գենդերազգայուն և տարիքազգայուն՝ հասցեագրելով երեխաների նկատմամբ սեռական բռնարարքի համատեքստում գենդերի և տարիքի հետ կապված սոցիալական նորմերը: Օրինակ՝ այդ ծրագրերը պետք է հասցեագրեն երեխաների նկատմամբ բացասական պատկերացումները (օրինակ՝ որպես որոշումներ կայացնելու լիազորությունից զրկված կամ իրավունք չունեցող անձինք), և թե ինչպես են գենդերային կարծրատիպերն ազդում տղաների և աղջիկների՝ սեռական բռնության ենթարկվելու ռիսկերի վրա: Ծրագրերը պետք է նաև որդեգրեն ինտերսեկցիոնալ տեսանկյունը (օրինակ՝ հաշմանդամության նկատմամբ զգայուն մոտեցում): Այդ ծրագրերը պետք է իրականացվեն վերապատրաստված և կոմպետենտ անձնակազմի կողմից, որոնք ունեն երեխաների նկատմամբ սեռական բռնարարքի մասին գիտելիքներ և համապատասխանեցված միջամտություն կիրառելու ունակություն:

Ծրագրերը պետք է հետևողականորեն գնահատեն իրենց աշխատանքը և ներառեն երկարատև մշտադիտարկում իրականացնելու համակարգ: Գնահատման մեջ պետք է ներառվեն ռեցիդիվիզմի շրջանակից դուրս գտնվող այնպիսի հայեցակետեր, ինչպիսիք են կյանքի որակը, մտածողական գործընթացները և, ի թիվս այլնի, զոհի նկատմամբ ապրումակցումը: Վերջապես, հնարավորության դեպքում պետք է հավաքագրել ծրագրից օգտվողների, ընտանիքի անդամների կամ երեխա զոհերի դիտարկումները: Ծրագրերը պետք է նաև հիմնվեն տեսական և փաստերի վրա հիմնված արդյունքների վրա:

135 Տե՛ս նաև Դի Ջիոյա, Ռ. և Բեսլեյ, Լ.,-ի աշխատության մեջ: (2008թ.) Համատեղ հետազոտական կենտրոնի կողմից ներկայացված առաջարկությունները, մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 131):

2.3. Վնասակար սեռական վարքագիծ դրսևորող երեխաներին և երիտասարդներին ուղղված ծրագրերը

Այն դեպքում, երբ երեխաների նկատմամբ սեռական բռնությունը գործադրվում է այլ երեխաների կողմից, նրանց տարիքին և կարիքներին համապատասխանեցված միջամտության ծրագրեր մշակելիս անհրաժեշտ է ձեռնարկել պաշտպանության լրացուցիչ միջոցներ: Լանզարոտեի կոնվենցիայի 16-րդ հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ Կողմերը պետք է «*իրենց ներպետական իրավունքին համապատասխան ապահովեն, որ միջամտության ծրագրերը կամ միջոցները մշակվեն կամ հարմարեցվեն այնպես, որ բավարարեն սեռական բնույթի հանցանքներ կատարող երեխաների զարգացման կարիքները, այդ թվում՝ այն երեխաների, որոնց տարիքը ցածր է քրեական պատասխանատվության ենթարկվելու համար սահմանված տարիքից՝ նրանց սեռական վարքագծի հետ կապված խնդիրները հասցեագրելու նպատակով*»:

Վնասակար սեռական վարքագիծ

Վնասակար սեռական վարքագիծ դրսևորող երեխաների և երիտասարդների կողմից նման վարքագծի փաստացի տարածվածության վերաբերյալ լուրջ հետազոտությունները շատ քիչ են: Այնուամենայնիվ, Եվրոպայի խորհրդի Երեխայի իրավունքների հարցերով ղեկավար կոմիտեի (CDENF) և Երեխաների նկատմամբ բռնության հակազդման աշխատանքային խմբի (CDENF-GT-VAE) հրապարակումը վկայում է նրա մասին, որ սեռական բռնարարքի բոլոր դեպքերի մոտ մեկ քառորդից մեկ երրորդը կատարվում է 18 տարեկանից ցածր երեխաների կողմից:[136] Հրապարակումը պարզաբանում է, որ վնասակար սեռական վարքագիծը *«ներառում է երեխաների կողմից դրսևորվող վարքագծի լայն շրջանակ», որը «չի համապատասխանում զարգացման մակարդակին, կարող է վնասակար լինել սեփական անձի կամ ուրիշների համար և (կամ) բռնացող լինել մեկ այլ երեխայի, երիտասարդի կամ չափահաս անձի նկատմամբ»:* Այն նաև պարզաբանում է, որ «վնասակար սեռական վարքագիծ» եզրույթը չի սահմանափակվում միայն անօրինական արարքներով *և «հնարավորություն է ստեղծում, որ երեխայի սեռական վարքագծից բխող վնասը կարող է ուղղված լինել թե՛ իր դեմ, թե՛ վնասակար լինել մյուսների համար, որոնք զգում են այդ վարքագծի հետևանքները»*:[137]

Երեխաների և երիտասարդների կողմից կատարված սեռական բնույթի հանցանքները կամ երեխաների և երիտասարդների կողմից դրսևորվող վնասակար սեռական վարքագիծը[138] տարբերվում է չափահաս անձանց կողմից կատարվող հանցանքներից:[139] Հետազոտությունը ցույց է տալիս, որ վնասակար սեռական վարքագիծ դրսևորող երեխաների զգալի մասը նույնպես ունի սովորելու հետ կապված դժվարություններ կամ վերապրել է տրավմաներ, այդ թվում՝ նախկինում (սեռական) բռնարարք կամ անտեսում, ինչպես նաև այլ էմոցիոնալ, վարքային և հասակակիցների հետ կապված դժվարություններ:[140] Այնուամենայնիվ, կարևոր է նշել, որ վնասակար սեռական վարքագիծ դրսևորող երեխաների և երիտասարդների մեծ մասը չափահասության տարիքում սեռական բռնություն չի գործադրում:[141] Վերջին հետազոտությունը ցույց է տվել, որ եղբոր կամ քրոջ նկատմամբ սեռական բռնարարքը երեխաների և երիտասարդների շրջանում վնասակար սեռական վարքագծի ամենատարածված ձևերից մեկն է, որոնցից շատերը նախկինում հաճախ իրենք են ենթարկվել այդպիսի բռնարարքի:[142] Ավելին, երեխաների մեծամասնության դեպքում նրանց սեռական վարքագիծը կարող է չվկայել անհատական պաթոլոգիայի, այլ վկայել

136 Հաքեթթ, Ս. (2020թ.): Երեխաների կողմից դրսևորվող սեռական բռնություն և վնասակար սեռական վարքագիծ. բնույթը, պատճառները, հետևանքները և արձագանքները: Եվրոպայի խորհուրդ: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/09000016809eb593:

137 Նույն տեղում:

138 Առողջապահության և խնամքի գերազանցության ազգային ինստիտուտ: (2016թ.): *Երեխաների և երիտասարդների շրջանում վնասակար սեռական վարքագիծը:* ԱԽԳԱԻ: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ www.nice.org.uk/guidance/NG55:

139 Երեխաների նկատմամբ դաժանության կանխարգելման ազգային ընկերություն: (2021թ.): *Վնասակար սեռական վարքագիծ. վիճակագրական ակնարկ:* ԵԴԿԱԸ: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://learning.nspcc.org.uk/child-abuse-and-neglect/harmful-sexual-behaviour:

140 Երեխաների նկատմամբ դաժանության կանխարգելման ազգային ընկերություն: (2021թ.), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 139):

141 Երեխաների նկատմամբ դաժանության կանխարգելման ազգային ընկերություն: (2021թ.), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 139):

142 Քինգ-Հիլլ, Ս., Մըքքարթան, Կ. Ֆ. և Գիլսմանն, Ա. (2020թ.): *Հասկանալով եղբայրների կամ քույրերի նկատմամբ սեռական բռնությունը և արձագանքելով դրան:* Փալգրեյվ Մըքմիլլան:

բռնացող մշակութային նորմերի մասին:[143] Հետևաբար, կարևոր է գիտակցել, որ համատեքստը և բռնարարքի ենթարկված լինելու նախկին փորձը կարող է լուրջ դերակատարություն ունենալ, եթե երեխաները դրսևորում են վնասակար սեռական վարքագիծ:

Վնասակար սեռական վարքագիծ դրսևորող երեխաների և երիտասարդների նկատմամբ վերաբերմունքը՝ համեմատած բռնություն գործադրող չափահաս անձանց նկատմամբ վերաբերմունքի, միջամտության ռազմավարությունների ու մոտեցումների առումով տարբերվում է: Երեխաների և երիտասարդների կողմից դրսևորվող վնասակար սեռական վարքագիծը հասկանալու ամենաընդունված շրջանակն այդ վարքագիծը որպես սեռական ակտիվության ամբողջություն դիտարկելն է:[144] Թեև կա կարծիք, որ սեռական և սեռականացված վարքագիծը կազմում է երեխայի զարգացման նորմալ մասը,[145] այնուամենայնիվ, այն մտահոգիչ է դառնում, երբ հասնում է սեռական բռնարարքի և բռնության շեմին (սպեկտրի վերջը): Այդ վարքագիծը կարող է նաև վնասակար լինել այն դրսևորող երեխաների զարգացման համար, նույնիսկ եթե այն գտնվում է ուրիշների նկատմամբ բռնության շեմից ցածր մակարդակում: Սեռական ակտիվության ամբողջության վերը նկարագրված շրջանակը կարող է կիրառվել կանխարգելման բոլոր չորս մակարդակների նկատմամբ (առաջնային, երկրորդային, երրորդային և չորրորդային կանխարգելում) և կարող է կիրառել սոցիալ-էկոլոգիական մոտեցում, որը վերաբերում է միջամտության տարբեր մակարդակները, այն է՝ անհատական, հարաբերական և համայնքային մակարդակները դիտարկող համապարփակ մոտեցմանը: Այդ մոդելը հաշվի է առնում անհատական, հարաբերությունների, համայնքային և հասարակական գործոնների բարդ փոխհարաբերությունը և թույլ է տալիս հասկանալ այն գործոնների շրջանակը, որոնք մեծացնում կամ նվազեցնում են բռնության գործադրման ռիսկը: Օրինակներից մեկը Միացյալ Թագավորությունում «Brook Trafficking Light Tool» գործիքն է, որը կարող է կիրառվել ոչ միայն որպես երկրորդային կանխարգելիչ նախաձեռնություն՝ կանխելու վնասակար սեռական վարքագծի ի հայտ գալը, այլ նաև որպես երրորդային կանխարգելում:[146] Մեկ այլ օրինակ է համատեքստային պաշտպանությունը, որը ներառում է երիտասարդների և նրանց ընտանիքների ու համայնքների հետ աշխատանքը՝ արձագանքելու համար սեռական բռնարարքին և նվազեցնելու նորից հանցանք կատարելու հավանականությունը:[147] Համատեքստային պաշտպանությունը կամրջում է երրորդային ու չորրորդային կանխարգելումը և կիրառում է սոցիալ-էկոլոգիական մոտեցում:

Ինչպես չափահաս անձանց ուղղված ծրագրերը, այնպես էլ վնասակար սեռական վարքագիծ դրսևորող երեխաների և երիտասարդների ռեաբիլիտացման ծրագրերի մեծ մասը հոգեբանակրթական և կոգնիտիվ-վարքային բնույթի են:[148] Սույն ուսումնասիրության շրջանակներում իրականացված գրականության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ շատ քիչ տեղեկություններ կան անչափահասների առնչությամբ ռիսկի գնահատման մասին, ինչը կարող է կապված լինել երիտասարդներին առնչվող ռիսկերի համարժեք գնահատման շուրջ շարունակվող բանավեճերի հետ: Վնասակար սեռական վարքագիծ դրսևորող երիտասարդներին ուղղված ծրագրերը հաճախ ընդգրկում են տարիքային մեծ շրջանակ: Երբեմն գրականության մեջ կարելի է գտնել տարիքի վրա հիմնված նպատակային մոտեցումների վերաբերյալ տեղեկություններ, սակայն դրանք հաճախ սահմանափակ են և զուրկ են խորությունից ու մանրամասներից: Աղջիկների նկատմամբ գենդերային մոտեցումների մասին հպանցիկ կերպով հիշատակվել է միայն մի ծրագրի կողմից, որը մասնակցել է այդ ուսումնասիրության համար իրականացված հարցմանը: Բացի դրանից, միջգերատեսչական համագործակցության վերաբերյալ կան սահմանափակ տեղեկություններ, ինչը պետք է լինի առանցքային գերակայություն: Ինչպես չափահաս անձանց ուղղված ծրագրերի դեպքում, այնպես էլ այս դեպքում առկա է գնահատման չափորոշիչների հետ կապված շփոթություն, և ծրագրի մասնակիցների երիտասարդ տարիքն էլ ավելի է բարդացնում խնդիրը:

143 Հաքեթթ, Ս., (2020թ.), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 136):

144 Հաքեթթ, Ս. (2010թ.): Վնասակար սեռական վարքագիծ դրսևորող երեխաները և երիտասարդները: *Բարտեր Ս.-ի և Բերրիջ, Դ.-ի (խմբագիրներ) աշխատություն «Երեխաներն իրենց վա՞տ են դրսևորում»: Երեխաների և երիտասարդների միջև հասակակիցների կողմից բռնություն. Ուայլի-Բլեքուել:*

145 Երեխաների նկատմամբ դաժանության կանխարգելման ազգային ընկերություն: (2023թ.): *Վնասակար սեռական վարքագիծ:* ԵԴԿԱԸ: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ at https://learning. nspcc.org.uk/child-abuse-and-neglect/harmful-sexual-behaviour:

146 Քինգ-Հիլլ, Ս., Գիլսեևան, Ա. և Մըքքարթան, Կ. (2023թ.): Մասնագիտական արձագանքներ եղբայրների կամ քույրերի սեռական բռնության նկատմամբ: *Սեռական ագրեսիայի վերաբերյալ ամսագիր, 29(3)*, 1-15: https://doi.org/10.1080/13552600.2023.2241482:

147 Ֆիրմին, Ս. (2020թ.): *Համատեքստային պաշտպանություն:* Նորին Մեծության Պրոբացիայի հարցերով տեսչություն: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ www.justiceinspectorates.gov.uk/hmipro- bation/wp-content/uploads/sites/5/2020/11/Academic-Insights-Contextual-Safeguarding-CF-Nov-20-for-design.pdf:

148 Առողջապահության և խնամքի գերազանցության ազգային ինստիտուտ: (2016թ.), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 138):

Գոյություն ունեն վնասակար սեռական վարքագիծ դրսևորող երեխաներին ուղղված ծրագրերի և մոտեցումների որոշ խոստումնալից օրինակներ: Դրանցից է Մեծ Բրիտանիայում հիմնված «Turn the Page»[149] ծրագիրը, որը վնասակար սեռական վարքագիծ դրսևորող երեխաների համար մշակում է համընդհանուր, բազմահամակարգային ռեաբիլիտացում:[150] Ինչ վերաբերում է վնասակար սեռական վարքագծին՝ «Turn the Page» ծրագիրը ներառում է ոչ միայն վնաս հասցրած երեխաներին ուղղված կանխարգելիչ միջամտության ծրագրեր, այլ նաև նրանց ընտանիքներին և հասակակիցների լայն խմբերին ուղղված կանխարգելման ծրագրեր:[151] Դա հատկապես կարևոր է ներընտանեկան սեռական բռնարարքի համատեքստում, որի համար մշակվել է քարտեզագրման գործիք՝ օգնելու համար մասնագետներին հասկանալ, թե ինչպես կարելի է բարելավել ռեաբիլիտացման ծրագրերը:[152] Մեկ այլ խոստումնալից օրինակ է Բելգիայում «Sensoa Flag System» գործիքը, որը մշակվել է Ֆլամանդական փորձագիտական կենտրոն «Սենսոայիե կողմից՝ սեռական առողջությանն առնչվող հարցերի հասցեագրման համար: Այդ գործիքը մշակվել է՝ երեխաների և երիտասարդների շրջանում ռիսկային սեռական վարքագիծը գնահատելու և դրան արձագանքելու համար: Այն նման է Երեխաների նկատմամբ դաժանության կանխարգելման ազգային ընկերության (ԵԴԿԱԸ) կողմից Միացյալ Թագավորությունում մշակված «Brook Traffic Light System» հարթակին: Ավելին, վանդակում բերված օրինակներն արժանի են ուշադրության:[153]

Խոստումնալից գործելակերպեր

Դիմակայունության վրա հիմնված մոտեցումները և «լավ կյանքի մոդելը» (GLM) մշտապես առաջարկվել են որպես հեռանկարային գործելակերպեր և կիրառվել են տարբեր երկրներում: Դրանք առաջարկվել են նաև Եվրոպայի խորհրդի Երեխաների նկատմամբ բռնության հակազդման աշխատանքային խմբի (CDENF-GT-VAE) կողմից:

Դիմակայունության վրա հիմնված մոտեցման հիմնական տարրերն են՝

- երիտասարդների համար իրենց կյանքում առնվազն մեկ ոչ բռնացող վարքագիծ ունեցող չափահաս անձի հետ աջակցող հարաբերությունների զարգացումը,
- երիտասարդներին հասակակիցների հետ դրական և փոխադարձ հարաբերությունների հաստատմանն աջակցությունը,
- ուսման մեջ հաջողությունների և կրթական նվաճումների խրախուսումը,
- երիտասարդների տաղանդների և հետաքրքրությունների զարգացումը,
- ընտանիքի դիմակայունության ամրապնդումը՝ առաջնային խնամակալներին առաջարկելով հուսալի անձ, ում նրանք կարող են վստահել,
- մասնակցությունը և պլանավորումը խրախուսելը, որպեսզի երիտասարդներն ու ընտանիքները լինեն պլանավորման գործընթացի առանցքում, և
- երիտասարդներին ընձեռել հնարավորություններ՝ սահմանելու համար նպատակներ և հասնելու դրանց ու սոցիալականամետ հավակնություններին:

Նույն կերպ «լավ կյանքի մոդելը» նույնպես հիմնված է ուժեղ կողմերի վրա խարսխված մոտեցման վրա: Այն առաջարկում է, որ հոգեբանական բարեկեցության գաղափարը լինի սեռական բռնություն գործադրող անձանց հետ միջամտությունների առանցքում՝ սահմանելով ռեաբիլիտացիայի ձևն ու բովանդակությունը ռիսկերի կառավարման ձևի ու բովանդակության հետ մասին:

Ինչ վերաբերում է սեռական հանցանքի համար դատապարտված երիտասարդների չորրորդային կանխարգելմանը (այսինքն՝ շարունակական վնասի նվազեցումը, հանցանք կատարելուց զերծ

149 Երեխաների նկատմամբ դաժանության կանխարգելման ազգային ընկերություն: (2018թ.): *«Turn the Page» ծրագիր, ձեռնարկին համապատասխան մշակված ռեաբիլիտացման ծրագիր. վերջնական գնահատման զեկույց:* ԵԴԿԱԸ: Հասանելի է հետևյալ հղմամբ՝https://learning.nspcc.org.uk/research-resources/2017/turn-the-page-final-evaluation.

150 Հաքեթթ, Ս., Հոլմս, Դ. և Բրանիգան, Փ. (2016թ.): *Վնասակար սեռական վարքագծի շրջանակ. Վնասակար սեռական վարքագիծ դրսևորող երեխաների և երիտասարդների համար փաստերով հիմնավորված գործառական շրջանակ:* ԵԴԿԱԸ: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://durham-repository.worktribe.com/ output/1606288, ,Avon and Wiltshire Mental Health Partnership NHS Trustե կազմակերպություն: (2023թ.): ,Be Safe Servicеե ծրագիր: AWP: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ www.awp. nhs.uk/camhs/camhs-services/HSB-services/be-safe:

151 Ֆիրմին, Ս. (2020թ.), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 147):

152 Քինգ-Հիլլ, Ս., Գիլսենան, Ա. (2023թ.): *Եղբայրների կամ քույրերի սեռական վարքագծի քարտեզագրման գործիք:* Բիրմինգհեմի համալսարան: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ www.birming- ham.ac.uk/schools/social-policy/departments/health-services-management-centre/research/projects/2022/sibling-sexual-be- haviour-mapping/index.aspx.

153 Հաքեթթ, Ս. (2020թ.): *Երեխաների կողմից դրսևորվող սեռական բռնությունը և վնասակար սեռական վարքագիծը. բնույթը, պատճառները, հետևանքները և արձագանքները:* Հասանելի է հետևյալ հղմամբ՝ at https://rm.coe.int/cdenf-gt-vae-2020-04-hackett-harmful-sexual-behaviour-final/16809eb593:

մնալը և հասարակություն ինտեգրումը)՝ սա նորաստեղծ և բավարար չափով զարգացած ոլորտ չէ:[154] Այն նաև վիճելի ոլորտ է, որն ի սկզբանե դիտարկվում էր բացառապես երրորդային: Զուտ չորրորդային ծրագրերի օրինակ կարող է լինել «Աջակցության և հաշվետվողականության շրջանակները» երիտասարդների ծառայությունը, որը Միացյալ Թագավորությունում առաջին հերթին հանդիսանում է դատապարտված երիտասարդների համար մենթորության, ընդօրինակման օրինակ հանդիսացող անձանց միջոցով ուղղորդման և աջակցության ծառայություն:[155]

Վնասակար սեռական վարքագիծ դրսևորող երեխաներին և երիտասարդներին ուղղված ծրագրերի վերաբերյալ առաջարկություններ

Վնասակար սեռական վարքագիծ դրսևորող երեխաներին ուղղված ծրագրերը պետք է համապատասխանեցվեն երեխայի զարգացման տարիքին, փուլին և կարողություններին: Անչափ կարևոր է հաշվի առնել երեխայի սոցիալական և զարգացման համատեքստը՝ նրա վարքագծի և գործողությունների հնարավոր ազդեցության հետ միասին: Այդ ծրագրերը պետք է ստեղծեն արդյունավետ գնահատման և ուղղորդման ուղիներ՝ ապահովելու համար, որ երեխան ստանա իրեն առավել համապատասխանեցված միջամտություն: Ավելին, կարևոր է ապահովել ծառայություններից օգտվողների ներգրավվածությունը, որպեսզի ծրագրերը համապատասխանեն նպատակին, լինեն հասանելի և բավարարեն ծառայություններից օգտվողների կարիքները: Դա հատկապես բարդանում է երեխաների հետ աշխատելիս, ինչը պահանջում է լրացուցիչ երաշխիքներ, որոնց դեպքում կարող է օգտակար լինել այս ոլորտում հեռանկարային գործելակերպերի դիտարկումը:

Այդ ծրագրերը պետք է իրականացվեն վերապատրաստված և կոմպետենտ անձնակազմի կողմից: Դրանք պետք է հիմնված լինեն անհատականացված կանխարգելիչ միջամտության և ռեաբիլիտացման մոդելի վրա, որը կիրառում է ուժեղ կողմերի կամ դիմակայունության վրա հիմնված մոտեցում (այսինքն՝ հիմնվելով մարդու վարքագծի կամ գործողությունների ուժեղ կողմերի վրա, որը կօգնի նրանց փոխել իր վնասակար սեռական վարքագիծը):

Ծրագրերը չպետք է կենտրոնանան միայն առանձին անհատների վրա, որպեսզի հասցեագրեն ընտանիքի, հասակակիցների, դպրոցի և համայնքի այն մակարդակներում առաջացող վարքագծային գործոնները, որոնցում ներգրավված է երիտասարդը:[156]

Պետք է կիրառվեն տրավմաների մասին տեղեկացված մոտեցումներ՝ նպատակ ունենալով վերհանել ծրագրերին մասնակցող երեխաների կյանքում տեղի ունեցած տրավմաները և արձագանքել դրանց: Ավելին, ծրագրերը պետք է հաշվի առնեն ընտանեկան համակարգի և հասակակիցների ցանցի կարևորությունը: Անչափ կարևոր է հաշվի առնել բռնարարքի, դրա ռացիոնալացման և վնասակար սեռական վարքագծի ամրապնդման գործում պոռնոգրաֆիայի դերը՝ միևնույն ժամանակ հավասարապես ուշադրություն դարձնելով առցանց և անցանց վնասակար սեռական վարքագծին:

2.4. Սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի ստուգացանկերը

Սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի ստուգացանկերը նախատեսված են քաղաքականություն մշակողներին, կառավարություններին, միջազգային կազմակերպություններին և այդ ծրագրերն ապահովողներին ուղղություն ցույց տալու համար: Ստուգացանկում ամփոփված են ԳՐԵՎԻՈ-ի ելակետային գնահատման զեկույցներից, Եվրոպայի խորհրդի փաստաթղթերից և Եվրոպայում գործող ծրագրերի առնչությամբ հետազոտություններից տեղեկություններ (տե՛ս 2.1-2.3 բաժինները):

Ուղեցույցը կիրառելի է սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված այն ծրագրերի նկատմամբ, որոնք իրականացվում են բանտում, պրոբացիոն ծառայություն մատուցող կամ

154 Մըքքարթան, Կ. և Քեմշոլլ, Հ. (2023թ.): Չորրորդային կանխարգելման ներդնում. սեռական բռնարարքի կանխարգելման հարցում հանրային առողջապահական գործելակերպերի ամբողջական շրջանակի իմացություն: *Հանցանք կատարած անձանց թերապիայի և համեմատական քրեագիտության հարցերով միջազգային ամսագիր, 67*(2-3), 224-246: https://doi.org/10.1177/0306624X211049204:

155 ,Circles South Westե բարեգործական կազմակերպություն (2023թ.): Երիտասարդների հարցերով ծառայություն: CSW: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://circles-southwest.org.uk/services/young-peoples-services/:

156 Հաքեթթ, Ս. (2022թ.), մեջբերված աշխատության մեջ (ծանոթագրություն 153):

համայնքային հաստատություններում: Այն բաժանված է երեք հիմնական բաժինների. 1) չափահաս անձանց, հատկապես կանանց նկատմամբ սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրեր, 2) երեխաների նկատմամբ սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրեր, և 3) վնասակար սեռական վարքագիծ դրսևորող երեխաներին և երիտասարդներին ուղղված ծրագրեր:

Չափահաս անձանց, հատկապես կանանց նկատմամբ սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերը պետք է՝

- միշտ առաջնահերթությունը տան զոհերի անվտանգությունը, անձնական կյանքի անձեռնմխելիությանը, մարդու իրավունքներին և բարեկեցությանը,
- աշխատեն այն գիտակցումով, որ կանանց նկատմամբ սեռական բռնությունն արմատավորված է գենդերային անհավասարության վրա և վիճարկեն այն համոզմունքները, որոնք արդարացնում են կանանց նկատմամբ տղամարդկանց բռնությունը,
- խրախուսեն բռնություն գործադրող անձանց հասկանալ իրենց գործողությունների հետևանքները և դրանց համար ստանձնել պատասխանատվություն,
- շեշտադրեն անցյալի տարրերը (դիսֆունկցիոնալ կապվածություն, սեռական/ֆիզիկական/հուզական բռնարարք, սոցիալականացում), ներկայի տարրերը (սեռական բնույթի հանցանքի շարունակական կատարման հետ կապված գործոններ) և հետագա տարրերը (ռեցիդիվի կանխարգելման հմտությունների զարգացում),
- հասցեագրեն համաձայնության, սեռական ինքնավարության և անձնական անձեռնմխելիության հասկացությունները,
- ներառեն անհատապես ընտրված, ուժեղ կողմերի վրա հիմնված մոտեցում՝ միաժամանակ հավասարակշռելով սեռական բռնարարքի համատեքստի նյութն ու ընդհանուր քրեագիտական նյութը,
- ինտեգրեն սեռական բռնության թե՛ առցանց, թե՛ անցանց ուղղվածությունների վերաբերյալ դիտարկումները,
- շարունակաբար իրականացնեն ռիսկերի գնահատում՝ նպատակ ունենալով բացահայտել ինչպես ռեցիդիվիզմի հետ կապված ընդհանուր ռիսկերը, այնպես էլ սեռական բռնության հետ կապված հատուկ ռիսկերը,
- ադապտացվեն և արձագանքեն անձի կարիքներին՝ վերջիններիս հետ իրենց ընկալման մակարդակին հավասար աշխատելու համար, ինչը նշանակում է հաշվի առնել հոգեկան առողջությունը, նյարդաբազմազանությունը և հարակից այլ հարցեր,
- լինեն պարտադիր և կամավոր հիմունքներով,
- ունենան հատուկ ծրագրի իրականացման համար վերապատրաստված անձնակազմ, որը շարունակաբար զարգացնում է իր կարողությունները և անցնում է կանոնավոր վերահսկողություն,
- համագործակցեն այլ համապատասխան գերատեսչությունների հետ,
- իրականացնեն իրենց աշխատանքի կանոնավոր գնահատում, այդ թվում՝ այնպիսի գնահատման չափորոշիչների հիման վրա, որոնք դուրս են ռեցիդիվիզմի շրջանակից, ինչպիսիք են համոզմունքների փոփոխությունները, փոխվելու մոտիվացիան կամ ապրումակցման մակարդակի ավելացումը:

Երեխաների նկատմամբ սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերը պետք է՝

- առաջնահերթություն տան երեխաների իրավունքներին ու բարեկեցությանը, անվտանգությանն ու անձնական կյանքի անձեռնմխելիությանը,
- հարմարեցվեն տարբեր տեսակի բռնություն գործադրող անձանց բնութագրերին,
- շարունակաբար իրականացնեն ռիսկերի գնահատում բռնություն գործադրող անձանց տարբեր բնութագրերին հարմարեցված գործիքներով,
- իրենց մոտեցման մեջ հետևեն սոցիալ-էկոլոգիական մոդելին և լինեն գենդերազգայուն,[157]
- իրականացվեն վերապատրաստված և կոմպետենտ անձնակազմի կողմից,
- հետևողականորեն գնահատեն իրենց աշխատանքը, այդ թվում՝ երկարատև մշտադիտարկման ենթարկելու միջոցով: Գնահատման մեջ պետք է ներառվեն այնպիսի հայեցակետեր, ինչպիսիք են ռեցիդիվիզմը, կյանքի որակը և ապրումակցումը: Այլ իրավասու դերակատարներից (օրինակ՝ ընտանիքի անդամներից կամ, հնարավորության դեպքում, երեխա զոհերից) պետք է հավաքագրել դիտարկումները:

Սեռական վնասակար վարքագիծ դրսևորող երեխաներին և երիտասարդներին ուղղված ծրագրերը պետք է՝

- մշակված լինեն այնպես, որպեսզի հաշվի առնվեն երեխայի զարգացման տարիքը, փուլը և կարողությունները,
- հաշվի առնեն երեխայի սոցիալ-զարգացման համատեքստը, ինչպես նաև այն ազդեցությունը, որը դա կարող էր ունենալ նրա վարքագծի ու գործողությունների վրա,
- մշակեն արդյունավետ գնահատման և ուղղորդման ուղիներ, որպեսզի երեխան կարողանա ստանալ լավագույնը և հնարավոր ամենահարմար միջամտությունը,
- իրականացվեն վերապատրաստված, կոմպետենտ անձնակազմի կողմից,
- լինեն գենդերազգայուն և տարիքազգայուն,
- հիմնված լինեն անհատականացված ռեաբիլիտացման մոդելի վրա, որը խարսխված է դիմակայունության և (կամ) ուժեղ կողմերի վրա,
- ապահովեն ծառայություններից օգտագործողների ներգրավվածությունը՝ համոզվելու համար, որ ծրագրերը համապատասխանում են իրենց նպատակին, հասանելի են և հեշտությամբ օգտագործվում են ծառայությունից օգտվողների կողմից: Երեխաների հետ աշխատելիս անհրաժեշտ է առավել շատ ուշադրություն դարձնել այս ոլորտում գոյություն ունեցող լավագույն գործելակերպերին,
- լինեն տրավմաների մասին տեղեկացված և ձգտեն վերհանել ծառայությունից օգտվողների շրջանում անցյալի տրավմաները և արձագանքեն դրանց,
- իրազեկված լինեն ընտանեկան համակարգի և հասակակիցների ցանցի կարևորության մասին՝ միշտ դա հաշվի առնելով,
- հաշվի առնեն բռնարարքի, դրա ռացիոնալացման և վնասակար վարքագծի ամրապնդման գործում պոռնոգրաֆիայի դերը՝ միևնույն ժամանակ հավասարապես ուշադրություն դարձնելով առցանց և անցանց վնասակար սեռական վարքագծին:

157 Այդ մոդելը հաշվի է առնում անհատական, հարաբերությունների, համայնքային և հասարակական գործոնների բարդ փոխհարաբերությունը: Այն թույլ է տալիս վերոնշյալ տարբեր մակարդակներից յուրաքանչյուրում հասկանալ այն մի շարք գործոնները, որոնք մարդկանց դնում են բռնության ենթարկվելու ռիսկի առջև կամ պաշտպանում են նրանց բռնության ենթարկվելու կամ բռնություն գործադրելու ռիսկից:

Եզրակացություն

Ընտանեկան բռնություն և սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված կանխարգելիչ միջամտության և ռեաբիլիտացման ծրագրերը նպաստում են կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելմանը և դրա դեմ պայքարին: Սույն ուսումնասիրության մեջ ներկայացված համեմատական ամփոփ նկարագրում ներկայացվում են այդ ծրագրերի տեսակն ու բնույթը, խոստումնալից գործելակերպերը և հետագա օգտագործման համար ստուգացանկերի տեսքով գործնական առաջարկությունները: Այն լրացնում է Դուբլինի հռչակագրով վերհանված բացը և համարվում է կարևոր ներդրում՝ Ստամբուլի կոնվենցիայի կարևոր չափանիշների իրականացման հարցում առավել բարձր մակարդակների հասնելու համար:

Այդ նպատակով սույն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերը պետք է իրականացվեն այնպիսի շրջանակում, որն ընդգրկում է ծրագրերի լայն հասանելիություն, ուղղորդման բազմաթիվ մեխանիզմներ և արդյունավետ միջգերատեսչական աշխատանք՝ միևնույն ժամանակ ապահովելով համապատասխան ռեսուրսներ: Ծրագրերը պետք է իրականացվեն կոմպետենտ և մասնագիտացված անձնակազմի կողմից այնպիսի հաստատություններում, որոնք խթանում են բռնություն գործադրող անձանց կողմից պատասխանատվություն ստանձնելուն՝ միևնույն ժամանակ առավելագույնի հասցնելով ծրագրին մասնակցության հավանականությունը: Ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի գործունեության բոլոր ոլորտներում զոհերի անվտանգությունն ունի առաջնային դերակատարություն: Այդ ծրագրերը պետք է ապահովեն զուգընկերոջ հետ կապ ապահովող ծառայությունների հետ համագործակցությունը: Վերջինիս արդյունքում ծրագրի վերաբերյալ տեղեկությունները պետք է ժամանակին տրամադրվեն կանանց և աղջիկներին, ինչպես նաև հասցեագրվեն նրանց կարիքներն ու մտահոգությունները: Այդ առումով, ծրագրի ամբողջ ընթացքում պետք է իրականացվեն ռիսկերի կանոնավոր գնահատում և կառավարում: Ավելին, ծրագրերը պետք է հասցեագրեն բռնության արմատական պատճառները, լինեն գենդերազգայուն և աջակցեն բռնություն գործադրող անձանց իրենց բռնի գործողությունների համար պատասխանատվություն ստանձնելուն:

Սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերն ընդգրկում են բռնություն գործադրող անձանց լայն շրջանակ, այդ թվում՝ չափահաս անձանց, երիտասարդներին և երեխաներին, որոնք բռնություն են գործադրում տարբեր զոհերի նկատմամբ (չափահաս անձինք կամ երեխաներ ընտանեկան բռնության համատեքստում կամ դրանից դուրս): Այդ ծրագրերը պետք է հատուկ մշակված լինեն բնակչության այն կոնկրետ խմբերի համար, որոնց դրանք վերաբերում են և պետք է իրականացնեն ռիսկերի կանոնավոր գնահատում: Վերջապես, սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված բոլոր ծրագրերը պետք է բոլոր փուլերում առաջնահերթություն տան զոհերի անվտանգությանը, մարդու իրավունքներին ու բարեկեցությանը և խրախուսեն բռնություն գործադրող անձանց՝ հասկանալու ու պատասխանատվություն ստանձնելու իրենց գործողությունների հետևանքների համար:

Հղումներ

Ալդերսոն, Ս., Ուեսթմարլենդ, Ն. և Քելլի, Լ. (2013թ.): Ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերում ներգրավված տղամարդկանց երեխաների նկատմամբ պատասխանատվության և նրանց աջակցման անհրաժեշտություն: Երեխաների նկատմամբ բռնարարքների վերաբերյալ ամսագիր, 22(3), 182-193. https://onlinelibrary.wiley.com/doi/10.1002/car.2223

Ալսալեմ, Ռ. (2023թ.): Խնամակալություն, կանանց և երեխաների նկատմամբ բռնություն: Կանանց և աղջիկների նկատմամբ բռնության, դրա պատճառների և հետևանքների մասին հատուկ զեկուցողի զեկույց: Միավորված ազգերի կազմակերպություն: www.ohchr.org/en/documents/thematic-reports/ahrc5336-custody-violence-against-women-and-violence-against-children:

Արսե, Ռ., Արիաս, Ե., Նովո, Մ., և Ֆարինա, Ֆ. (2020թ.): Արդյունավե՞տ են միջամտությունները բռնարարների հետ: Մետավերլուծական ակնարկ. Հոգեսոցիալական միջամտություն, 29(3), 153-164: https://journals.copmadrid.org/pi/art/pi2020a11

Արիաս, Ե., Արսե, Ռ. և Վիլարինո, Մ. (2013թ.): Բռնարարներին ուղղված միջամտության ծրագրեր. Արդյունավետության մետավերլուծությունների ուսումնասիրություն: Հոգեսոցիալական միջամտություն, 22(2), 153-160. https://journals.copmadrid.org/pi/art/in2013a18

«Avon and Wiltshire Mental Health Partnership NHS Trust» կազմակերպություն: (2023թ.): «Be Safe Service» ծրագիր: AWP: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.awp.nhs.uk/camhs/camhs-services/HSB-services/be-safe

Գերմանիայի ընտանեկան հարցերի, տարեցների, կանանց և երիտասարդության նախարարություն (BMFSFJ). (2021): Զոհերի հետ աշխատանք՝ ընտանեկան բռնության դեպքերում. Գերմանիայի ընտանեկան բռնության զոհերի հետ աշխատելու գործակալության ստանդարտ: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.bmfsfj.de/bmfsfj/service/publikationen/arbeit-mit-taetern-in-faellen-haeuslicher-gewalt-80734

Բաթթերս, Ռ. Փ., Դրուբեյ, Բ. Ա., Սիրայթ, Ջ. Լ., Տոլլեֆսոն, Դ. Ռ., Լունդալ, Բ. և Ուայթեյկեր, Լ. (2021թ.): Սեռական զուգընկերոջ նկատմամբ բռնություն գործադրող անձի ռեաբիլիտացիա. միջամտությունների հարմարեցումն անհատական կարիքներին: Կլինիկական, սոցիալական աշխատանքի վերաբերյալ ամսագիր, 49, 391-404: https://link.springer.com/article/10.1007/s10615-020-00763-y

«Caring Dads» կազմակերպություն: (Չթվագրված): Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://caringdads.org/

«Circles South West» բարեգործական կազմակերպություն (2023թ.): Երիտասարդների հարցերով ծառայություն: CSW: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://circles-southwest.org.uk/services/young-peoples-services/

Եվրոպայի խորհուրդ: (2003թ.). Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Մ.Ս.-ն ընդդեմ Բուլղարիայի գործ, Գանգատ թիվ 39272/98: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.coe.int/t/dg2/equality/domesticviolencecampaign/resources/M.C.v.BULGARIA_en.asp

Եվրոպայի խորհուրդ: (2007թ.): Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի բացատրական զեկույց: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/16800d3832

Եվրոպայի խորհուրդ: (2008թ.): Կանանց նկատմամբ բռնության դեմ պայքար. աջակցություն ցուցաբերող ծառայություններին ներկայացվող նվազագույն չափանիշներ: https://www.coe.int/t/dg2/equality/domesticviolencecampaign/Source/EG-VAW-CONF(2007)Study%20rev.en.pdf

Եվրոպայի խորհուրդ: (2011ա): Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ու դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/168008482e:

Եվրոպայի խորհուրդ: (2011բ): Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ու դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի բացատրական զեկույց: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/1680a48903:

Եվրոպայի խորհուրդ: (2017թ.): Ավստրիայի վերաբերյալ ԳՐԵՎԻՈ-ի ելակետային գնահատման զեկույց: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/grevio-report-austria-1st-evaluation/1680759619

Եվրոպայի խորհուրդ: (2018թ.): Թուրքիայի վերաբերյալ ԳՐԵՎԻՈ-ի ելակետային գնահատման զեկույց: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/grevio-baseline-evaluation-report-turkey/16808e5283

Եվրոպայի խորհուրդ: (2019ա): Ֆինլանդիայի վերաբերյալ ԳՐԵՎԻՈ-ի ելակետային գնահատման զեկույց: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/grevio-inf-2019-16/168098c61a

Եվրոպայի խորհուրդ: (2019բ): Ֆրանսիայի վերաբերյալ ԳՐԵՎԻՈ-ի ելակետային գնահատման զեկույց: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/grevio-inf-2019-16/168098c61a:

Եվրոպայի խորհուրդ: (2019գ). Պորտուգալիայի վերաբերյալ ԳՐԵՎԻՈ-ի ելակետային գնահատման զեկույց: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/grevio-reprt-on-portugal/168091f16f:

Եվրոպայի խորհուրդ: (2020ա): Անդորրայի վերաբերյալ ԳՐԵՎԻՈ-ի ելակետային գնահատման զեկույց: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/grevio-report-andorra/1680a07ebd

Եվրոպայի խորհուրդ: (2020բ): Բելգիայի վերաբերյալ ԳՐԵՎԻՈ-ի ելակետային գնահատման զեկույց: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/grevio-report-on-belgium/16809f9a2c:

Եվրոպայի խորհուրդ: (2020գ): Իտալիայի վերաբերյալ ԳՐԵՎԻՈ-ի ելակետային գնահատման զեկույց: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/grevio-report-italy-first-baseline-evaluation/168099724e:

Եվրոպայի խորհուրդ: (2020դ): Մալթայի վերաբերյալ ԳՐԵՎԻՈ-ի ելակետային գնահատման զեկույց: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/grevio-inf-2020-17-malta-final-report-web/1680a06bd2:

Եվրոպայի խորհուրդ: (2020ե): Նիդեռլանդների վերաբերյալ ԳՐԵՎԻՈ-ի ելակետային գնահատման զեկույց: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/grevio-report-on-netherlands/1680997253:

Եվրոպայի խորհուրդ: (2020զ): Սերբիայի վերաբերյալ ԳՐԵՎԻՈ-ի ելակետային գնահատման զեկույց: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/grevio-report-on-serbia/16809987e3:

Եվրոպայի խորհուրդ: (2020զ). Իսպանիայի վերաբերյալ ԳՐԵՎԻՈ-ի ելակետային գնահատման զեկույց: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/grevio-s-report-on-spain/1680a08a9f:

Եվրոպայի խորհուրդ: (2021ա): «Կանանց նկատմամբ բռնության թվային ուղղվածության մասին» ԳՐԵՎԻՈ-ի թիվ 1 ընդհանուր առաջակություն: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/grevio-rec-no-on-digital-violence-against-women/1680a49147:

Եվրոպայի խորհուրդ: (2021բ): Սեռական բնույթի հանցանքի մեջ մեղադրվող կամ դրա համար դատապարտված անձանց գնահատման, բուժման և վերաինտեգրման մասին» Նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին ուղղված CM/Rec(2021)6 առաջարկություն: Հասանելի է

հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/0900001680a4397a:

Եվրոպայի խորհուրդ: (2022ա). Ընտանեկան, սեռական և գենդերային հիմքով բռնության կանխարգելման վերաբերյալ Եվրոպայի խորհրդի նախարարների հռչակագիր: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/dublin-declaration-sept-2022/1680a85149:

Եվրոպայի խորհուրդ: (2022բ). ԳՐԵՎԻՈ-ի ելակետային գնահատման զեկույցների միջնաժամկետ հորիզոնական ուսումնասիրություն: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/prems-010522-gbr-grevio-mid-term-horizontal-review-rev-february-2022/1680a58499:

Եվրոպայի խորհուրդ: (2022գ): «EDVAW հարթակի յոթ մեխանիզմների միջոցով հասցեագրված՝ կանանց նկատմամբ բռնության թվային ուղղվածությունը»: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/thematic-report-on-the-digital-dimension-of-violence-against-women-as-/1680a933ae:

Եվրոպայի խորհուրդ: (2023ա): ԳՐԵՎԻՈ-ի գործունեության վերաբերյալ 4-րդ ընդհանուր զեկույց: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/4th-general-report-on-grevio-s-activities/1680aca199:

Եվրոպայի խորհուրդ: (2023բ): Խորվաթիայի վերաբերյալ ԳՐԵՎԻՈ-ի ելակետային գնահատման զեկույց: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/baseline-evaluation-report-on-croatia/1680ac76c9

Կունյա, Օ., Կատարինա, Տ., Ալմեյդա, Աբրունհոսա, Ռ. և Կարիդադ, Ս. (2023թ): Մոտիվացիոն հարցազրույցի տեխնիկաների արդյունավետությունը սեռական զուգընկերոջ նկատմամբ բռնություն գործադրող անձանց հետ. ոչ պատահական կլինիկական փորձարկում: Ագրեսիայի, վատ վերաբերմունքի և տրավմաների տեսակների վերաբերյալ ամսագիր: 1-20. https://doi.org/10.1080/10926771.2023.2189043.

Դի Ջիոյա, Ռ. և Բեսլեյ, Լ. (2018թ.): Երեխաների նկատմամբ սեռական բռնարարքի դեմ պայքար. հանցանք կատարած անձանց ուղղված կանխարգելման քաղաքականություններ: Եվրոպական հանձնաժողով, Համատեղ հետազոտությունների կենտրոն: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://op.europa.eu/en/publication-detail/-/publication/8ecaa7e4-c77f-11e8-9424-01aa75ed71a1/language-en

Դի Ջիոյա, Ռ. և Բեսլեյ, Լ. (2023թ.): Երեխաների նկատմամբ սեռական բռնարարքի և սեռական շահագործման հարցում օգնություն հայցողներին աջակցելու և բռնություն գործադրող անձանց վարքագիծը կանխելու նախաձեռնություններ. Եվրոպական հանձնաժողով, Համատեղ հետազոտությունների կենտրոն: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://op.europa.eu/en/publication-detail/-/publication/79e8b555-ace7-11ed-8912-01aa75ed71a1/language-en

Դի Ջիոյա, Ռ., Բեսլեյ, Լ., Քասսար, Ա., և Պաուլա, Ա. (2022թ.): Երեխաների նկատմամբ սեռական բռնարարքի և շահագործման կանխարգելմանն ուղղված ծրագրերի դասակարգման չափորոշիչներ: Եվրոպական հանձնաժողով, Համատեղ հետազոտությունների կենտրոն: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://op.europa.eu/en/publication-detail/-/publication/8916aba4-83e0-11ec-8c40-01aa75ed71a1/language-en:

Դի Նապոլի, Ի., Պրոսենտեզ, Ֆ., Կարնեվալ, Ս., Էսպոսիտո, Ս., և Արչիդիանկոնո, Ս. (2019թ.): Սեռական զուգընկերոջ նկատմամբ բռնության (ՍԶԲ) դադարեցումը և վտանգի տակ գտնվող տղամարդկանց տեղորոշումը. էկոլոգիական մոտեցում. Բնապահպանական հետազոտությունների և հանրային առողջապահության միջազգային ամսագիր, 16(9), 1652. https://www.mdpi.com/1660-4601/16/9/1652

Դինես, Ս. (2022): «Respect» չափանիշ: Հավատարմագրման շրջանակ՝ Միացյալ Թագավորությունում ընտանեկան բռնարարք գործադրող անձանց հետ անվտանգ, արդյունավետ և բռնություն վերապրածների վրա կենտրոնացած աշխատանքի համար: Միացյալ Թագավորության կառավարություն: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://hubble-live-assets.s3.amazonaws.com/respect/file_asset/file/1458/Respect_Standard_4th_edition_2022.pdf:

«Drive Partnership» կազմակերպություն: (Չթվագրված): «The Drive» նախագիծ: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://drivepartnership.org.uk/about-us/the-drive-project/:

«ECPAT» կազմակերպություն: (2023թ.): (Երեխա) սեռական հանցանք կատարած անձանց գրանցամատյան. աշխատանքային փաստաթուղթ: «ECPAT Ինթերնեյշնլ»: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://ecpat.org/wp-content/uploads/2023/10/Final-ChildSexOffenderRegistration_2023.pdf

Էլիզաբեթ, Վ. (2017թ.) Խնամակալության հարցով հետամտում. բաժանումից հետո մայրերին հարկադրաբար վերահսկելու մեխանիզմ: «Ֆեմինիստական իրավական ուսումնասիրություններ» 25-րդ ամսագիր, 185-201: https://link.springer.com/article/10.1007/s10691-017-9349-9

Եվրոպական միություն (2011թ.): Երեխաների նկատմամբ սեռական բնույթի բռնության, սեռական շահագործման և մանկական պոռնոգրաֆիայի դեմ պայքարի վերաբերյալ և Խորհրդի 2004/68/JHA շրջանակային որոշումը փոխարինող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2011 թվականի դեկտեմբերի 13-ի 2011/93/ԵՄ հրահանգ: Եվրոպական միության պաշտոնական տեղեկագիր: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://eur-lex.europa.eu/eli/dir/2011/93/oj

Եվրոպական հանձնաժողով: (2022թ.): «2PS. Կանխարգելել և պաշտպանել աջակցության միջոցով» ծրագիր: Համայնքի գիտահետազոտության և փորձարարական նախագծման հարցերով տեղեկատվական ծառայություն: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://cordis.europa.eu/project/id/101073949:

Ֆիրմին, Ս. (2020թ.): Համատեքստային պաշտպանություն: Նորին Մեծության Պրոբացիայի հարցերով տեսչություն: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.justiceinspectorates.gov.uk/hmiprobation/wp-content/uploads/sites/5/2020/11/Academic-Insights-Contextual-Safeguarding-CF-Nov-20-for-design.pdf?utm_source=chatgpt.com

Ֆրենկեն, Ջ. (1999թ.): Սեռական բնույթի հանցանք կատարած անձանց բուժումը Եվրոպայում. միջմշակութային տարբերությունների վերաբերյալ տպավորություն: Սեռական բռնարարք, 11(1), 87-93. https://doi.org/10.1177/107906329901100107

Գելդշլիգեր, Հ., Գինես, Օ., Նաքս, Դ. և Փոնս, Ա. (2014թ.): Բռնություն գործադրող անձանց ուղղված եվրոպական ծրագրերում արդյունքների գնահատում: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.work-with-perpetrators.eu/fileadmin/wwp/What_we_do/Research/Project_IMPACT/Daphne_III_Impact_-_Working_paper_1_-_Outcome_Measurement_in_European_Perpetrator_Programmes_-_A_Survey.pdf

Գրավես, Կ. Ն., Սեխրիստ, Ս. Մ., Ուայթ, Ջ. Ուայ. և Փերլդայզ, Մ. Ջ. (2005թ.): Ուսանող կանանց կողմից գործադրվող սեռական զուգընկերոջ նկատմամբ բռնությունը նախկինում տարած տրավմաների համատեքստում: «Կանանց հոգեբանություն» եռամսյակային ամսագիր, 29(3), 278-289: https://doi.org/10.1111/j.1471-6402.2005.00222.x

Գուտովսկի, Ե. Ռ., Գուդմեն, Լ.Ա: Հարկադիր հսկողությունը դատարանի նիստերի դահլիճում. իրավական չարաշահումների սանդղակը (ԻՉՍ): Ջ Ֆեմ Վիոլ 38, 527-542: https://doi.org/10.1007/s10896-022-00408-3

Հաքեթթ, Ս. (2020թ.): Երեխաների կողմից դրսևորվող սեռական բռնությունը և վնասակար սեռական վարքագիծը. բնույթը, պատճառները, հետևանքները և արձագանքները: Եվրոպայի խորհուրդ: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/09000016809eb593:

Հաքեթթ, Ս. (2010թ.): Վնասակար սեռական վարքագիծ դրսևորող երեխաները և երիտասարդները: Բարտեր Ս.-ի և Բերրիջ, Դ.-ի (խմբագիրներ) աշխատություն «Երեխաներն իրենց վա՞տ են դրսևորում»: Երեխաների և երիտասարդների միջև հասակակիցների կողմից բռնություն. Ուայլի-Բլեքուել:

Հաքեթթ, Ս., Հոլմս, Դ. և Բրանիգան, Փ. (2016թ.): Վնասակար սեռական վարքագծի շրջանակ. Վնասակար սեռական վարքագիծ դրսևորող երեխաների և երիտասարդների համար փաստերով

հիմնավորված գործառական շրջանակ: ԵԴԿԱԸ: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://durham-repository.worktribe.com/output/1606288:

Հենդերսոն, Ա. Ֆ., և Արենա, Ջ. Ս. (2004թ.): Հայրությունը բռնության գործադրումից հետո. ուսումնական ուղեցույցներ և գործիքներ ծեծողներին ուղղված միջամտության ծրագրերի համար: Հայրություն: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.futureswithoutviolence.org/userfiles/file/Children_and_Families/FAV%20Guidelines%202011.pdf

Հեսթեր, Մ., (2013թ): Ո՞վ ում նկատմամբ ինչ է անում: Գենդերային և ընտանեկան բռնություն գործադրող անձինք Անգլիայի ոստիկանության փաստաթղթերում: Քրեագիտության վերաբերյալ եվրոպական ամսագիր, 10(5), 623-637: https://journals.sagepub.com/doi/10.1177/1477370813479078

Հեսթեր, Մ. և Լիլլի, Ս. Ջ. (2014թ.): Ընտանեկան և սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրեր. Ստամբուլի կոնվենցիայի 16-րդ հոդված: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://edoc.coe.int/en/violence-against-women/7144-domestic-and-sexual-violence-perpetrator-programs-article-16-of-the-istanbul-convention.html:

«Human RightsWatch» կազմակերպություն: (2013թ.): ԱՄՆ-ում երեխաներին սեռական հանցանք կատարած անձանց գրանցամատյաններում ընդգրկելու անուղղելի վնասը: HRW: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ www.hrw.org/report/2013/05/01/raised-registry/irreparable-harm-placing-children-sex-offender-registries-us:

Իտերապի: (Չթվագրված): «Project Bridge» ծրագիր: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ www.iterapi.se/sites/bridge/#:

Յովանովիչ, Ս. և Վալլ, Բ. (2022թ.): Բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրեր Արևմտյան Բալկաններում, գոյություն ունեցող գործելակերպերի և հետագա գործողությունների քարտեզագրում: Ընտանեկան բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի հարցերով եվրոպական ցանց (WWP EN): Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.work-with-perpetrators.eu/fileadmin/wwp/What_we_do/Research/STOPP_-_Perpetrator_programmes_in_the_Western_Balkans/WWPEN_STOPP_RegionalReport_220531_WEB.pdf

Յովանովիչ, Ս., Պենտրանջելո Մ. և Վալլ, Բ. (2022թ.): Ընտանեկան բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի և վաղ միջամտության վերաբերյալ տարածաշրջանային ուղեցույց. Արևելյան գործընկերության տարածաշրջան. ՄԱԿ Կանայք, ՄԱԿ ԲՀ: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://eca.unwomen.org/sites/default/files/2023-01/UN%20Woman%20-%20EU%204%20Gender%20Equality%5B3%5D.pdf

Քելլի, Լ. և Ուեստմարլենդ, Ն. (2015թ.): Ընտանեկան բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրեր. քայլեր դեպի փոփոխություն: «Mirabal» նախագծի վերջնական հաշվետվություն: Լոնդոնի Մետրոպոլիտեն համալսարան և Դարհեմի համալսարան: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://hubble-live-assets.s3.amazonaws.com/respect/file_asset/file/28/ProjectMirabalfinalreport.pdf

Քելլի, Լ. և Ուեստմարլենդ, Ն. (2023թ.): Ընտանեկան բռնարարքներ գործադրող անձանց ուղղված միջամտությունների չափանիշներ: Դարհեմի համալսարան, Լոնդոնի Մետրոպոլիտեն համալսարան: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.gov.uk/government/publications/standards-for-domestic-abuse-perpetrator-interventions

Քինգ-Հիլլ, Ս., Գիլսենան, Ա. (2023թ.): Եղբայրների կամ քույրերի սեռական վարքագծի քարտեզագրման գործիք: Բիրմինգհեմի համալսարան: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.birmingham.ac.uk/schools/social-policy/departments/health-services-management-centre/research/projects/2022/sibling-sexual-behaviour-mapping

Քինգ-Հիլլ, Ս., Գիլսենան, Ա. և Մըքքարթան, Կ. (2023թ.): Մասնագիտական արձագանքներ եղբայրների կամ քույրերի սեռական բռնության նկատմամբ: Սեռական ագրեսիայի վերաբերյալ ամսագիր, 29(3), 1-15: https://doi.org/10.1080/13552600.2023.2241482

Քինգ-Հիլլ, Ս., Մըքքարթան, Կ. Ֆ. և Գիլսմանն, Ա. (2023թ.): Հասկանալով եղբայրների կամ քույրերի նկատմամբ սեռական բռնությունը և արձագանքելով դրան: Փալգրեյվ Մըքմիլլան: Լոնդոնի թագավորական քոլեջ: (Չթվագրված): Հետազոտություն և նորարարություն. «Advance»: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ www.kcl.ac.uk/research/advance:

Մըքքարթան, Կ. և Քեմշոլլ, Հ. (2023թ.): Չորրորդային կանխարգելման ներդնում. սեռական բռնարարքի կանխարգելման հարցում հանրային առողջապահական գործելակերպերի ամբողջական շրջանակի իմացություն: Հանցանք կատարած անձանց թերապիայի և համեմատական քրեագիտության հարցերով միջազգային ամսագիր, 67(2-3), 224-246: https://doi.org/10.1177/0306624X211049204

Մըքքարթան, Կ., Ուզիեբլո, Կ., և Սմիդ, Ուայ. Ջ. (2021թ.): Սեռական բռնարարքի կանխարգելման վերաբերյալ մասնագետների ընկալումները և վերաբերմունքը. Միջազգային հետազոտական ուսումնասիրություն: Հանցանք կատարած անձանց թերապիայի և համեմատական քրեագիտության հարցերով միջազգային ամսագիր, 65(8), 815-831: https://doi.org/10.1177/0306624x20919706

Մըքքարթան, Կ., Վան դեր Բրուգգե, Ուը., Սպերո, Ջ., Ինգե Սվենդսեն, Ջ., Քաթլենդ, Մ., Մորիք, Ուայ., Նեգրեդո, Լ., Զավացկիս, Ա., Զամմիթ, Մ. Ա. և Թիիթ Կաջալա, Թ. (2022թ.): Գնահատման, բուժման և կառավարման ընթացիկ գործելակերպերի ուսումնասիրություն ԵՊԿ-ի ոլորտներում: Եվրոպական պրոբացիայի կոնֆեդերացիա:

Մըքգինն, Թ., Թեյլոր, ԲԲ., Թեյլոր, Մ., և Մըքքոլգան, Մ. (2021թ.): Բռնություն գործադրող անձանց՝ վարքագծի փոփոխմանն ուղղված ծրագրերի վերաբերյալ ընտանեկան բռնություն վերապրած անձանց տեսակետների որակական ուսումնասիրությունը: Միջանձնային հարաբերություններում գործադրվող բռնության վերաբերյալ ամսագիր, 36(17-18), 9364-9390: https://doi.org/10.1177/0886260519855663

Մըքկիի, Ս. Ա. և Հիլտոն, Ն. Զ. (2019թ.): Թմրանյութերի օգտագործումը՝ հետտրավմատիկ սթրեսային խանգարման և սեռական զուգընկերոջ նկատմամբ բռնությունից տրավմաների զուգակցմամբ. հետևանքները՝ բռնություն գործադրող կանանց ուղղված ծառայությունների համար: Տրավմա, բռնություն և բռնարարք, 20(3), 303-314: https://doi.org/10.1177/1524838017708782

Միելենտերվեյստալո: (Չթվագրված): «ReDirection». ինքնաաջակցման ծրագիր՝ երեխայի նկատմամբ սեռական բռնարարքի նյութերի օգտագործումը դադարեցնելու համար: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ www.mielentervey-stalo.fi/en/self-help/redirection-self-help-program-stop-using-csam:

Մոլդովայի կառավարություն: (2014թ.): Ընտանեկան ագրեսորների աջակցման և խորհրդատվության կենտրոնի շրջանակներում մատուցվող ծառայությունների նվազագույն որակի չափանիշների վերաբերյալ: Հավելված 2: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ www.legis.md/cautare/getResults?doc_id=64111&lang=ro

Մըրֆի, Չ.Մ., Էկհարդ, Չ..Ի., Քլիֆֆորդ, Ջ.Մ., ԼաՄոտտ, Ա.Դ., Մեյս, Լ.Ա. (2020թ.): Խմբային հանդիպում, Զուգընկերոջ նկատմամբ բռնություն գործադրող տղամարդկանց համար անհատական և խմբային կոգնիտիվ-վարքային թերապիա. նախնական պատահական փորձարկում: Միջանձնային բռնության վերաբերյալ ամսագիր, 2846-2868: https://doi.org/10.1177/0886260517705666

Առողջապահության և խնամքի գերազանցության ազգային ինստիտուտ: (2016թ.): Երեխաների և երիտասարդների շրջանում վնասակար սեռական վարքագիծը: ԱԽԳԱԻ: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ www.nice.org.uk/guidance/NG55:

Երեխաների նկատմամբ դաժանության կանխարգելման ազգային ընկերություն: (2018թ.): «Turn the Page», ձեռնարկին համապատասխան մշակված բուժման ծրագիր. վերջնական գնահատման զեկույց: ԵԴԿԱԸ: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://learning.nspcc.org.uk/research-resources/2017/turn-the-page-final-evaluation:

Երեխաների նկատմամբ դաժանության կանխարգելման ազգային ընկերություն: (2021թ.): Վնասակար սեռական վարքագիծ. վիճակագրական ակնարկ: ԵԴԿԱԸ: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://learning.nspcc.org.uk/research-resources/statistics-briefings/harmful-sexual-behaviour-hsb:

Երեխաների նկատմամբ դաժանության կանխարգելման ազգային ընկերություն: (2023թ.): Վնասակար սեռական վարքագիծ: ԵԴԿԱԸ: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://learning.nspcc.org.uk/child-abuse-and-neglect/harmful-sexual-behaviour

Օգյուզտյուզյուն, Չ., Կոյուտուրկ, Մ. և Կարակուրտ, Գ. (2023թ.): Ֆիզիկական, հոգեբանական և ինտիմ զուգընկերոջ նկատմամբ գործադրվող սեռական բռնության բուժման արդյունավետության վերաբերյալ մետավերլուծությունների տվյալների համակարգված ուսումնասիրություն: Հոգեսոցիալական միջամտություն 32(2), 59-68: https://doi.org/10.5093/pi2023a6

Կանանց նկատմամբ առցանց բռնություն: (2021թ.): Կանանց նկատմամբ առցանց բռնության տարածվածության գնահատում: «The Economist» ամսագիր: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://onlineviolencewomen.eiu.com/

Փինթո ե Սիլվա, Տ., Կունհա, Օ. և Կարդիդադ, Ս. (2023թ.): Մոտիվացիոն հարցազրույցի տեխնիկաները և ինտիմ զուգընկերոջ կողմից բռնություն գործադրող անձանց ուղղված միջամտության ծրագրերի արդյունավետությունը. համակարգված գնահատումը: Տրավմա, բռնություն և բռնարարք, 24(4), 2691-2710: https://doi.org/10.1177/15248380221111472

Փրուլքս, Ջ., Քորթոնի, Ֆ., Քրեգ, Լ.Ա. և Լետուրնո, Ե..Ջ. (2020թ.): «Ուայլի ձեռնարկ սեռական բնույթի հանցանք կատարած անձանց հետ աշխատանքի մեթոդների վերաբերյալ. տեսության, գնահատման, բուժման և կանխարգելման ժամանակակից հեռանկարներ»: Ուայլի:

Relive Relazioni Libere dalle Violenze. (n.d.). Linee guida nazionali dei programmi di trattamento per uomini autori di violenza contro le donne nelle relazioni affettive. Relive. Հասանելի է հետևյալ հղմամբ՝ www.associazionerelive.it/joomla/ images/LineeGuidaRelivea.pdf:

Ռոմերո-Մարտինեզ, Ա., Լիլա, Մ., Գրասիա, Ե. և Մոյա-Ալբիոլ, Լ. (2019թ.): Ծեծողներին ուղղված միջամտության ծրագրերում մոտիվացիոն ռազմավարություններով ապրումակցման բարելավում. պատահական վերահսկվող փորձարկման արդյունքներ: Կլինիկական հոգեբանության բրիտանական ամսագիր, 58(2), 125-139: https://doi.org/10.1111/bjc.12204:

Ստեֆենս, Ս., Էլչուկ, Դ., Դավիդսոն, Մ. և Ուլլիամս, Ս. (2022թ.): Մանկական սեռական բռնարարք կատարելը կանխարգելելուն ուղղված ծրագրերի գնահատում: Ընթացիկ հոգեբուժական հետազոտությունների վերաբերյալ զեկույցներ, 24(11), 679-685. https://doi.org/10.1007/s11920-022-01375-8:

«Thriving Survivors» ծրագիր: (2022թ.): Սեռական վնասի հարցերով վերականգնողական արդարադատության ազգային ծառայություն. Տեղեկություններ. «Thriving Survivors» Լիմիթեդ: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ www.thrivingsurvivors.co.uk/_files/ugd/b7bff6_1c43ea7a343d4acf89f73828fdf1354c.pdf:

Տրավերս, Ա., ՄըքԴոնաղ, Թ., Քուննինգհեմ, Տ., Արմուր, Ս. և Հանսեն, Մ. (2021թ.): Սեռական զուգընկերոջ նկատմամբ բռնություն գործադրողների շրջանում ռեցիդիվիզմը կանխելու նպատակով իրականացվող միջամտությունների արդյունավետություն. համակարգված ուսումնասիրություն և մետավերլուծություն: Կլինիկական հոգեբանության տեսություն, 84, 101974: https://doi.org/10.1016/j.cpr.2021.101974:

«Troubled-desire»: (Չթվագրված): «Troubled-desire» ծրագիր: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://troubled-desire.com/en/:

Ուզիեբլո, Ք., Սմիդ, Ուայ. և ՄըքՔարթան, Կ. (2022թ.): Խաչմերուկում. Սեռական բնույթի հանցանք կատարած անձանց ռեաբիլիտացման և կառավարման ապագա ուղղությունները: Փալգրեյվ Մաք Միլան:

Վալլ, Բ., Գրանե-Մորսիլլո, Ջ., Փաունց, Ա. և Հեսթեր, Մ. (2023թ.): Բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի արդյունքների գնահատում՝ համատեքստի վրա հիմնված և զոհակենտրոն մոտեցման միջոցով: «Impact» նախագիծ: Հասարակական գիտություններ, 12(11), 613: https:// doi.org/10.3390/socsci12110613:

Վալլ, Բ., Լոպեզ-Մարտին, Էքս., Գրանե-Մորսիլլո, Ջ., և Հեսթեր, Մ. (2023թ.): Բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի արդյունքների ուսումնասիրությունների որակի համակարգված վերլուծություն. դեպի արդյունքի գնահատման նոր մոդել: Տրավմա, բռնություն և բռնարարք, 1-15. https://doi.org/10.1177/15248380231203718

WWP EN [Ընտանեկան բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի հարցերով եվրոպական ցանց]: (2018թ.): Ընտանեկան բռնություն գործադրող անձանց հետ աշխատող ծրագրերի համար չափանիշների մշակման ուղեցույց: WWP EN: Հասանելի է հետևյալ հղմամբ՝_www.work-with-perpetrators.eu/fileadmin/WWP_Network/redakteure/Resources/Guidelines/WWP_EN_Guidelines_for_ Standards_v3_2018.pdf:

WWP EN [Ընտանեկան բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի հարցերով եվրոպական ցանց]: (Չթվագրված): Ո՞վ պետք է տրամադրի զոհերին ցուցաբերվող աջակցության ծառայություններ. Բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի և կանանց աջակցման ծառայությունների միջև համագործակցության փաստաթղթերի և աշխատանքային փաստաթղթերի ուսումնասիրություն: WWP EN: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ www.work-with-perpetrators.eu/fileadmin/WWP_Network/redakteure/Resources/Expert_Papers/FINAL_WWP_EN_Paper_on_Collaboration_Between_DVPP_and_WSS.pdf:

WWP EN [Ընտանեկան բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի հարցերով եվրոպական ցանց]: (2023թ.): Բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի եվրոպական չափանիշներ. բռնություն վերապրած անձանց և ինտիմ զուգընկերոջ կողմից բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի չափանիշներ: Աշխատանքային փաստաթուղթ: WWP EN: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ www.work-with-perpetrators.eu/fileadmin/WWP_Network/redak- teure/Resources/Standards/European_Standards_for_Perpetrator_Programmes_website.pdf.

Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում ընտանեկան և սեռական բռնություն գործադրող անձանց ուղղված՝ գործող ծրագրերի քարտեզագրման հիման վրա սույն ուսումնասիրությունն էական ուղեցույց և առաջարկություններ է տրամադրում այդ ծրագրերի մշակման և իրականացման համար: Սույն ուղեցույցը հիմնված է Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ու դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի (նաև հայտնի է որպես Ստամբուլի կոնվենցիա) դրույթներից բխող որակի չափանիշների վրա:

Ստամբուլի կոնվենցիան առաջին համաձայնագիրն է, որով ընդունվում է կանխարգելիչ միջամտության և ռեաբիլիտացման ծրագրերի՝ սեռական և ընտանեկան բռնության կանխարգելման գործում ունեցած հիմնարար ներդնումը: 16-րդ հոդվածի համաձայն՝ Կոնվենցիայի կողմերը պարտավորվում են ստեղծել նման ծրագրեր, եթե այդպիսիք չկան, կամ օժանդակել ընտանեկան բռնություն, սեռական հարձակում և բռնաբարություն կատարող անձանց ուղղված ցանկացած գործող ծրագրին՝ առաջնահերթ ուշադրություն դարձնելով զոհերի անվտանգությանը: Այն կարևոր չափանիշներ է սահմանում այդ աշխատանքի, այդ թվում՝ զոհերին աջակցություն ցուցաբերող մասնագիտացված ծառայությունների հետ համագործակցության, հմուտ և վերապատրաստված համակարգողների կողմից միջամտության և բռնություն գործադրող անձանց պատասխանատվության ու վերաբերմունքի շեշտադրման համար:

PREMS 080924

HYE

Եվրոպայի խորհուրդը առաջատար իրավապաշտպան կազմակերպությունն է մայրցամաքում: Կազմակերպությանն անդամակցում է 46 պետություն, այդ թվում՝ Եվրոպական միության անդամ բոլոր պետությունները: Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային, որը մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությանը միտված միջազգային պայմանագիր է: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրագործումն անդամ պետություններում: գերակայության պաշտպանությանը միտված միջազգային պայմանագիր է:

www.coe.int

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE